

4040

Մ Է Ս Ի Ա

ԼՐՈՒՄՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի ԳԱՆՆԵՐՈՐԴ ԳՐԱԴ

ՆԱԿԱՆԱԿԱՐԱՆ



ԳՐԱԿԱՆԱԿԱՐԱՆ

Թարգմանածին՝ Ի Մայրազոյն Արեւելեան լիզուէ
 և յօրինան լեզուականութիւն
 ՅԱԿՈՎԲԱՅ ՍՐՄԵՐԵԱՆԻ

Կ. ՊՈԼԻՒ

ԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՍՏԱՆԲՈՒԼ

1910

22

Մ-99

22
ԼՐ-99

23 SEP 2009

Մ Է Մ Ի Ա

ԼՐՈՒՄՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի ԿՍԱՆՆԵՐԱՐԻ ԴԱՐ



ՆԱԽԱԿԱՐԱՐՈՊԵՏ ԵՐԿՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԽՐՈՑ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ
ՇՆՈՐՀՕՔ

ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԷՐ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ

ՀԱՍՏԱՏԵԱԼ ԸՆԴ ԱՄԵՆԱՑՆ ՏԻԵԶԵՐ

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ

ՍՐԲՈՑ ԱԻՆՏԱՐԱՆԱԿԱՆ ՍԿԶՐԱՆՑ

Արդարութեան, Ազատութեան, Հաւասարութեան, Եղբայրսիրութեան,
Համբերութեան, Ներողութեան, Գրութեան, Սիրոյ,
Խաղաղութեան եւ բնդհանուր ազգաց համեմատ
ներդաւանակութեան:

Թարգմանութիւն՝ ի Երայրագոյն Արեւելեան լեզուէ
և յօրինման սեպհականութիւն

ՅԱԿՈՎԲԱՅ ՄՐՄԸՐԵԱՆԻ

Թարգմանութիւն բնդ այլ լեզու արգիլեալ:



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԴԱՆԵԱՆ

1910

4040

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ռ. ՍԱԳԱԵԱՆ

എ.യു.എ.പി.പി.

ԳՈՒՐԾՈՒՆԵՐԻՆ ԽԱՆԻ, 7

4 . ጣበኒኮህ



368 34-66

U T U T U

ԼՐՈՒՄՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի ՔԱՆԵՐՈՐԴ ԴԱՐ



Մեկնութիւն խորհրդանիւ սրբոյ գառնուկին՝ զոհա-
բերեալ փոխան պատարագի խոյի՝ վան Խահակալ
որդոյն Աբրահամու, ի թիկունս կրելով զԾայրագոյն
Արեւելեան դրօսակ ձաքսական ծագման Արեգական
՚ի նեան պուստայանուէր կրօնից, եւ գասդընդգիրկ
խաղաղաւէտ լուսնի դրօսակ Օսմանեան. Մահմեականի
միասուածապաճ կրօնից, միանգամայն զուսերակիր
արփիանանանչ առիւծապանծ դրօսակ Մեծի Պարսից
հնամեայ կայսրութեան՝ ընկալեալ այժմ նմանապէս զժո-
ղովրդանուէր օրէնս սահմանադրականս, եւ զԲրիտանի-
ան միացեալ խաչանիւ դրօսակ, միանգամայն եւ զբազ-
մաստեղապանծ՝ դրօսակ Ամերիկեան, միասնաբար
սփռելով ընդ ամենայն տիեզերս, օրհնութիւնս խաղա-
ղութեան եւ համերաժի ներդաճակութեան համայն
ազգաց:

1-1 888

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳՈՐԾՈՑ ՄՕՍԱԻ (Մոսկւսի)

ՍԻ
ՓՐԿԱՐԱՐ ՀԱՄԱԿԻՐ ՎԱՐՈՒՑ ՆՈՐԱ
ԸՆԴԻԻՍՐԱԷԼԱՑԻՍ

ՍԻ
Ի Ս Ա Ի (Յիսուսի)

ԴԳՐԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՄԲ
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՉԱՓԱՀԱՍ ՎԱՐՈՒՑ

ՍԻ
ՆՈՐԻՆ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ

ՎԱՂ ԿԵՆՏԱՂԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՄԲ
'Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒ 'Ի ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ՀՆԴԻԿՍ,
'Ի ՄԻՋԻՆ ԱՍԻԱ, 'Ի ՊԱՐՍՍ ԵՒ ՅԱՅԼ ՇՐՋԱԿԱՅՍ.

ՍԻ
ՀՈՒՍԿ ՅԵՏՈՑ ՎԵՐԱԴԱՌՁԻ ՆՈՐԱ
ՅԵՐԿԻՐՆ ԻՍՐԱԷԼԱՑԻՈՑ,

ՍԻ
ԱՂԵՏԱԼԻ ՎԱՆՃԱՆԻ ՆՈՐԱ ԱՆԴԱՆՈՐ.



ՀԱՄԱՌՈՑ ԻՆՔԵԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Միակ արու որդեակ, ընդ չորեքին ծնողազոյգ քերբ-
քն, 'ի հողելոյս վաղամեռիկ մօրէն Սրբուհւոյ (որոյ գե-
րեզման դժբաղդաբար ցարդ մնայ անշիրիմ մոռացական,
զոր սակայն ուխտեալ է թարգմանչին՝ իւրոյ նիւթականին
առաջին առթիւ ներողութեան անյապաղ կառուցանել, իսկ
յիշատկ ներա քաղցր՝ օրհնեալ եղիցի և սուրբ, հանգոյն
անուն ներա, յիշատակաւ նուիրական երկիւս), և 'ի
Տ. Գէորգայ Մըրբեանէ. բարեհամբաւ ոսկերչապետէն,
և պատուակալ՝ արքունի հաւատարիմ զնահատչէն պա-
լատական դո՛նարեղինացն՝ մեծապէս օգտամատոյց հան-



դիտանալով ձրիաբար՝ արքայական անձնական գանձուն
 յառուրս երջանկայիշատակ և ընդ ընդհանուրս համակրա-
 պանձ՝ բարեխնամ արքայութեան Սուլթան Ապտ-իւլ-Մէ-
 ճիտ կայսեր. անդամ պատուակալ գերագոյն ժողովոյ,
 և ժողովոյ դատաստանականի 'ի Պատրիարքարանի Հա-
 յոց, և երկրորդ ամուսնութեամբն՝ քենեկալ Տօլմապահ-
 ճէի հոյակապ պալատան ճարտարապետին 'նիկողոս պէյ
 Պալեանի՝ ընդ խնամութեամբ երամեանց ազնուատոհմաց
 և Տատեանց, եւ սանակալ երջանկայիշատակ Պէզճեան
 Գազալ Ամիրային, վախճանելով թէեւ այսպէս՝ պատ-
 ուոյ, և պարկեշտաբարոյութեան և ճարտարաբանու-
 թեան ճոխութեամբ և մեծաւ ճարտարագիտութեամբն
 արուեստին, այլ 'նիւթականին՝ 'ի վերայ այսր ամենայնի՝
 աւաղ՝ անկեալ 'ի ծայրագոյն չքաւորութիւն, զայսոսիկ
 բարս բարեմասնականս առաքինութեան միայն թողելով
 որդւոյն ժառանգ, և այլ ոչինչ՝ 'ի բաց առեալ արքուն-
 եաց պահանջէն եօթն հազար ոսկւոյ որ վերահաս մահ-
 ուամբն արքային վերոյիշելոյ՝ ամբողջական անգանձելիու-
 թեան վիճակելով՝ անդամալոյծ և լիովին քսակալոյծ ա-
 րարեալ էր զնա բազում ամս երկարս յանկողին ծառայե-
 լով, իսկ այս պահանջ ցայս վայր անգանձ կայ մնացեալ և
 ցայսօր 'ի յաջորդացն արքային վերոյիշելոյ անխղճօրէն ան-
 գիտացեալ. Շիրիմ նորա սակայն վայելչապէս կառուցեալ
 կայ 'ի գերեզմանատան Հայոց Իւսկիւտարի՝ ծախուցն
 բաւարարութեամբ 'ի թարգմանչէն, (թէեւ նա յայնմ
 պահու 'ի տառապանս գտանէր 'նիւթականին անբաւու-
 թեամբ). եւ թէեւ նա՛ի պատանեկութեանն մնացեալ էր
 այսպէս անօգ անժառանգ, իսկ անխոնջ աշխատասիրու-
 թեամբն և ինքնօգնութեամբն յետ ստանալոյ զուսմունս
 իւր՝ յայնժամ իսկ բաւարար 'ի վարժարանն Գուզկունձուքի

յայնմ պահու յաջորդագոյնն միջավայրին՝ ընդ հոգաբարձու-
 թեամբ և վերատեսչութեամբ Սէթեան խորահմուտ Յով-
 հանէս վարդապետին՝ Գուզկունձուքի եկեղեցւոյ քարոզ-
 չին (ապա կոչեցեալ 'ի կարգ եպիսկոպոսութեան), և ազ-
 նուատոհմացն մեծաց բարեկրթելոց Յակովբայ Տիվիթեանի
 և Յովհաննու Ազայիկեանի քաջաց ուսումնասիրաց, և մա-
 նաւանդ որ առաւելագոյնն է՝ երջանկայիշատակ բազմե-
 րախտ Քրիստոսատուրի Ղազարոսեան՝ համայն գաւառաց-
 ւոց ազգայնոց անխոնջ լուսաւորչին, որում պարտի հա-
 մայնութիւնս Հայոց՝ յաւերժայիշատակ երախտագիտու-
 թեան չիրիմ կանգնել, իսկ եթէ տակաւին զայս չէ արար-
 եալ՝ ապա ուրեմն 'ի դէպ է մատենիս ծառայել իբրեւ յիշա-
 տակ մշտնջենական թէ վասն նորա և թէ վասն վերոյիշե-
 ցելոցն երախտաւորաց իւրաքանչիւրին, որոց բարեջան
 խնամածութեամբն վարժարանին վերայիշելոյ թարգմա-
 նիչն 'ի մէջ այլոց ստացաւ բաւարար վարժութիւն Օսմա-
 ներէնի և Գազլիբերէնի՝ անդ 'ի կատար ամելով զգաստիա-
 րակութիւն իւր նախնական, և ապա նա՛ ընդ մէջ չուկայա-
 կան զբաղմանցն հետամուտ եղեւ նաև Անդղիբերէնին, որ
 յայնմ պահու 'ի թուին 1853-1859, էր յոյժ հազուադէպ,
 նամանաւանդ 'ի Հայս, որով՝ յետ միամեայ սկզբնական ա-
 շակերտութեան վայելման ընդ պաշտպանութեամբ մեծի
 վաճառատանն 'ի Վալիտէ խան երջանկայիշատակ բարե-
 մոյն նահապետին Հայ վաճառականութեան՝ Ազնուատոհ-
 մին Յարութիւն Գաբամաճեանի՝ երջանկայիշատակ Հօր
 Ազնուապանձ Իսկունի Տիկնոջ Բաբագեանի՝ մասնաւոր
 եռանդեամբ կրկնապէս հրաւիրեցաւ նա՝ բարեյիշատակ
 քեռանեղբորմէն յաշխատակցութիւն ընդ իւր, 'ի Քիւ-
 չիւկ Եէնի խան, և յետ սակաւուց առաքեցաւ նա յԱնդ-
 զիա՝ անդ միայնակ առաջնաւարութեան Ծընտրելեան

Տեարց նորոգ հաստատելի վաճառականական Տան 'ի Մանչեսթէր, և անխոնջ աշխատասիրութեամբն և ընդոճին խոհականութեամբն 'ի թուէն 1859 մինչ ցթիւն 1879 յաջողեցաւ նոտ ամենայնիւ հանդիսանալ վարիչ տնօրէն և լիուլի ընկեր, և հիմնադրել վերջնապէս զհանրածանօթ հնամենի մեծ տունն վաճառականական 'ի Մանչեսթէր՝ ընդ տիտղոսիւ «Ֆետղլեան եղբարց և Մամրբան»-ի. կատարելով զստուարագոյնն 'ի Հայ վաճառականաց անդ հաստատելոց գործառնութիւնս մինչև իւրաքանչիւր ամեայ £ 250,000-ի գործառնութեամբք, գոլով միանգամայն մեծաքանակ հայթայթիչ պիտոյից բանակին օսմանեան և ընդհանուր պետական պաշտօնատանց որոյ 'ի տեւողութեան արժանանալով նաև ընկերութեանն՝ հինգ հարիւրի ոսկեով՝ հաւատարմական գոհունակ մասնակցութեան՝ յայնժամ պաշտօնապէս տրտօնեալ հանդանակութեան՝ 'ի նպաստ արքունական բանակին, Բլէյլալի ճակատամարտի պահուն, և որոյ ընկերութեանն տիտղոս ոսկեզօծ տառիւք քանդակեալ և գրոշմեալ երեւի 'ի վերայ մարմարին յիշատակարանին ներքին ճակատին մտից եկեղեցւոյ Հայոց սրբոյ Երրորդութեան 'ի Մանչեսթէր 'ի շարս նախնի հայազգի բարեհաստատ վաճառականական Տանց մասնակցողաց ծախսոց կառուցման նորին, ևնա այդպէս անխոնջ հաւատարիմ աշխատանքն զամս քսան և մաքուր քրտամբն ճակատին գոյացոյց իւրեան մինչ 10,000 ոսկեոյ դրամագլուխ՝ երկրագոյն ընկերացն հաւաքական գանձ հարստութեան միանգամայն ճոխացեալ մինչ ոսկեոյ 100,000-ի գումարի, որով ի մէջ ալոց վիճակեցաւ նոցա կառուցանել զնոյակապ օթեւանն 'ի ծաղկավաճառանոցն Պոլսոյ, զապարանն 'ի Քաղկեդոն և 'ի Միջագիւղ և գնել զօթեւանն 'ի Վոյվոտայ և զապարանն ի վերին Վոս-

փոր, մինչ նախնի դրամագլուխ Տան այնորիկ էր հազիւ երեք առ չորս առ հարիւր վերոյիշելոյ գումարին համեստիւ յայնժամ զբաղմամբ տեղական տպածոյի թաշկինակավաճառութեան («թիւլպէնա») յորջորջելոյ, և նորամուտ մասնակի մանրավաճառութեամբ մանիֆաքթիւրի. Յամին 1879 սակայն թարգմանչին վիճակեցաւ բաժանումն յընկերութենէն՝ կրելով զեղջ ստուար կիսովին չափ, և յետ այսորիկ հրաւիրեցաւ նա 'ի պատիւ արժանաւորութեան միայնակ վարիչ տնօրէնութեան մեծահաստատ Հայազգի համբաւաւոր վաճառականական և սեղանաւորական Տանն հոգեւոյս Ազնուատոհմին Գարակէօղեան Տիար Տիգրանի 'ի Մանչեսթէր, իսկ յետ հրաժարման նորա 'ի հրապարակէն յայնմանէ և զիւր տուն արձակելոյ անդ և զայն փակելոյ, յաջորդական գործառնութիւնք թարգմանչին աւա՛ղ դիպելով անխուսափելի ձախողանալոյ դժբախտութեան, և արդէն ընկճեալ ընտանեկան ծայրագոյն ապերձանիկ վշտահարութեամբ, որոց միասնաբար անհար եղև նմա դիմազբաւել, հարկադրեցաւ նա հրաժարիլ բոլորովին յաշխարհայնէ զբաղմանէ՝ անկեալ անկար 'ի թուին 1895՝ յամին յաջորդի մեծի երկրաշարժին և այնմ յաջորդեալ մեծի ջարդին 'ի Հայս 'ի Պոլիս և յետ այնորիկ պարապչել նա՝ զանձն իւր տուեալ լիովին 'ի հաճոյս առանձնակի գրասիրական զբաղմանց և առանձինն խաղաղ երկրագործիկ մշակութեան իբրեւ հաճոյսժամանց միսթարական, և արդ 'ի ներկայիս կեայ նա 'ի տարեկցութեան իւրում իբրեւ ճգնաւոր ոմն առանձնական 'ի բարձունս Իւսկիւտարի զգբաղմունս աշխարհայինս լիովին բարձի թողի արարեալ, միայն մերթ զբողելով դասաւանդութեամբ լեզուագիտութեան՝ յորժամ նմա առ այդ ներկայանայ առիթ պատեհ. իսկ նա հանապաղ գոհանալ զԱմենակարողէն որ

չնորհէ նմա բաւարար վիճակ առողջութեան 'ի միտս և 'ի մարմին առանձինն տնակոն աշխատանաց՝ ընտանեզուրկ և որդեգուրկ, հրաժարելով 'ի կալուածոց իւրոց նախանձեղեաց և նախընտրելով զմուրացիկ չքաւորութեան ունեւոր չունեւորի միայն թէ փրկելով զանձինն զպատիւ ճակատին քան զհամակերպութիւն խայտառակ բարեկեցութեան զոր վերջինն այգմիկ բազում են նախընտրողք, որով և թէեւ պարտասեալ և բեռնաւորեալ ընդ բազմատանջ փորձանօք գրեալ՝ ամենայն փորձանաց աշխարհիս, և թէեւ էր նա արդէն թեւակոխեալ հնգի և յիսնոյ ամաց՝ յորժամ յաջողեցաւ նա մշակել և հմտանալ դժուարստաց լեզուին նաև Գերմաներէնի, և յօրինել մի հաւաքածոյ նորոգ ընթացից տարերց 'Բերականութեան Գերմաներէնի՝ 'ի ձեռագիրս պատրաստ, և թէեւ ապա արդէն տարելցեալ հնգի և վեցտասան ամաց խանդաղատալիւ համակրութեամբն 'ի ներկայիս մեծայաջող բազմօժտեալ ցեղին՝ բաւականապէս յաջողեցաւ նա նաև վարժիլ և հմտանալ Ճաբոներէնին, որո՛յ վայելէ այժմիկ նա զգուարթ ուսումնասիրութիւն բարեցաջող, և որոյ հետամուտ է նաև յօրինել այժմիկ տարերս դիւրուսոյց՝ Բերականութեան Հայերէնիւ, և պատրաստել բառգիր, Հայ վաճառականութեան իբրեւ սատար՝ նորոգ մեծաշահ յուսալից ասպարիզին Ծայրագոյն Արեւելից՝ ընդգրկողաց՝ մեծապէս յանձնարարելով զայն:

Իսկ արդ յետ համառօտակի կատարելոյ զկենսագրութիւն իւր այսպիսեօք բազմափորձանաւոր յեղաշրջեալ, թարգմանիչն ջերմեռանդեամբ խնդրէ յազնիւ ընթերցողացն՝ շահագրգռական կրօնանուէր թարգմանեալ երկիս վասն իւր աղօթել, յորժամ չուեալ է նա յայսմանէն, և յԱմենողորմածէն հայցել՝ մարդկային սխալանացն և աշխարհային մեղանշացն ներուսն 'ի Բարձրելոյն, Ամէն:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մօսաի (Մովսիսի) գործոց, և փրկարար համակիր վարուց նորա ընդ Իսրայէլացիս, և Իսաի (Յիսուսի) դպրական ուսանողութեամբ պատանեկան չափահաս կենցաղին՝ և Նորին Աւետարանական վա՛ղ կենցաղին և վարուց՝ ուղեւորութեամբն ի հարաւային և ի հիւսիսային Հնդիկս, ի միջին Ասիա, ի Պարսս և ի չրջակայսն, և հուսկ յետ անդր վերադառնալով յերկիրն Իսրայէլացւոց՝ աղէտալի վախճանի՝ Նորա անդանոր՝ յիշատակագրութեանս փոխընդօրինակիչք՝ յայտարարեն թէ փոխընդօրինակեցաւ այն ի հոց յիշատակագիր ձեռագրաց ի թիպէթական լեզուէ, որք ընդ հսկողութեամբ և ընդ խնամօք Լամայսեաց մեծաց պահպանին, որք բնակին ի մեծի մեհաստանի՝ նոցին «Հիմիս» անուն, որ հիմնեալ կայ ի մերձակայս Լէ քաղաքին յեղերս Սինտ գետին ի Լատաք գաւառ, այս գաւառ գոյով երբեմն մասն չինական մեծի կայսրութեան, յորում ներմուծեալ էին այնոքիկ յերկրէն

Հնդկաց. և ի Լամայայեւտաց ոմանց Թիպէթականաց՝ ահգանոր թարգմանեալ ի հնամէից ձեռագիր յիշատակագրաց՝ ի հնոյ Բալի լեզուէ. որք՝ մեծապէս համակիր գոլով սուրբ և մաքուր կենցաղին Իսաի՝ սերտիւ ջերմեռանդեամբ ուսումնասիրէին զայնոսիկ. Իսկ թէ՛ թէ և բազում մասունք յիշատակագրութեանս համաձայնին այլ թէ մերթ շեշտակի հակասական գտանին մեկնութեանց աւանդելոց թէ ի հինն և թէ ի նոր կտակարան զայսմանէ թարգմանիչն ո՛չ կարէ ստանձնել պաշտօն յայտարարելոյ որոշակի դատաստան կարծեաց, զայդ վաստակ թողլով ի հարկէ մեծագոյն հեղինակաց Աստուածաբանից հմտագունից, զի, զգանաղննին կարողութիւն ինքեան՝ արդարեւ նա անբաւական համարէ ա՛ռ այդ, բաւ համարելով ինքեան սակայն նշանակել միայն զտարբերութիւնս հիմնաւորս, որք յայնմիկ գտանին ընդ մեկնութեանց Սրբոց գրոց և սրբոց Աւետարանչաց, և միանգամայն շեշտել աստէն և անդէն զյայտարարութիւնս նոցին՝ առաջադրելով զինքեան անկողնակալ դիտողութեանս զբանիցն՝ զի. ինքեան այնպէս երեւի թէ սոցին յիշատակագրութիւնք ընդհանուր առմամբ կրեն նշան և դրոշմ առաւել որոշակի հաւանականութեան, այնու թէ՛ արդիւնք ասին լինիլ այնոքիկ ժամանակակից լրաբերութեանց յերկրէն Իսրայէլացոց և յեգիպտոսէ, և այնու թէ՛ այնոքիկ երեւին ճշդիւ լնուլ և լուսաբանել զանձանօթ մնացեալ մասն առաւելագոյն գործօն կենցաղին Յիսուսի յերեքտասաներորդի ամացն անընդհատ մինչ ցլրումն քսան և իններորդին՝ Նորա, և երկից յաջորդական հրաշագործութեանց ամօքն վերջաւորեալ ըստ Աւետարանչաց, որոյ միջանկելոյ կենցաղին՝ մեկնութիւնք պակասին ի կտակարան նոր գրեա՛ր բո-

վանդակ ի չորից համայն սրբոց Աւետարանչաց, Դուկաս. Սուրբ Աւետարանիչն միայն յիւրումն Աւետարան անորոշակի իմն յիշելով թէ Մանուկն այն աճէր և զօրանայր հոգւով, լի իմաստութեամբ, և շնորհ Տեառն կայր ի վերայ նորա և յորժամ երկոտասանմեկի էր չոգաւ նա. յերուսաղէմ ընդ ծնողս իւր են. և նա երեսնամեկի էր յորժամ նա եկն առ Յովհաննէս մկրտիլ ի Յորդանան դետ, որով այսպէս ընդ աղօտիմն ստուերաւ վարագուրեալ կորնչին յաչաց՝ հետք նորա, և մասն այն կարեւոր, յոյժ կարեւոր մասն, առաւելագոյն գործօն կենցաղին Յիսուսի, որ որպէս տեսանեմք՝ երեւի ճշդապէս լնուլ և լուսաբանել յիշատակագրութիւնս այս, վասն որոյ, և վասն այսորիկ յոյժ շահագրգռական աղագի՝ արժան և պատշաճ համարեցաւ ի թարգմանչէն, որ է անդամ Հայկական արեւելեան առաքելական կաթողիկէ եկեղեցոյ հնագունի, ընծայել զայն թարգմանութեամբ ի հրատարակութիւն թէ յիւրումն գրաբար պարզ հայ բարբառ և թէ նաեւ յանգլիականն բարբառ միանգամայն, զի նա տարակուսի ո՛չ, թէ ո՛չ միայն առհասարակ իւրեան ցեղակիցք, այլ նաեւ մասնաւորապէս Անգլիացիք և Ամերիկացիք ընդհանրաբար, և ամենայն ազինք որք ամենուրեք զԱնգլիականն խօսին ընդ ամենայն երկիր, և հուսկ համայն, միանգամայն բովանդակ աշխարհ քրիստոնէական, մեծապէս հետաքրքիր ունին լինիլ առ այդ, և տեսեալ թարգմանչին թէ, առեալ ի յիշատակագրութեանէն թիպէթականէ, Լամայք այնոքիկ կարիւրն հետաքրքրական զուգադէպ եղանակաւ երեւին կրել և ներկայանալ պարզ զգեստաւորութեամբ և նմանօրինակ գլխանոցիւ վեղարաւ՝ յար և նման հանդերձանաց մերայնոց ամուրի

Նախնի կղերականաց(*) պատշաճ համարեցաւ ի նմանէ նաեւ զպատկեր նոցա տալ յայսմիկ, և միանգամայն տալ զքարտէս աշխարհագրական վայրի ճշգրտի մեծի «Հիմիս» մենաստանին նոցա, յորում առի գտանին հնօրեայ բնագիր ձեռագրացն յիշատակագիրք մեկնութեանս միանգամայն պատկեր Իսաի սկսնակ քարոզութեան:

Արդարեւ մինչ այս, մինչ այն թարգմանչին չէ անծանօթ թէ՛ վերաբերմամբ բանիցն սրբոյն Դուկասի Աւետարանչին ի նոր կտակարան իւր թէ Յիսուս երեսնամենի էր եկեալ առ Յովհաննէս՝ մկրտիլ ի գետին Յորդանանու յորժամ վերեւեալ առ Իսրայէլացիս, պատմաբանք ոմանք ենթադրեն թէ՛ նա ցայնժամ բնակեալ էր և կեցեալ յանապատին՝ ընդ բազմահմուտ աղանդաւորս ոմանս Երբայականս «Էսէնեանս»՝ յորջորջեալ, որք յայնմ պահու թուօք էին իբր չորեքին հազարօք, որք բնակէին ի գաւառն Էսկատտի յարեւմտից կոյսն մեռեալ ծովուն, և թէ նա անդանօր օժտեցաւ ի միջի նոցա հմտութեամբք բազմօք, ի նոցանէ ստանձնելով նաեւ զիւր զբաղում բարս և զսովորոյթս բարիս, և թէ Էսէնեանքն այնոքիկ գոլով երկրպագողք և պաշտողք միմայնոյ միով Աստուծոյ՝ էին ամենակարողի՝ զոնս և պատարագս սակայն կենդանեաց նոքա ո՛չ մատուցանէին՝ անզգայ մեղանչանս համարելով զայն, և առ այդ բաւ համարէին զպատարագ մաքուր սրտի, մաքուր խղճի, մոքուր հոգւոյ և մաքուր մարմնոյ, զորօրինակ, ամուրի կենօք բացարձակ ժուժկալութեամբ հրաժարելով ի մերձաւորութենէ սեռականէ. և

(*) Հարկ է յիշել թէ Լամայք և Դամայակետք միանգամայն վարեն կենցաղ ամուրի նմանութեամբ Թարգմանչին ցեղակից վերին կղերականաց.

զբաղելով անմեղունակ երկրագործութեան վաստակաւ, և մեղուաբուծութեան և դուարապահութեան խաղաղ աշխատանք, և ո՛չ թաքուցանէին նոքա յինքեանս քանքար ոսկւոյ կամ արծաթի, այլ իւրաքանչիւր ոք զարդիւնս վաստակի յանձնէր ի ձեռն հասարակային վերատեսչի միով վիճակաւ ընտրելոյ ի հասարակութենէն որ զպաշտօն ունէր ընուլ և զհոգ ընդհանրական առ նոսա հայթայթման զամենայն զպաշար հարկաւոր, զամենայն զհանդերձեղէն և զամենայն զպիտոյս, ի վերայ այսր ամենայն իւրաքանչիւր ոք ի նոցանէ, համարս տալով, արտօնեալ էր ի կարկառ օգնութեան աղքատաց, ի խնամածութիւն հիւանդաց, ի սատարել քաղցեղոց և ծարաւելոց, հանգոյն նմանութեամբ հասարակային մատակարարութեան կատարման ի ժամանակի առաքելականին. նոքա նաեւ լիովին անդոսնէին ցկեանս զծառայութիւն, զգերութիւն և զսարկութիւն՝ դաւանելով զայնոսիկ լիովին հակընդդէմ օրինաց իրաւանց բնականի և ընդոծին սկզբանց աղատութեան և անձնիշխանութեան, և սակայն նոքա ամենեքեան անյողդողդ աշխատէին ընդհանրաբար զաւուրս վեց, և զօրն եօթերորդ միայն պահէին հանգիստ և սուրբ, անցանելով յաւուր յայնմիկ զժամ և զժամանակ՝ աղօթից զուարթութեամբ՝ և Տեառն Աստուծոյ պաշտամամբք եւ երկրպագութեամբք՝ ամենեցուն նոցա ժողովեալ ի ժողովարանն իւրեանց մեծի յատուկ Սինակոկային, յորում բազմէին նոքա իւրաքանչիւրն ի դաս իւրեանց և ի կարգ աստիճանաւորութեան ձերագունից և պաշտօնական արժանաւորութեանց և ուրոյն ուրոյն արժանեաց նշանակելոց, որոց ոմանք ի նոցանէ (Գուէյքքորէն) զազգուհի ընդունէին ընթեռնուլ զաւուրն պատշաճի զսուրբ

գիրս, և զորոց զխորհուրդս մեկնաբանել, զխոստումն ուխտի ի միջի իւրեանց, Զերդուհն և մանաւանդ զսուտ ո՛չ երբէք ներէին նոքա, զի զայնոսիկ համարէին նոքա՝ զամենայն ի չարէն և անհարկի, պարտ էր մի միայն չխօսիլ կեղծիս՝ բաւ համարելով զճշմարտն այո՛ կամ զո՛չ, և զառաւելն քան զայն նոքա համարէին ստորին վատ և չար. նախ քան ժամու ճաշի և կերակրոյ՝ նոքա զպաշտօն կատարէին ընդհանուր մաքրալուացութեան որպէս նաեւ յետոյ. և յայնժամ զգեստաւորէին նոքա սպիտակօք բամպակեղէնի, քթանեղենի կամ մետաքսեղենի՝ ըստ աստիճանի, իսկ դուռն ու բեք բրդեղինի և այն միայն ի կենդանոյն խզելոյ եւ եթէ՝ անհրաժեշտ հարկաւոր պատսպարելոյ ի ցրտառութենէ, յորժամ բազմէին նոքա ի նախաճաշ, ի ճաշ հասարակաւոր և կամ յընթրիւ, որովք ո՛րքա կատարէին խմբովին զազօթս գոհաբանութեան (տուեալ ընդ հուպ) ապա յետ ընթրեաց պարէին պարս հոլովայոյզս փառաբանականս բստ Մէվլէվեաց, և ի վերջոյ տալով միմեանց ողջոյն ի համբոյր սրբութեան մեկուսանային զոյգ զոյգ առ ի հանգիստ խաղաղութեան. Արդարեւ այսոքիկ սարք և կարգք և կանոն ամենեքեան սուրբք էին և մեծաւ մասամբ՝ բաց ի վերջնոյն՝ պատշաճապէս համաձայնին սրբոց սկզբանց և սրբոյ եղանակի կենցաղաւարութեան Յիսուսի, և սակայն այսու ամենայնիւ այսոցիկ պատմաբանից ենթադրութիւն գոլով մի միայն վարկահիւսեալ՝ ներքի լիցի թարգմանչին՝ դաւանիլ զայն մի միայն մասամբ իրական, այսինքն թէ կարէ այն միայն լինիլ հաւանական նաեւս առ ժամանակ մի բնակութեամբն Նորա ընդ նոսա. իսկ ո՛չ առ բովանդակ ժամանակամիջոցն այն, զի արդ առաջի մեր ունիմք զգրական մանրակրկիտ լուսաբանութիւն

այսորիկ յիշատակագրութեան թիպէթականի, յորմէ երեւի յայտ թէ ապաքէն մշակուին ծագման քրիստոնէութեան պարտի սնուցեալ լինիլ պուտտայականութեան բարոյանուէր օրինօքն մեծին Պրահմայի, որով ապա բարենորոգեցան նոքա՝ սրբովք Մովսիսական օրինադրօք՝ և լրացան նոքա ապա Աւետարանական նուիրական օրինօքն նորոյ կտակարանին, ընդ որում մասամբ համերաշխ ներդաշնակութեամբ հետեւիլ երեւին նաեւ օրէնք եւ կրօն միաստուածպաշտականի նուիրականի Մահմէտականութեան, զԱստուածորդութիւն Յիսուսի՝ աւանդեալ ի նոր կտակարանին՝ դաւանելով այնու ոգւով որով ամենայն արարածոց մարդկայնոց մարթ է լինիլ որդի Աստուծոյ, կեղով սրբօք կենօքն Յիսուսի՝ որպէս ասէ Յովհաննէս Աւետարանիչն Սուրբ «Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդի Աստուծոյ լինիլ», և զՀոգին սուրբ դաւանելով՝ ո՛չ իբրեւ անձնաւորութիւն անջատ այլ խոստովանելով զԱյն գալ միեւնոյն սուրբ հոգի Տեառն Աստուծոյ Հօր մեր ինքեան՝ այսու հաշտ և ներդաշնակ և համերաշխ բերելով զսկզբնական ծագումն կրօնից նախնի հեթանոսական պուտտայականութեան, որ նաեւ թէ և չէր գերծ գրեալ համայնածաւալ ախտէն կուպաշտութեան արդեամբ քրմաց և քրմապետաց որք չահագործէին չարաչար զտգիտութիւն ժողովրդեան, որ կրօն ի սկզբան էր ծաւալեալ գրեալ ընդ ամենայն Արեւելս. որ ապա բարենորոգեալ երեւի գոլ՝ Մովսիսական օրինօք նուիրականօք և յաջորդաբար բարեկարգեալ և լրացեալ սրբանուէր օրինօք Քրիստոնէութեան, հուսկ ապա գոլ միոյն անտեսանելոյ նուիրական միաստուածպաշտական մահմէտական կրօնից քարոզութեամբ որով կառարի համակ հալածումն




կուսպաշտութեան, չրապաշտութեան և արեւապաշտութեան
ծառայելու ի Պարսս եւ յԱրաբիա արմատախիլ ջնջելով եւ
բառնալով զհետս աշնոցիկ, եւ այսու կատարելով ո՛չ
նուազ նուիրական ծառայութիւն՝ ընդհանուր մարդկու-
թեան միասնական Աստուածապաշտութեան քարոզու-
թեամբն: (*)



ԽՄԲԱԿ ԼԱՄԱՅԻՅ ԹԻՊԵԹԱԿԱՆԱՅ


(*) Խորիմաստուն Անդղիացի հոգեբանն Քարլայլ ի զիրս իւր «Հե-
րոք» յորջորջեալ, ունի բանասիրական բանս զփաստականս զՄոհամմէտէ
և զՄահմէտականութենէ այնքան՝ խոստովանելով զայն նաեւ իբրեւ
մին յիրերայաջորդ նուիրական կրօնից, որով ո՛չ երբեք արդարանայ
մոյի հակամահմէտականութիւն՝ և մեք պարտիմք զինչ ինչ զչափա-
զանցութիւնս յայնմիկ խոստովանիլ իբրեւ ի տեղական և ի քաղա-
քական պարագայից ժամանակին հարկադրեալ, որպէս սա՝ պատահի
զանազան տարազի եղանակաւ նաեւ ի կոչմանս կողմանս երկրան
իբր լիուլի քաղաքակրթութեամբ օժտելոց իսկ, որով արդարանայ բանս
այս չի՞ տեսանես զշիւղական եղբոր քօ, զգերանդ յականէ բուսմէ. և ոչ
տեսանես զլեբան ականդ հան նոյն և ապա զշիւղական եղբոր քօ.



Յանուն բարձրելոյն Եհովայի, մեծի Տեառն
Աստուծոյ միայնոյ, մեծի Արարչին Տիեզերաց, եւ
մեծի ըրարունելոյն, և Տեառն՝ ամենայն երկնառաջ
մարգարէից մեծաց և փոքունց, հրեշտակաց, և
հրեշտակապետաց և ամենայն արարածոց առաքե-
լականաց, ամէն:

Ո՛վ Տէր Հայր մեր երկնաւոր, որ ես ամե-
նուրեք և շուրջ ընդ ամենայն վայրս, Սուրբ է
անուն քո, յաւիտենական է արքայութիւն քո,
յերկինս և յերկիր կատարին կամք քո, տուր մեզ
այսօր զպիտոյս մեր հանապազօր, թո՛ղ մեզ
զպարտիս մեր, և արժանացո՛ղ զմեզ թողուլ մե-
րոց պարտապանաց, և փրկեա՛ զմեզ, ո՛ Տէր, 'ի
չարէ և 'ի փորձութենէ. զի քո են արքայութիւն,
փառք, զօրութիւն, և յաղթութիւն, յաւիտենանս,
յաւիտենից, Ամէն.

Գոհանամք զքէն, ո՛ր Տէր, յաղագս լիութեան
և առատութեան սեղանոյս, և խնդրեմք և հայ-
ցեմք ՚ի քէն, ո՛ր Տէր, զնոյն շնորհել թէ մեզ
զօրհանապաղ, և թէ ամենայն եղբարց մերոց
նմանեաց, լի, առատ, և բարի, զորպիսին հաճոյ
եղեւ Քեզ արդ շնորհել մեզ, Ամէն.



«Տէր Հայր մեր ո՛չ եղ ու է զանազանութիւն ընդ մանկտիս իւր ընդ ամենեւին, և նորա ամենեւին հաւասարապէս սիրելիք են նմա».

Բանք սրբոյն Իսաի առ Պրահմանա, Քչաղրեայս, և Վէսեայս, յաղագս Սուգրայիցն.



Ա.

ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՈՅ ՄՕՍԱՅԻ
ԵՒ ԵԼԻՅ ԻՍՐԱԷԼՍՏԻՈՅ
ՅԵԿԻՊՏՈՍԷ

Ա. Ժողովուրդն Իսրաէլի, որ բնակէր և էր հաստատեալ յերկրի ումեք յոյժ բարեբեր, որ տայր ի միում՝ ամի հունձս կրկինս առ նստա, և որ ունէր անդ բազում երամակս արջառաց և անանոց կենդանեաց, յաղագս բազմօք մեղանչանացն զբարկութիւն Տեառն զարթոյց.

Բ. Որ բառնալով ի նոցանէ զերկիրն, զարջառան և զանասունս և զբովանդակ հարստութիւն նոցա և զսր ինչ նոքա ունէին զամենայն՝ պատուհաս և պատիժ ահաւոր էած ի վերայ նոցա, և Իսրաէլ անկաւ անդէն գերի և յստրկութիւն

ընդ Փարաւանօք հզօրօք և ընդ մեծամեծօքն և փարթամներն, որք յայնմ պահու տիրապետէին յեգիպտոս .

Գ. Եգիպտացիքն անողորմաբար վարէին ընդ Իսրաէլացիս, յուեգոյն քան ընդ անասունս վայրիս, դետնաքարչ առնէին զնոսա՝ զծանունս տալով նոցա աշխատութիւնս եւ վաստակս բռնիս՝ պահկականս՝ չղթայս արկանելով զնոցանէ մինչեւ չարաչար վիրաւորք լինիլ նոցա բերդ բերդ ի մարմին, և չտային նոցա սնունդ պատշաճ, և նոցա ո՛չ թողուին ապաստան բնակութեան ընդ յարկօք տան պատշտնի .

Դ. Եւ պահէին զնոսա յաւէտ յերկիւղ մեծ և ահիւ և դողութեամբ, զրաւելով զնոսա յամենայնի ի նմանութենէ մարդկայնոյ արարածոյ, յորմէ լիովին մերկացուցանէին և թողուին զնոսա բոլորովին, առանց ո և է նշոյլի և նշանի մարդկութեան .

Ե. Յայտոսիկ մեծամեծ տառապանս անհնարս աղէտից հասեալ թաւալեալ ժողովուրդն Իսրաէլի, ուշաբերելով զերկնային զմեծ պաշտպան բարի իւրեանց, դարձան դիմելին առ նա՝ ողբալով եւ հայցելով ի նմանէ զողորմութիւն նորա և զգութ .

Զ. Ի ժամանակի յայնմիկ Փարաւոն ոմն մեծ և երեւելի յոյժ իշխէր յեգիպտոս, որ էր յոյժ համբաւաւոր անթիւ անհամար յաղթանակօքն եւ

հոլովադէզ հարստութեամբն և մեծաշուք և հոյակապ պալատօքն, զորս տայր կառուցանել՝ զգերիս իւր աշխատ առնելով, և նոցին ձեռօք շինէր և ի կատար ածէր զայնոսիկ պահկաբար .

Է. Մեծի Փարաւոնիս այսորիկ էին որդիք երկուք, որոց կրտսերին անուն էր Մօսա (Մովսէս) (*), որում Իսրաէլացիքն ուսուցեալ էին զիւրեանց զարուեստս և զգիտութիւնս բազմապիսիս, և նոքա զնա վարժէին յիմաստութիւնս իւրեանց բազմադիմիս .

Ը. Եւ ժողովուրդն ամենայն յեգիպտոս՝ դուրդուրային և սիրէին զՄօսա վասն ընդոծին բարութեանն, և վասն մեծի համակրանացն զոր նա տածէր առ ամենեքին նոսա, որք ի տառապանս կային .

Ա. Եւ զի տեսեալ Մօսայի թէ Իսրաէլացիքն ամենայն, ի հեճուկս տառապանացն անտանելեաց զոր կրէին նոքա, ո՛չ լքանէին նոքա ամենեքեան՝ զՏէր Աստուած իւրեանց, և ո՛չ յօժարէին նոքա պաշտել և երկիրպագանել աստուածոցն աղգին Եգիպտացւոց, որք շինեալ և կառուցեալ կանգեալ էին ձեռօք մարդկայնօք .

(*) Աւանդութիւն Սրբոց զորոց զՄովսէս որդեգրէ յապարանս Փարաւոնի որպէս Իսրաէլածին երախոյ լքեալ և ի ջրոյ փրկեալ սակայն .

Ժ. Զհաւատս իւր ետ նա առ Տէր Աստուած նոցա առ անտեսանելին, որ այդպէս զնոսա չթողուր տկարանալ ի տոկուն զօրութենէն, և թոյլ չտա՛յր բնաւին ընկճիլ.

ԺԱ. Եւ քահանայապետք Իսրաէլացիք յարողեւորէին և կենդանի և վառ պահէին զհաւատ եւ զլերմեռանդութիւն Մօսայի, եւ դիմէին առ նա հայցելով ի նմանէ, մերձենալ և բարեխօսել առ Հայր իւր Փարաւօն մեծ, յօգուտ և ի նպաստ իւրեան հաւատակցաց.

ԺԲ. Իշխանն Մօսա յայնժամ չողաւ մերձեցաւ առ Հայր իւր, և խնդրանս էարկ՝ զյոռի կացութիւն և զվիճակ ժողովրդեանն չուառի այնորիկ ամբ առնել, իսկ Փարաւօնի զայս լուեալ կարի իմն յուզեալ բարկացաւ, և ցասեաւ յոյժ, և եւս առաւել յաւել նա զտանջանս նոցա, որոց արդէն ենթարկեալ էին գերիքն իւր.

ԺԳ. Ընդ աւուրս ընդ այնորիկ յետ սակաւ ինչ ժամանակի պատուհասք բազմապիսիք անցին յեզիպտոս, յորում հետզհետէ պատահարք անհնարինք և աղէտք մեծամեծք յաճախէին, և չար քան զամենայն ախտ ժանտ, զերիտասարդս եւ զժերունիս, զառողջս և զվատառողջս, զփարթամս և զչքաւորս առ հասարակ կոտորէր ի նոցանէ, մինչ Փարաւօնի տեսեալ զայս ահաբեկ հաւատալ նորա այնպէս և տարակուսիլ թէ արդարեւ աս-

տուածք իւր ընդ նմա ինքեան էին՝ ի բարկութեան.

ԺԴ. Իսկ իշխանն Մօսա ազդ արար առ հայր իւր, թէ Տէր Աստուած իւրոց դերեացն էր այն, որ միջամուխ հանդիսանայր այսպէս վասն ժողովրդեանն չուառի այնորիկ, և նա միայն էր, որ այսու աղագու տայր պատիժս և պատուհասս առ եզիպտացիս.

ԺԵ. Յայնժամ Փարաւօն ետ հրաման առ Մօսա որդին իւր և ազդ արար նմա առնուլ ընդ իսրաէլացւոց զցեղ դերեացն ամենայն, առաջնորդել նոցա և վարել զնոսա արտաքս յերկրէն, և անդէն լիուլի հեռաւորութեամբ ի մեծէ քաղաքէն իւրմէ կառուցանել և հիմնել քաղաք մէնորդ վասն նոցա, և Մօսայի ինքեան բնակիլ եւ կեալ ընդ նոսա.

ԺԶ. Աւետեաց զայս Մօսա վաղվաղակի՝ գերեացն եբրայեցւոց, յայտ առնելով առ նոսա թէ որպիսեաւ եղանակաւ փրկեալ էր ինքն զնոսա, յանուն Տեառն Աստուծոյ, յանուն Տեառն Իսրաէլացւոց, և նա ել անդէն և անդ արտաքս ի յաղաքէն և էանց բոլորովին արտաքս յերկրէն յայնկոյս յեզիպտոսէ.

ԺԷ. Եւ Մօսա առաջնորդեաց նոցա, և էաժ զնոսա այսպէս յերկիրն այն, զոր Իսրաէլացիքն կորուսեալ էին յաղագս խստութեան և սաստկութեան զանցանաց նոցա մեծամեծաց, և ապա անդանոր Մօսա ետ նոցա զօրէնս և զկտակս, որովք նորա յետ այնորիկ պարտ էին անդադար կալ

յաղօթս առ Տէր Աստուած իւրեանց առ անտե-
սանելին և գոհարանել զնմանէ, որոյ անչափ էին
բարիքն առ նոսա .

ԺԸ. 'ի կատարել և 'ի մեռանել Մօսայի և
յայնմ հետէ, ամենայն իսրաէլացիք զբաղում
ամս սերտիւ պահէին զօրէնս իւրեանց, վասն որոյ
և Տէր Աստուած բազմօք վարձատրեաց զնոսա, և
լիովին վրկեաց զնոսա յամենայն շարեացն, որոյ
յեզիպտացւոց ենթարկել էին նոքա .

ԺԹ. Հօր եղբւ . յոյժ թագաւորութիւն նո-
ցա, հօրագոյն յաշխարհ ամենայն, և փառաւո-
րեցան թագաւորք նոցա մեծաւ ճոխութեամբ և
հարստութեամբ, և գանձս բազումս կուտակեցին,
և ժողովուրդն իսրաէլի վայել երկար զխաղաղու-
թիւն առ հասարակ յաւուրս նոցա .



Բ .

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՓԱՌԱՑ ԻՍՐԱԷԼԱՅԻՈՑ

ԵՒ ԱՊԱ ՎԵՐՍՏԻՆ Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ

ԱՆԿԱՆԵԼՈՑ ՆՈՑԱ ԸՆԴ

ԿԵՍԱՐԱԻ ՄԵԾԱԻ

ՀՐՈՎՄԱՅԵՑԻՈՑ

ԿԱՅՍԵՐ

Ա. Համբաւ ճոխապանծ փառաց և հարս-
տութեան ժողովրդեանս իսրաէլի տարածէր եւ
սփռէր ընդ ամենայն կողմանս աշխարհի, և ազգք
և ազինք շուրջ զնոքօք անկանէին 'ի նախանձ մեծ
ընդ իսրաէլացիսն .

Բ. Եւ զի սակայն Բարձրեալն Գերագոյն էր,
որ հաճէր առաջնորդել զինուց եւ յազթական
բանակաց Երրայեցւոց վասն այնորիկ ոչ իշխէին
հեթանոսք յարձակել և արշաւել առ նոսա .

Գ. Եւ քանզի սակայն մարդկային բնութիւն
կրէ յար զչուառութիւն զինքեան կորուսանելոյ
զպարտաճանաչ հլուութիւն 'ի բարս՝ նմին հան-

դոյն, հաւատարմութիւն և հլուութիւն իսրաէլացւոյ հանդէպ Տեառն Աստուծոյ իւրեանց, ոչ տեւեաց երկար.

Դ. Զի նորա սկսան մոռանալ զշնորհս նորա զամենայն, որովք առատացեալք էին նորա և առ լցեալք, և նորա դուն ուրեք արտասանէին և 'ի բերան ածէին և իշէին զանուն նորա, այլ նորա ընդհակառակն 'ի խնդիր լինէին կախարդաց օգնականութեան և զպաշտպանութիւն մոգացն հայցէին յաճախ.

Ե. Եւ արքայք օտարոտիք և պէտք մեծամեծք նոցին յայնժամ՝ զօրէնս իւրեանց դնէին 'ի վերայ նոցա փոխան օրինացն Մօսաի առ նոսա կտակելոց, և նորա վերստին լքանէին զտաճար Տեառն իւրեանց և զծէսս հաւատոց իւրեանց, և ամենեքին 'ի ժողովրդեանն զանձինս իւրեանց տային ի շուայտութիւն, և զնախնի սրբութիւն և մարութիւն բարուցն կորուսանէին.

Զ. Այսպէս անցանէին յօրէ անտի Ելից նոցա յեզիպտոսէ բաղում՝ դարբ ժամանակաց անթիւ, յորժամ Տէր Աստուած վերստին սահմանեաց ենթարկել զնոսա փորձի և փորձանաց պատժաբերութեան իւրում.

Է. Եւ յայնժամ սկիզբն արարին ազգք եւ ազինք օտարոտիք յարձակել և արշաւել յերկիրն իսրաէլացւոց, աւերելով զերկիրս նոցա, քանդե-

լով և կործանելով զէնս նոցա և զգեօղո, և զքնակիչսն տալով վարել 'ի գերութիւն և յստրկութիւն.

Ը. Եւ եղև այնպէս յայնմ պահու՝ հեթանոսք եկին հասին յայնկոյս կողմանէ ծովուն, յերկրէն Ռօմէլոսի (*), և նորա նուաճեցին զԵբրայեցիսն, և անդ հաստատեցին զքանակս իւրեանց, և կարգեցին անդ զհրամանատարս իւրեանց՝ փոխանորդօրէն կառավարել զնոսա ընդ իշխանութեամբ մեծի կեսարին.

Թ. Հրամանատարս այսօրիկ քանդէին և աւերէին զտաճարս նոցա, և զքնակիչսն բռնադատէին՝ չ'տալ պաշտամունս և զերկրպագութիւն Տեառն Աստուծոյ նոցա Անտեսանելոյն, այլ զոհս մատուցանել և տալ զպատարագս իւրեանց՝ աստուածոց նոցա քրմակառուցից.

Ժ. Եւ զաղնուատոհմն նոցա բռնադատէին առնուլ զվիճակ զօրականաց սոսկականաց, և զկանայս նոցա առեւանդէին յարանց իւրեանց, և զժողովուրդն ուսմիկ գերի վարէին, և զհազարաւորս և զբաւորաւորս սքսորէին յայնկոյս ծովուն.


ԺԱ. Եւ սպանանէին նորա զմանկունս նոցա, ջարդէին և հատանէին զնոսա ընդ սրով, մինչ

(*) Երկիր ծննդեան Ռօմէլոսի, որոյ մայրաքաղաքն էր Նոյն իսկ Հռոմ մեծ.

վաղվաղակի յերկիրն Իսրաէլի ո՛չ այլ ինչ լսելի լինէր՝ այլ ճիշդ և աղաղակ, ողբ և լալիւն, առհասարակ ընդ ամենայն երկիրն և յաշխարհն այն ամենայն.

ԺԲ. Հասեալ այսպէս բնակիչքն երկրին Ի ծայրագոյնս այս Թշուառութեան, վերստին զմտաւածէին նորա զՏէր Աստուած մեծ իւրեանց, և ողբալով՝ վերստին հայցեցին զողորմութիւն նորա և զգութ, և դարձեալ աղերս արկեալներուսն ինդրէին ի նմանէ. Ունին եղև լուաւ նոցա Տէր Աստուած Հայր մեր, և վերստին զիջաւ աղաղակի աղերսի նոցա՝ իւրով անսպառ ողորմութեամբն և իւրով անբաւ բարութեամբն և գթութեամբն. (*)

(*) Երեւոյթս այս գայ ի յայտ յաճախ 'ի պատմութենէ՝ զրեա՛ աւանայն ազգաց երեւելեաց Թէ յորժամ մէն մին 'ի նոցանէ հասանի 'ի ծայրագոյնն գագաթնակէտ իւրոյ մեծութեան՝ մեծօք զինական փառօք և տնտեսական և նիւթական հարստութեամբ՝ կորուսանելով զբարսբարիս, վաղվաղակի հապճեպս և ո՛չ նուազ առաւել արագաբար սահիւնայն առ յաւէտ ստոր 'ի վայր, այսպէս նաեւ 'ի նախնունս Իսրաէլացիք զօրէնս զայս անխուսափելի ազգային վիճակի փոփոխութեան քանիցս կրեցին առ ինքեանս առաւելօրէն՝ վասն լիովին զանցանաց նոցա 'ի շուայտութիւն և վասն 'ի հաւատոցն պակասելոյ՝ վասնայսորիկ 'ի հարկէ յոյսմանէ վիճակէ փոփոխելոյ նոցա օգուտս քաղէին ազգք և ազլինք շուրջ պատեալք զնորօք նաև հեռաւորք, և արշաւէին և յարձակէին 'ի վերայ յաշխարհաց, մեծի Տանն Յակովբայ և Դաւթի, կնաբարոյիկ և շուայտաբարոյիկ դարձելոց՝ որք յայնմ պահու գանձինս իւրեանց. լիովին տուեալ



Յ Ա Ղ Ա Գ Ս Ծ Ն Ն Դ Ե Ա Ն Ի Ս Ա Ի
Ե Ի Ո Ի Ղ Ե Ի Ո Ր Ո Ի Թ Ե Ա Ն
Ջ Ե Ռ Ն Ա Ր Կ Ի Ն Ո Ր Ա
ԱՌ ՀՆԴԻԿՍ

Ա. Իսկ արդ հասեալ էր Ժամ, յորում ունէր սահմանեալ մեծի ամենաողորմածի Դատաւորին՝ զմարմին առնուլ 'ի պատկեր մարդկան.

Բ. Եւ Հոգին յաւիտեանական որ 'ի լրութեան անզբաղ խաղաղութեան իւրոյ կեար, և յիւ-

էին շուայտութեան այնպիսւոյ ծայրայեղութեան. 'ի վերայ այսր ամենայնի որպէս ծանուցանեն Հին և Նոր Կտակարանք՝ զխոստումն զաւետելն Տեառն Աստուծոյ առ Դաւիթ արքայ Հրէից զաթոռ նորա վերականգնել, և վերահաստատել 'ի վերայ այնորիկ զՄանուկ ոմն 'ի սերնդենէ նորա, զորոյ խոստման զնշանակութիւն այլաբանօրէն հոգեւոր՝ սակայն ո՛չ կարացին նորա ըմբռնել, այլ որպէս 'ի յիշատակագրութենէս նաև տեսանի ընդհուպ՝ խորհրդով աշխարհային ըմբռնել կամէին զայն, մինչ միակ պաշտօն Յիսուսի էր մաքրագործել և փրկել զնոսա յանընդհատ գերութենէն հանապազ մեղանշելոյ նոցա.

լումն գերադոյն երանութեան, զարթեալ 'ի շարժումն՝ մասնակի անջատմամբ առ ժամապէս՝ 'ի Տեառնէ Յաւիտենից.

Գ. Եւ գարով մտաներով 'ի մարմին և 'ի պատկեր մորդկան իսկապէս՝ եկն ցուցանել ժողովրդեան յանձին իւր զճանապարհ բարի և ուղիղ՝ նոյնանալոյ ընդ էութեան աստուածանոյ և ընդ նմա, խառնիլ ինքեան համակերպութեամբ առ 'ի ժառանգել զերանութիւն՝ յաւիտենական.

Գ. Եւ այսպիսեալ անձին օրինակաւ ցուցանել առ նոսա զեղանակ իսկապէս անջատման հոգւայ 'ի մարմնեղէն պատեանէն փտութեան, յաղազս ստանալոյ և հասանելոյ նոյա կատարելութեան անհրաժեշտի առ 'ի մտանել և անցանել նոցա յիւրումն արքայութիւն երկնից, որ անյողդողդ մնայ և կայ յաւէտ, և յորում տիրապետէ միշտ և հանապաղ երանութիւն յաւիտենական.

Ե. Եւ ահա անդէն եւ անդ ծնաւ Մանուկ ոմն հրաշայի յերկիրն Իսրայէլացւոց (*) և խօսե-

(*) Որպէս և ասեն Աւետարանիչք սուրբք. Յիստուս ծնաւ 'ի Բէթլէհէ. յարմէ եօթն մըռնիւ չափ հետաւորութենէ 'ի տեղւոյն ծննդեան տեսանելի են պարիսպք երուսաղէմի, այսպէս վկայէ և հաստատէ՝ ծնունդ Նորա առ Իսրայէլացիս նաեւ յիշատակադրութիւն Թիպէթական պուտայականութիւն.

ցաւ Տէր Աստուած 'ի բերանոյ Մանկունն զմեծութենէ հոգւոյն, և զշուառութենէ ամենայնի՝ մարմնոյ վերաբերոյ.

Զ. Ծնողք Նորածնին էին աղքատ և չքաւոր և սերեալ 'ի հեղահոգի և 'ի բարեպաշտ գերդաստանէ, որոյ՝ զնախնի մեծութիւն յերեսս երկրի՝ մոռացման ենթարկեալ, զօր հանապաղ զանուն մեծի Աբարչին փառաբանէին՝ գահաբանելով վասն տառապանացն, որով նա կամէր փորձել զնոսա (*).

Է. Առ 'ի վարձատրութիւն գերդաստանիս այսորիկ, որ ո՛չ լքանէր և ո՛չ յետս կոյս դառնայր 'ի ճանապարհէն ճշմարտութեան և ուղղութեան, օրհնեաց Տէր զանդրանիկս այս զծնունդ նոյա, և ընտրեաց առաքեաց նա զԱյն և ետ նմա պաշտօն վերականգնելոյ զայնոսիկ որք ընդ պատահասօք մեղանչանաց անկեալ կային, և բուժելոյ զայնոսիկ, որք կային տառապեալք և վըտաբեկեալք.

(*) Գուշակելի է յայսմանէ պարբերութենէ և զիւրըմբոնելի է Թէ զՅովսեփաւ են բանքս, որ ուղղակի սերեալ էր յարքայէն Դաւթէհիւրից, զորմէ հաստատեն նաեւ բանք համապատասխանք նորոյ Կտակարանին Թէ. «Ահա հրեշտակ Տեառն 'ի տեսլեան երեւեցաւ նմա և ասէ. Յովսէփ, որդի Դաւթի. մի՛ երկնջիր առնուլ առ քեզ զՄարիամ փին ըռ. բանգի որ 'ի նմայն ծնեալ է, 'ի Հոգւոյն Սրբոյ է (1 Մատթ. 20).

Ը. Մանուկս այս աստուածային որ կոչեցաւ Իսա (Յիսուս) տակաւին 'ի մատաղ տիողն սկսանէր խօսիլ զմիոյէ զԱնտեսանելոյ Աստուծոյ և հոգւոյ մնորեւոյ թախանձէր զղշալ և ապաշխարել և մաքրել թօթափել զմեղս որովք զանձինս իւրեանց բաղմօք յանցապարտս արարեալ էին.

Թ. Ժողովուրդք բաղումք գային ունկնդրել նմա յամենայն կողմանց, և զմայլէին յոյժ զբանիցն զորս լսէին նոքա խօսիլ 'ի բերանոյ Նորամանկականէ. և Իսրաէլացիքն ամենեքեան խոստովանէին միաբերան և հաւատային թէ «Հոգին Սուրբ Յաւիտենից բնակի ընդ Մանկանս» (*).

Ժ. Յորժամ Իսա երեքտասանամեայ եղև և չափահաս, յորում հասակի պարտ էր և սովորութիւն Իսրաէլացւոց կին առնուլ ինքեան.

ԺԱ. Բնակարանն, յորում ծնողք նորա զապուտս իւրեանց հայթայթէին համեստ ինչ վաս-

(*) «Եւ Մանուկն աճէր և զօրանայր լի իմաստութեամբ և շնորհք Աստուծոյ էին 'ի վերայ նորա» (2 Դուկասու 40).

«Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ և շնորհք Աստուծոյ և 'ի մարդկանէ» (2 Դուկասու 52). Եւ եղև յետ երից աւուրց զտին զնա 'ի տաճարին զի նստէր ընդ վարդապետսն, լսէր 'ի նոցանէ և հարցանէր զնոսա. զարմանային ամենեքեան որք լսէին 'ի նոցանէ ընդ իմաստութիւնն և պատասխանի նորա. և իրրեւ տեսին զնա սքանչւոցան (2 Դուկասու 46-48)

տակաւ, սկիզբն էառ հանդիսանալոյ Ժողովավայր այցելութեանց և տեսակցութեանց յորում մեծատունք ընչեզք և աղնուատոհմք հաւաքէին՝ իւրաքանչիւրն 'ի նոցանէ տենչալով ապահովել զպատանին Իսա 'ի փեսայութիւն, որ ստացեալ ունէր այնքան զհռչակ և զհամբաւ՝ մեծաւ ճարտասանութեամբն և օրինակելի շինիչ բանիւքն յանուն Ամենակարողին.

ԺԲ. 'ի սմին պահու սակայն Իսա գաղտ եթող և մեկնեցաւ 'ի տանէ ծնողացն և ել արտաքս յերուսաղէմէ, և ուղեկից մտանելով ընդ վաճառորդս ոմանս, առաջնորդեայ զանձն իւր չոգալ յերկիրն Հնդիկ.

ԺԳ. Ակն ունելով Նորա մտադիր՝ անդ կատարելագործել զուսմունս գիտութեան Սրբոց Գրոց աստուածայնոց և քաղել անդէն լիակատար հրմտութիւն օրինաց մեծացն Պուտտայից.



ՅԱՂԱԿՍ ԴՊՐԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ.

ԻՍԱՐ ԵՒ ՍԿՂԲՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ա. Ն. Ա. Կ. Ա. Ն.

ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՅ

Ն Ո Ր Ա.

Ա. Պատանին Իսա 'ի հասակի ամին չորեքտասաներորդի չոգաւ ապա արտաքս յայնկոյս 'ի Հնդկաստանէ, և զընակութիւն իւր հաստատեաց 'ի մէջ ժողովրդեանն Արիան, յերկիրն այն՝ Տեառն Աստուծոյ սիրելի.

Բ. Համբաւ հրաշալի անուան պատանեկին սփռեցաւ տարածեցաւ ընդ ամենայն երկարութիւն հիւսիսակողման երկրին հնդկաց, յորժամ ընթանայր նա և անցանէր յերկրէն հնդեկին գե-

տաց մեծաց և 'ի Ռաճբութանէ, յորում երկըրպագողք և պաշտողք ջերմեանդունը Աստուծոյ ճէնի, խնդրեցին ի նմանէ՝ յաւէտ ընդ իւրեանս կեալ և մնալ.

Գ. Իսկ նա եթող զայսոսիկ զգմայլոյսն իւր անդէն, գտանելով զնոսա սերտիւ մոլորեալ ի պաշտամունս իւրեանց ճէնական, և անդէն չոգաւ նա 'ի ճակըրնաթ յերկիրն Որսիսի, յորում վայրի հանդչին մասունք մարմնոյ Վիասա Քրիշնաի, ուր քուրմք սպիտակաղղեստը ընկալան զնա մեծալցնծութեամբ և գորովալիր հիւրասիրութեամբ.

Դ. Անդ ուսուցին նորա նմա զընթերցանութիւն և զհմտութիւն Վէտաից, զազօթիւք զբուժումն, զհանումն դեւոց և ոգւոց չարաց 'ի մարմնոյ մարդկայնէ և զվերահաստատութիւն այնոցիկ 'ի կերպարան և 'ի պատկեր մարդկան, զմեկնութիւն սրբոց գրոց, և քարոզութիւն ժողովրդեան.

Ե. Եկաց նա զամս վեց 'ի ճակըրնաթ, 'ի Ռաճակռիհա, 'ի Պէնարէս և յայլաքաղաքս նմանս նուիրականս, և ամենուրեք յաշխարհ ամենայն սիրէին զԻսա, քանզի նա կեար սիրով և խաղաղութեամբ հաւասարապէս և ընդ Վէսիաս և ընդ Սուտրաս, որոց միանգամայն ուսուցանէր նա զՍուրբ Գիրս.

Զ. Իսկ Պրահմանք և Քչադրեայք նմա ասէին թէ մեծն Բարա-Պրահմա արգիլեալ էր նոցա մեր-

ձենալ և հպել այնոցիկ որք ծնեալ էին և ստեղծեալ յորովայնէ նորա և յոտիցն(*).

Ը. «Իսկ Սուտրայից», ասէին, «արդիւեալ իսկ էին ներկայ լինիլ առաջի ընթերցուածոց Վէտաից, և նոքա ո՛չ իսկ արտօնեալ էին տեսանել և հայել այնոցիկ, զի նոքա ասէին թէ՝ բաժին վիճակի նոցա էր մի միայն սպասաւորութիւն և ծառայութիւն մշտնջենական գերութեամբ, առ Պրահմանս, առ Քչադրեայս և առ Վէսիաս իսկ.

Թ. Մահ միայն կարէ զերծ և ազաւ կացուցանել զնոսա 'ի ծառայութենէ նոցա և 'ի գերութենէ նոցա. ասէ Բարա-Պրահմա, արդ լքեա՛ դու և թո՛ղ զնոսա, և եկ դու երկրպագանել և պաշտել ընդ մեզ մերոց աստուածոց, զորոց դու զարթուցանիս զցասումն և զբարկութիւն եթէ չ'հնազանդիս դու նոցա.

Ժ. Իսկ իսա բանից նոցա ունին ո՛չեդ, և հետապնդէր նա բարոզել առ Սուտրայս ընդդէմ Պրահման կոչեցելոցն, և Քչադրեայց և այլոց, և ո՛չ անսայր նոցա.

ԺԱ. Զի սրտմտէր նա յոյժ ընդդէմ դադափարի նոցա որով իրաւունս կապտեալ ունէին

(*) Դաւանութիւն օրինացն Պրահմանց և Քչադրեայց այնպէս ասէ թէ Վէսիայք ծնեալ էին յորովայնէ և Սուդրայք յոտից Բարա-Պրահմայի հետեւաբար արարածք ստորինք էին նորա.

յիւրեանս զնմանիս իւրեանց մերկացուցանելոյ յիւրաւանց մարդկութեան, և իսա իսկապէս առ նոսա ասէր թէ «Տէր հայր մեր ո՛չ եդ ո՛ և է զանազանութիւն ընդ մանկտիս իւր ընդ ամենեսին, և նոքա ամենեքին հաւասարապէս սիրելիք էին նմա».

ԺԲ. Իսա ուրտնայր նաեւ զաստուածային ծագումն Վետաիցն և Բուրանայիցն, և աշակերտաց և հետեւողաց իւրոց ուսուցանէր նա թէ մարդկան՝ օրէն տուեալ էր մի. մի և հաւասար ամենեցուն վասն բարւօք կառավարութեան արարուածոց նոցա և գործոց նոցա.

ԺԳ. «Երկե՛րուք դուք մի միսյն 'ի միոջէ Տեառնէ Աստուծոյ, ծունր դի՛ք դուք առաջի նորա մի միայն, և նմա միայն մատուցէք պատարագ. յաշխարհային աշխատանաց ձերոյ».

ԺԴ. Իսա ժխտէր նաեւ զ«Թրիմուրդին»(*) (երրորդութիւն) զոր նոքա ասէին դո՛ւ՝ Բարա-Պրահմայի նոյնացմամբ և մարմնացմամբ ընդ Վիշնու և ընդ Սիւլա, և այսպիսեաւ ինչ համադուգութեամբ, զի ասէր իսա.

(*) Մի գուցէ լիցի Բրիստոնէական մեծի խորհրդոյն երրորդութեան բղխեալ յայսպիսւոյ եռապաշտական սկզբանց հեծանոսաց որպէս յայսմանէ երեւի աւանդութենէ հնամուտեան և այնու ներմուծեալ 'ի Սուրբ Գիրս. որպէս այլ եւ այլ պաշտամունք եկեղեցականք ներմուծեալ են արդէն այսպէս և մնան ցայսօր.

ԺԵ. «Հոգին սուրբ յաւիտենական և Դատաւորն յաւիտենից մի է միայն, որ պարփակէ, որ բաղադրէ զանբաժանելի ոգին 'ի տիեզերս. Նաինքն է մի միայն Արարիչն և Ստեղծաբործիչ Տիեզերայ, որ պարունակէ որ ոգեւորէ զամենայն և զամենեւին».

ԺԶ. «Նա մի միայն է որ կամեցաւ և ստեղծ զաշխարհ Նա մի միայն է որ կեայ 'ի յաւիտենից, և կենդանութեան և գոյութեան Նորա չիք վախճան, նման նմին չիք ոք, ո՛չ 'ի յերկինս ո՛չ յերկիր, և ո՛չ, ո՛ւ և է արարած».

ԺԷ. «Զի Արարիչն մեծ զո՛չ որ ունէր մասնակից իշխանութեան և զօրութեան իւրոյ, նամա՛նաւանդ եւ զոչինչ յանկենդան իրաց և առարկայից և կենդանեաց, զորպիսին դուք խոստովանիք և ուսուցանէք, զի Նա ինքն ունի միայն զիշխանութիւն և զզօրութիւն գերազոյն».

ԺԸ. «Նա միայն կամեցաւ, և աշխարհ եղեւ. Նա լճացոյց զամենայն զջուր, և միացոյց մեկուսացոյց զայնոսիկ իւրով աստուածային խորհրդով և յայնմանէ բաժանելով անշատեաց զմասն երկրագնդիս և զերկիրս ցամաք. և Նա է միայն հեղինակ մարդկայնոյ կենացս խորհրդաւորի, նմա փչելով մասնիկ մի՝ 'ի Հոգւոյն և 'ի գոյութենէն իւրմէ».

ԺԹ. «Եւ զերկիր բովանդակ, զջուրն և զցամաք երկիր, և զանասունս և զկենդանիս և զամենայն զոր ինչ ստեղծ և արար Նա, հպատակեցոյց Նա մարդկան զօրութեան, իսկ Նա ինքն է միայն որ պահէ զայնոսիկ ամենեւեան յանշրջելի մշտնջենական 'ի կարգաւորութեան, իւրաքանչիւր ամենայնի Նա ինքն սահմանելով զչափ յատուկ և զժամ և զժամանակ տեւողութեան».

Ի. «Վասն որոյ բարկութիւն և ցասումն Տեառն Աստուծոյ ապաքէն իջցէ 'ի վերայ մարդկան, զի անգիտացաւ Նա և մոռացաւ Նա զԱրարիչն իւր, և զտաճար Նորա ելից պղծութեամբ, երկրպագանելով և աստուածպաշտելով արարածս բազմազանս, զորս Տէր Աստուած նմա էր 'ի հպատակութիւն ենթարկեալ».

ԻԱ. «Առ 'ի հաճոյանալ մետաղի և քարանց զոհս մատոյց Նա էակս մարդկայինս, յորս մասն ինչ և բաժին հոգւոյ Ամենաբարձրելոյն բնակի».

ԻԲ. «Եւ զի նուաստացուցանելով՝ նուաստացոյց Նա զայնոսիկ որք քրտամբ դիմաց և ճակատի իւրեանց տքնին, և ետուն անձանց իւրեանց ընդունիլ զդատարկապօրտաց շնորհս՝ բազմելով առ սեղանօք ճոխապէս և առատապէս պարուրելօք քրտամբ նոցա».

ԻԳ. «Ամեն ամեն ասեմ՝ ձեզ նոքա որք այսպէս զրաւեն և մերկացուցանեն զեղբարս և զըն-

կերս իւրեանց 'ի տրոց աստուածայնէ յերանու-
թենէ ինքեանք լիցին զրաւեալք յայնմանէ, և
Պրահմանք և Քչագրեայք եղիցին Սուտրայք Սուտ-
րայիցն, ընդ որս հանգիցէ էն ցաւիտենից» .

ԻԴ. «Քանզի յաւուր դատաստանի մեծի վերջ-
նոյ Վէսիայք և Սուտրայք զթողութիւն ընկալցին
գտանել յաղագս անգիտութեանն իւրեանց, և
փոխանակ՝ Տէր Աստուած զցասումն իւր և զբար-
կութիւն իջուցէ և խստացուցէ 'ի վերայ ամենե-
ցուն այնոցիկ որք զիրաւունս նոցա մարդկային
յինքեանս ունէին կապտեալ» .

ԻԵ. Վէսիայք և Սուտրայք սքանչանային յոյժ
լուեալ զայսոսիկ զբանս, և անհունապէս ոգեւոր-
եալ հարցանէին առ Իսա թէ որպէս պարտ էր
նոցա 'ի յաղօթս և հայց լինիլ, որովք չկորուսա-
նել նոքա զերանութիւն իւրեանց և զփրկութիւն» .

ԻԶ. «Երկիր մի՛ պագանէք, և մի՛ պաշտա-
մունս կատարէք դուք կռոյ, զի նոքա ո՛չ լսեն
ձեզ, մի՛ ունկն մատուցանէք դուք Վէտաից, յորս
նենգեալ և այլայլեալ երեւին ճշմարտութիւն և
ուղղութիւն, մի՛ յայսմիկ հաւատս ընծայէք
դուք առաջնորդաց ձերոց որք գտանին ամենու-
րեք, և որք զընկերս և զեղբարս իւրեանց ստոր-
նայուցանեն, նուաստացուցանեն և խոնարհե-
ցույանեն» .

ԻԷ. «Բարի արարէք դուք ամենեցուն, և ու-
ղորմեցէք աղքատաց, տկարաց և անկեղց օգնու-
թիւնս մատուցէք, մի՛ գործէք չարիս ո՛չ ումեք,
ո՛չ երբէք ամենայնի որ ձերն չէ մի՛ ցանկանայք,
եւ ո՛չ երբէք ամենայնի զորս տեսանէք դուք
ստացուածս 'ի ձեռս այլոց» .



Ե.



ՅԱՂԱԳՍ ՄԵԿԵԼՈՅ ԻՍԱԻ 'Ի ՃԱԿԸՐՆԱԹԷ
ԴԷՊ ԱՌ ՀՈՎԻՏՆ ՌԱՃԲՈՒԹԱՆԱՅ,
ԵՒ ԺԱՄԱՆՄԱՆ ՆՈՐԱ ՅԵՐԿԻՐՆ
ԿՈՒԱՏԱՄԻՏԱՅ ԵՒ ԳՆԱԼՈՅ
ՆՈՐԱ ՅԱՅՆԿՈՅՍ
ՅԱՐԵՒՄՈՒՏՍ

Ա. Քուրմը սպիտակադգեստը և զինակիրը
նոցա լուեալ զբանս զորս այսպէս խօսէր Իսա
հանդէպ Սուգրայից, ապա 'ի մօտ եղին սպա-
նանել զնա, և այսու գիտմամբ զսպասաւորս
իւրեանց առաքեցին հետապնդել և որոնել զՄար-
գարէն գեռատի.

Բ. Սուգրայք սակայն աղղարարեալ առ Իսա
զիւրմէ վերահասու վտանգէն, 'ի գիշերայն եթող
նա զըջակայս ճակըրնաթի, և չոգաւ նա վաղվա-
ղակի ժամանել 'ի բարձունս 'ի լերինս, և հաս-
տատեաց զբնակութիւն իւր յերկիրն Կուստամի-

տաց, յորում վայրի ծնեալ էր մեծին Պուստայի
Սաքիամունույ, 'ի մէջ ժողովրդեանն, որք մի միայն
պաշտէին զմին զվսեմն և զՊրահմա վեհ.

Գ. Եւ յետ ուսանելոյ նորա անդ քաջապէս
զբարբառ Բալի 'ի կատարելութիւն, զանձն իւր
ետ յուսումնասիրութիւն նուիրական յիշատակա-
գրոյ սրբոյ Սագրայից.

Դ. Ապա Իսա, զոր Բարա-Պրահմա ընտրեալ
և առաքեալ էր զպաշտօն կատարել տարածանե-
լոյ զբանս իւր սուրբս, յետ ամաց վեց, կարող ե-
ղեւ կատարելապէս մեկնել զսրբանուէր յիշատա-
կագիրսն.

Ե. Մեկնեցաւ նա յայնժամ և 'ի Նէբալէ,
և 'ի բարձանաց լեռանց Հիմալայան, և էջ 'ի հո-
վիտն Ռաճբութան, և չոգաւ նա յայնկոյս յա-
րեւմուտս քարոզելով առ բազում աղգս այլա-
զանս, զեղանակ և զճանապարհ տիրանալոյ մարդ-
կան՝ գերագոյն կատարելութեան.

Զ. Բարիս առնելով իւրաքանչիւր ոք առ ըն-
կեր իւր և եղբայր, իրբեւ հնար և միջոց ապա-
հովագոյն վաղվաղակի ջնջելոյ և զանձն մաքրելոյ
'ի մեղաց, և այնու նոյնանալ և միանալ և խառ-
նել 'ի Հոգին յաւիտեանական. «Երանի» ասէր Իսա,
«այնոցիկ որոց այսպէս վերստացեալ զնախնի
սրբութիւն բարուց, և այնու ապաքէն արժանաց-
եալ լիովին թողութեան յանցանաց իւրեանց զի-

բաւունս վերստասցեն տեսանելոյ զպատկեր Տեառն Աստուծոյ վեհապանծին.

Լ. Յընթանալ իսաի աստուածայնոյ այսպէս 'ի մէջ երկրաց բազմաց հեթանոսականաց, ուսուցանէր և ազգարարէր Նա առ նոսա թէ ամենայն պաշտամունք աստուածոց տեսանելեաց հակասական էին բնականի իսկ օրինաց և հակառակ լիովին.

Ը. «Զի» ասէր նա, «չէր տուեալ մարդկան և արտօնեալ նմա տեսանել զպատկեր Աստուածային, և նմա չէր շնորհեալ իրաւունս առ այդ աչօք կենդանեօք, հետեւաբար և ո՛չ երբէք տրուեալ էր նմա և կարելի՝ կերտել և շինել աստուածս շօշափելիս բազմապիսիս 'ի նմանութիւն Յաւիտենականին».

Թ. «Նամանաւանդ խղճի իսկ հակառակ էր լիովին մտաց մարդկան՝ զանցանել այդպէս նսեմացուցանելով զմեծ վայելչութիւն վեհութեան և պայծառութեան Տեառն Աստուծոյ՝ վերադաս նմա և հաւասար նմա կացուցանելով զանասունս և զկենդանիս, և զարարածս ձեռակերտս 'ի մարդկանէ մետաղիս և քարամբ.»

Ժ. «Օրէնսդիրն յաւիտենից մի է, չի՞ք այլ ոք Աստուած բայ 'ի նմանէ, և ընդ նմա ո՛չ ոք էր մասնակից արարչութեան աշխարհիս, և դի-

տաւորութեանց և խորհրդոց նորա ո՛չ ոք էր գիտակից եւ հաղորդակից.»

ԺԱ. «Որպէս Հայր ոմն առնէ առ որդիս իւր, Տէր Աստուած մեր յետ մահու՝ նովին եղանակաւ դատելոց է զմարդիկ ըստ օրինաց ողորմութեան եւ գթութեան իւրոյ, Նա զորդիս իւր ո՛չ երբէք ստորնացուցանէ եւ ո՛չ նուաստացուցանէ, քաղդել տալով ոգւոյ նոյա 'ի մարմինս եւ 'ի պատկերս անասնոց կենդանեաց առ 'ի քաւութիւն (*).

ԺԲ. «Օրէնք իմ երկնային, ասէ Արարիչն Աստուած, պժգալով պժգայ զզոհաբերութենէ մարդկայնոց արարածի եւ զգէնմանէ նոցա յոտս կռոց արձանաց եւ անասնոց կենդանեաց, զի ամենայն կուռք անասունք եւ կենդանիք եւ ամենայն որ ինչ երեւի յաշխարհիս յայսմիկ շնորհեալ եւ արդէն զոհաբերեալ է մարդկան իմովք գերագոյն կամօք».

ԺԳ. «Ամենայն ինչ այսպէս արդէն տուեալ եւ զոհեալ գոյով մարդկան որ սերտօրէն եւ ուղղակի՝ յարեալ կապեալ է ընդ իս, որ եմ Հայր նոցա, ապա ուրեմն դատեսցի նա օրինօքն աստուածայնօք, եւ խստապէս պատուհասցեցի նա

(*) Ժողովուրդը ոմանք հեթանոսաց այնպէս հաւատային Թէ հոգի մարդկան յետ մահու փոխանցանն յանասուն մի կենդանի առ 'ի քաւութիւն 'ի կենդանութեան մեղանշանացն.

որ զմի ոմն յւրդւոց իմոց առեւանդէ և այդպէս
յափշտակ առնէ» .

ԺԴ. «Որպէս անասուն կենդանի ոչինչ հա-
մարի առաջի մարդկան, նոյնպէս և մարդ արա-
րած ո՛չինչ համարի առաջի Դատաւորին յաւիտե-
նականի» .

ԺԵ. «Վասն որոյ ասեմ ձեզ, թո՛ղէք զկուռս
և զկուպաշտութիւն ձեր, և մի՛ կատարէք հան-
դէսս այնպիսիս որք մի միայն ծառայեն անջատել
և հեռացուցանել զձեզ 'ի հօրէ ձերմէ, և միայն
մերձեցուցանեն և յարեն զձեզ քրմաց և քրմա-
պետաց ձերոյ յորոյ զերեսս դարձուցեալ են եր-
կինք» .

ԺԶ. «Զի դռքա են որք հեռացուցանեն զձեզ
'ի Տեառնէ յԱստուծոյ ձերմէ, և որոց խժդժու-
թիւնն և նախապաշարմունք մզեն զձեզ կորուսա-
նել զամենայն զբարոյից զգածմունս ձեր և տա-
նին առաջնորդեն զձեզ հոգւոց ձերոց յաւիտե-
նականին 'ի կորուստ» .



ՅԱՂԱԳՍ ՅԱՐԱՏԵՒ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՅ

ԵՒ ԲԱՆԻՑՆ ՀԱԿԱՃԱՌԱԿԱՆՅ

Ի Ս Ա Ի

Ա. Բանբ իսաի տարածանէին այսպէս 'ի մէջ
Երկրին հեթանոսաց և յաշխարհ ամենայն, նա
յորում ընթանայր յառաջ, և բնակիչք ամենայն
լքանէին անդէն զկուռս և զկուպաշտութիւն.

Բ. Զոր տեսեալ քրմապետից խնդիր արկա-
նէին ընդ նմա, որ փառաբանէր այսպէս զանուն
Տեառն Աստուծոյ ճշմարտի, զիւր մեղադրանս ա-
պացուցանել առ նոսա առաջի ժողովրդեան ու-
րովք ամբաստանէր նա զնոսա, և ցոյց տալ զու-
նայնութիւն կռոց իւրեանց առ նոսա .

Գ. Իսկ իսա պատասխանի ետ նոցա և ասէ
այսպէս. «Եթէ կուռք, անասունք և կենդանիք
ձեր ամենաղբօրք են, և ունին գերբնական զօրու-

թիւն ճշմարիտ, օ՛ն անդր, եկեացեն նոքա և կայ-
ծակնահար արասցեն նորա զիս աստ 'ի տեղւոյս».

Դ. Պատասխանի ետուն քրմապետքն և ասեն.
«Դու ինքնին զայդ հրաշագործեա մեզ, և օ՛ն ե-
կեացէ Տէր Աստուած քո և շփոթեսցէ և խռո-
վեսցէ զմեզ և զմերայինս. եթէ նոքա այդպէս
իրօք նողկանք և պժգանք պատճառեն նմա».

Ե. Յայնժամ իսա ասէ ցնոսա. «Յօրէ անտի
յառաջնմէ յորում աշխարհ և տիեզեր ամենայն
ստեղծագործաւ, յայնմանէ սկիզբն արարին հրա-
շագործութեանց Տեառն Աստուծոյ մերոյ դալ 'ի
յայտ և երեւիլ ամենուրեք, զամենայն աւուրս և
զամենայն ըոպէս, որ զայնոսիկ, արդէն ո՛չ տե-
սանէ զրաւեալ է նա իսպառ յորանչեւապանծ
շնորհաց հրաշագեղ կենաց աշխարհիս պանծալ-
եաց».(*)

Զ. «Վասն որոյ բարկութիւն Տեառն Աստու-
ծոյ իջցէ ո՛չ 'ի վերայ քարանց և մետաղաց և
փայտեղինացն կռածոց հատուածոց, որք լիովին
անկենդան են և անշունչ, այլ անկցի և իջցէ իւր-
պէս 'ի վերայ մարդկան այնպիսոյն որում պարտ
էր վասն փրկութեան անձին իսկ իւրոյ՝ կործանել

(*) Ըստ ասելոյն Յիսուսի Թէ «Ո՛չ է արժան արկանել մարգարիտս
առաջի խոզանց».

և քայքայել զամենայն զկուռս արձանաց կազմ-
եալս և յօրինեալս ձեռամբ իւրով».

Է. «Ղի որպէս մանրէք աւազի և քարինք ո-
չինչ համարին առաջի մարդկան և ակն հլու ու-
նին և սպասեն մինչեւ զի ժամանեսցէ ժամն և
ժամանակն յորում մարդիկ առնուցուն կազմել և
յօրինել յայնցանէ օգտակար մի իր և առարկայ».

Ը. «Նոյնպէս մարդիկ բաւականանալ պար-
տին և հլու սպասել և ակն ունել ժամանման
մեծի շնորհաց Տեառն Աստուծոյ զոր նա տացէ
նոցա կամօք իւրով, և իւրով որոշմամբ՝ զնոսա 'ի
պատուաբերութիւն սահմանել յայնմ».

Թ. «Իսկ վայ մարդկանց այնոցիկ հակառա-
կորդաց ատելականաց յորժամ նոքա ակն հլու ո՛չ
ունիցին սպասել շնորհաց նորա, այլ շտապաւ կա-
մին զբարկութիւն աստուածային հովհարել և առ
ինքեանս հրաւիրել».
Վայ այնոցիկ յորժամ տա-
կաւին ակնկալեն առաւել քան զոր ինչ կատարե-
ցան հրաշագործութեամբ մեծի զօրութեան իւրոյ
կամօքն իւրովք».

Ժ. Յայնժամ ցասումն նորա ջնչեսցէ և ոչն-
չացուցցէ ո՛չ զկուռս և զարձանս ձեր, այլ զնոսա
որք կանգնեցին զայնոսիկ, և յայնժամ հոգիք
և սիրտք նոցին իջցեն 'ի գեհնն և ճարակ եղիցին
'ի հուրն յաւիտենական, և մարմինք նոցտ ողջամբ

փտասցին և ճարակ լիցին առ 'ի յագեցումն քաղ-
ցի և ակորժի վայրի գազանայ կատաղեաց».

ԺԱ. »Եւ Տէր վանեսցէ արտաքս յերամակաց
իւրոց զանասունս և զկենդանիս վարակեալս զայս-
պիսիս, իսկ ընկալցի առ ինքն զայնոսիկ զորս նորա
մօլորեցին արհամարհելով և անգիտանալով զմասն
երկնային շնորհաց որ արդարեւ բնակի առ նոսա».

ԺԲ. Այսպէս հեթանոսք զապիկարութիւն և
զբրմապետիցն անզորութիւն տեսեալ առաւել հա-
ւատս ընծայէին բանիցն Իսաի երկնչելով 'ի ցա-
մանէ Տեառն Աստուծոյ, ջարդէին և կոտոր կո-
տոր զլորէին զկուռս և զարձանս նոցա(*), իսկ
քրմապետքն հապճեպ հեռանային զանձինս իւր-
եանց 'ի փախուստ տուեալ 'ի վրէժխնդրութենէ
ժողովրդեան.

ԺԳ. Եւ Իսա ուսուցանէր նաեւ հեթանոսայ՝
աչօք կենդանեօք զհոգին յաւետենից տեսանել
չ'ինդրել(**), այլ 'ի խնդիր լինիլ միայն 'ի սրտի
իւրեանց զգալոյ և արժանի կացուցանելոյ զան-
ձինս ոգւով ճշմարտիւ ստանալ զշնորհս նորա սրբ-
բութեամբ և պայծառութեամբ.

ԺԴ. Եւ նա պատուէր տայր նոցա ո՛չ միայն
'ի կատարմանէ մարդկայնոյ զոհի հրաժարիլ, այլ

(*) Իսա այսպիսեալ կատարէր զհրաշագործութիւնն զայն զոր նորա
խնդրէին այսու անուղղակի եղանակաւ.

(**) Որպիսին սովոր էր նոցա՝ տեսանելով աչօք կենդանեօք զկուռս
և զարձանս և զանասունս և զկենդանիս իւրեանց.

առ հասարակ նաեւ չ'զենուլ զանասունս և զկեն-
դանիս այսու դիտմամբ, որոց կեանք նոցա 'ի վե-
րուստ էին տուեալ, և ամենեքին այնորիկ յօգուտ
մարդկան և 'ի նպաստ նորա էին ստեղծեալ».

ԺԵ. «Մի՛ գողանայք զինչս այլոց, զի այդու-
զբաւէք դուք զընկերս և զեղբարս ձեր 'ի պտղոյ
արդեանցն անօրինաբար, զորս նորա քրտամբ դի-
մաց և ճակատի իւրեանց էին վաստակեալ և
ստացեալ».

ԺԶ. «Մի՛ ստէք և մի՛ պատրէք զո՛չ ոք, զի
մի՛ և դուք պատրեսցիք, իրաւունս արարէք հա-
նապաղ միմեանց և հատուցէ՛ք զայնոսիկ նախ քան
ժամանել աւուր վերջին դատաստանի, որպէս զի
մի՛ լիցի այդ յայնժամ անագան».

ԺԷ. «Մի՛ շուայտէք և մի՛ չնայք, զի այդ
իսկ և իսկ հակառակ է աստուածային օրինաց,
զոր չէ արժան բռնաբարել».

ԺԸ. «Քանզի զգերագոյն երանութիւն ժա-
ռանգելոց էք դուք ո՛չ միայն զանձինս ձեր պահե-
լով սուրբ և մաքուր, այլ միանգամայն զայլս
պահելով և առաջնորդելով 'ի ճանապարհ սրբու-
թեան և մաքրութեան, յորում և նորա վայելես-
ցեն գտանել զնախնական կատարելութեան իւր-
եանց զարժանին ժառանգութիւն՝ իւրեանց՝ յաղ-
թանակաւ».



ՅԱՂԱԳՍ ՄՏԻՑ ՆՈՐԱ ԱՌ ՊԱՐՍՍ ԵՒ

ՆԵՆԳԱԲԱՐ ԱՐՏԱՔՍԵԼՈՅ ՆՈՐԱ

Ի Ն Ո Յ Ա Ն Է

Ա. Հռչակ քարոզութեանց և բանիցն Իսաի ընուն զչրջակայ երկիր ամենայն, և յորժամ 'եմօւտ նա առ Պարսս, քրմապետք նոցա երկեան յոյժ և հրամայեցին վաղվաղակի, և արգիլեցին բնակչացն ունին ո՛չ մատուցանել նմա .

Բ. Իսկ յորժամ տեսին նոքա, զի չէնք և գեօղք ամենայն ցնծութեամբ և ուրախութեամբ ընդունէին զնա և հաւատով ունին մատուցանէին բանից նորա, հրաման ետուն ունին զնա ձերբակալել, և ածին զնա առաջի քրմապետին մեծի որ եհարց նմա զայսոսիկ առաջակայ բանս .

Գ. «Զորմէ նորոյ Աստուծոյ քարոզես դու, ո՛չ գիտե՞ս» թշուա՛ռդ դու, թէ Սուրբն Զօ-

րօսադր է միայն արդարն ընտրեալ 'ի պատիւ ընդունելութեան և յարաբերութիւնս պահպանութեան ընդ էին գերագունի» .

Դ. «Որ պատուիրեաց հրեշտակաց իւրոց զբան Տեառն և զօրէնս նորա 'ի գիր առնուլ, զորս նորա 'ի մէջ դրախտին յանձնեցին առ Զօրօսադր Սուրբ, առ 'ի վարժել և ուսուցանել զայնոսիկ ժողովըրդեան իւրում» .

Ե. «Եւ դու ո՞վ ես որ այսպէս զԱստուածն մեր հայհոյել ժպրհիս, և 'ի սիրտս հաւատացելոց մերոց զկասկածանս զարթուցանես և զերկբայութիւն և զանհաւատութիւն յարուցանես» .

Զ. Պատասխանի ետ նոցա Իսա և ասէ. «զաստուծոյ նորէ ումեմնէ չ'է զորմէ քարոզեմ և խօսիմն ես, այլ քարոզեմ ես զհայրն Երկնաւոր, զմին, որ նախ բան յյաւիտեան էր 'ի սկզբանէ, և նա կեսայ և կեցցէ յաւէտ, յաւիտեանս յաւիտենից» .

Է. «Զորմէ ես քարոզեցի և խօսեցայ ժողովըրդեանդ որպէս մանկան անմեղի որ տակաւին ահաս մտօքն՝ առանձինն տկար զօրութեամբ չէ ինքնին 'ի վիճակի իմանալոյ զՏեառնէ՝ Աստուծոյ, և թափանցել և ըմբռնել զհոգեւոր վսեմութիւն նորա աստուածային» .

Ը. Այլ որպէս մանուկ ոմն նորածին որ 'ի խաւարի իսկ ճանաչէ զստինս մօրկանն, նոյնպէս

Ժողովուրդը ձեր զոր մոլորեալ էին վարդապետութիւնը ձեր կեղծ, և անտի պաշտամունք հաւատալեաց ձերոց. զՀայր իւր ծանեալ բնազդամբն իւրով, ի Հայրն Աստուած, որոյ մարգարէն եմ ես».

Թ. «Էն յաւիտենից իմոյ իսկ բերանոյ միջնորդութեամբ ասէ Ժողովադեան ձերում մի՛ երկիրպտգանել և մի՛ պաշտել զարեգակն, քանզի այն՝ մասն ինչ է միայն աշխարհիս այսորիկ, զոր նաեւ ստեղծագործեալ է Նա վասն մարդկան».

Ժ. «Արեգակն ելանէ, առ ՚ի ջեռուցանել զձեզ և բեղմնաւորել զվաստակ աշխատութեան ձերոյ, և մտանէ՝ առ ՚ի պարգեւել ձեզ դադար, և հանգիստ շնորհել, որպէս սահմանեալ է իմ վասն ձեր».

ԺԱ. «Ինձ միայն, և մի՛ միայն ինձ է, որում դուք զամենայն ինչ պարտիք, զամենայն ինչ զոր դուք գտանէք շուրջ ձեր առ գլխով ձերով, և յոտս ձեր, ասէ Տէր».

ԺԲ. «Իսկ քրմապետք առարկէին Նմա թէ ո՞րպէս մարթ էր բարեք զկենցաղ վարել Ժողովրդեան՝ համաձայն կանոնաց արդարութեան և ուղղութեան, եթէ այն առաջնորդս և ուսուցիչս ո՛չ ունէր».

ԺԳ. Պատասխանի ետ յայնժամ Իսա և ասէ. «Յորժամ Ժողովուրդք ամենեքեան քուրմս, առաջնորդս և ուսուցիչս ո՛չ ունէին, օրէնք իսկ բնական

բաւէին կառավարել զնոսա, և այնու պահպանէին զպարզութիւն հոգւոց իւրեանց».

ԺԴ. «Զի հոգիք նոցա Տեառն իւրեանց էին նուիրեալ, և նոքա պէտս ոչ ունէին միջնորդի բարեխօսի առ Հայրն իւրեանց, միջանկութեամբ անանոյ կռայնոյ և կամ պաշտամամբ հրոյ և արեգական որոց զպաշտօն և զպաշտամունս վարէք դուք».

ԺԵ. «Դուք այնպէս հաւատալ կեղծէք թէ պարտ է եւ արդար զարեգակ և զհուր պաշտել և երկիրպագանել, իբրեւ ոգւոյ բարւոյ և չարի, ամեն ամեն ասեմ ձեզ, վարդապետութիւն ձեր անգոսնելի է՝ զի արեգակն և հուր ինքնին ո՛չ գործեն. և արեգակն գործէ ընդ կամօք Անտեսանելոյ Արարչին, որում զծնունդ նորին և զսկիդրն Նա ինքն է տուեալ և ստեղծագործեալ».

ԺԶ. «Նա է որ այնպէս կամեցաւ, զի աստղս այս մեծ լուսաւորեսցէ զօրն և զմիջօրէն, և զաշխատութիւն սերմանութեան ձեր բեղմնաւորեսցէ և զվաստակ մարդկան ջեռուցէ».

ԺԷ. «Զի Հոգին յաւիտենից է՝ ոգին ամենայնի որ զգորութիւն գերագոյն ունի և զկենդանութիւն, որում ինքն միայն կենագործէ, դուք մեղս մեծ գործէք կուտակելով և կրկնակ բաժին տալով Այնմ որպէս ՚ի հոգի բարւոյ և ՚ի հոգի չարի, քանզի անբաժանելի է Աստուած, և բաց ՚ի

միայնոյ բարւոյ Աստուծոյ չի՞ք այլօրէն Աստուած».

ԺԸ. «Որ, որպէս միօջ տան հայր՝ որ բարիս միայն ջամբէ որդւոց իւրոց, նոյնպէս ներէ նա ամենայն յանցանաց՝ յորժամ նոքա դառնան առ ինքն 'ի զեղջ ճշմարիտ».

ԺԹ. «Հոգին չար՝ յերեսս երկրի բնակի 'ի սրտի մարդկանց այնոցիկ որք մոլորեցուցանեն զորդիս Աստուծոյ 'ի ճանապարհէն և 'ի շաւղէ ճշմարտէ».

Ի. «Յաղագս այսորիկ ասեմ' ես ձեզ. դուք երկերուք վասն ձեր զօրն դատաստանի, զի անշուշտ պատուհաս ահռելի արկանելոց է Տէր Աստուած առ այնոսիկ ամենեսին որք մոլորեցուցին զորդիս իւր 'ի բարւոյ ճանապարհէն ճշմարտութեան, և այսպիսի աւելորդապաշտութեամբք և սնապաշտութեամբք լցուցին զնոսա».

ԻԱ. «Եւ առ այնոսիկ որ զաչս տեսանալաց կուրացուցին և վարակումն վատթար փոխարկին ընդ քաջողջս, և նոցա ուսուցին պաշտամունս այնպիսի իրաց և առարկայից, զորս Տէր Աստուած արդէն հպատակեալ և ենթարկեալ էր մտրդկան վասն բարեաց նոցա և յաղագս օգտակարութեան 'ի վաստակս նոցա».

ԻԲ. «Ահաւասիկ որպիսի պտուղ մոլորութեան են ծեսք և վարդապետութիւնք ձեր. քանզի փոխանակ մերձեցուցանելոյ զանձինս ձեր առ Աստ-

ուածն ճշմարիտ աստուածս սուտս և խաբեպատիրս յօրինեալ է ձեր».

ԻԳ. Յորժամ նոքա լուան զբանս Նորա զայսոսիկ, եղին մոգքն 'ի մտի՝ նմա թէեւ անձամբ ո'չինչ չար առնել, այլ 'ի գիշերայն, յորժամ երկիրն ամենայն 'ի քուն էր և 'ի նինջ հանգչէր ամենեքին, արտաքս ածին զնա 'ի պարսպաց քաղաքին և լքին զնա ընդարձակ առ պողոտային մեծի, որով յուսային նոքա նմա ո'չ երկարիլ ճարակ լինիլ վայրի գազանաց կատաղեաց.

ԻԴ. Իսկ նա ինքն իսա սուրբ, որ պաշտպանեալ էր 'ի Տեառնէ Աստուծոյ, զուղի իւր շարունակէր առանց ո' և է պատահարի.



Ը.

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԻՍԱԻ

ՅԵՐԿԻՐՆ ԻՍՐԱԷԼԱՅԻՈՅ

Ի ՀԱՅՐԵՆԻՍ ԻԻՐ

Ա. Արդարն իսա զոր Արարիչ մեր ընտրեալ
և առաքեալ էր առ 'ի ծանուցանել և յուշածել
մարդկան զԱստուածն ճշմարիտ որր յապականու-
թիւն և յաղտեղութիւնս կային ընկղմեալ, էր 'ի
հասակի լիուլի քսան և ինն ամաց յորժամ ժա-
մանէր նա յերկիրն Իսրայէլացւոց .

Բ. Եւ քանզի յօրէ անտի մեկնելոյ իսաի յիս-
րաէլէ առաւելագոյն անողոք տառապանաց են-
թարկեալ էին հեթանոսաց զազգն Իսրաէլացւոց,
և Իսրաէլացիքն յայնժամ գտանէին 'ի մեծագոյն
յուսաբեկութիւն մատնեալ .

Գ. Եւ բազումք 'ի նոցանէ արդէն սկիզբն
արարեալ էին լքանելոյ զօրէնս Տեառն իւրեանց

և զՄօսաի զկտակս, յուսալով այնու՝ զսիրտ հա-
րըստահարչաց իւրեանց և յաղթահարչացն կա-
տաղեաց մեղմ և ամաք առնել .

Դ. Եւ տեսեալ Իսաի զայսոսիկ իրողութիւնս,
եկն նա յորդորել զհայրենակիցս իւր, և խրա-
տել նոցա զանձինս իւրեանց մի՛ երբէք մատնել
'ի յուսահատութիւն, ուխտելով նոցա և ասելով
թէ՝ մերձ էր ժամանակ և օր քառութեան մեղաց
նոցա, և նա կամէր առ ինքն վերահաստատել
զհաւատս նոցա, զոր նորա 'ի նախնումս առ Տէր
Աստուած մեծ նախահարցն իւրեանց ունէին .

Ե. «Որդեակք իմ», ասէր Հայրն երկնաւոր
'ի բերանոյ արդարոյն Իսաի. «զանձինս ձեր մի՛
մատնէք ամենեւին 'ի յուսաբեկութիւն, քանզի
ձայնից ձերոց լուայ ես և աղաղակք ձեր հասին
յունկն իմ» .

Զ. «Մի՛ այլ եւս արտասուէք դուք, ամե-
նասիրեցեալք իմ, զի հառաչանք և հեծեծանք ձեր
այժմէն իսկ շարժեցին զսիրտ Հօր ձեր, և Հայրն
ձեր այժմէն իսկ թողեալ և ներեալ է ձեզ, որ-
պէս նա թողեալ և ներեալ էր նախահարց ձեր» .

Է. «Մի՛ լքանէք դուք զտուն ձեր և զըն-
տանիս ձեր, և զանձինս ձեր մի՛ թափառէք և
թաթախէք 'ի շուայտութիւն և 'ի ջնաթիւն, և
մի՛ կորուսանէք դուք զօրրութիւն և զազնուու-
թիւն զգաժմանց ձերոց և զգայարանաց, նամա-

նաւանդ մի՛ երբէք երկիրպտագանէք դուք կուոյ, որք համր են ձայնից ձերոց» .

Ը. «Ձտաճարս իմ պայծառացուցէք, և առատապէս ճոխացուցէք զայնոսիկ՝ ի համբերատարութեամբ և յուսով ձերով, եւ մի՛ բնաւին ուրանաք զհաւատս նախահարց ձեր զի ես ինքս առաջնորդեցի միայն նախահարց ձեր և լցուցի զնոսա ամենայն բարեօք» .

Թ. «Ի վեր համբարձէք զայնոսիկ եւ սատարեցէք նոցա որք անկեալ են, կերակրեցէք զայնոսիկ որք քաղցեալ են, եւ ՚ի տես եւ յայց ելէք եւ օգնեցէք հիւանդաց, որպէս զի սուրբք եւ արդարք լինիլիք յաւուրն դատաստանի վերջնոյ որ վասն ձեր պատրաստեալ է իմ եւ վասն ձեր հանդերձեալ» .

Ժ. Իսրաէլացիքն մեծաւ բաղմութեամբ ընդ առաջ ելեալ զհետ գնային բանիցն Իսաի եւ նմա հարցանէին, թէ ո՞ւր էր մարթ նոցա աղօթել եւ գոհաբանել զհայրն երկնաւոր, քանզի առճարք իւրեանց ամենայն քանդեալ քայքայեալ էին ՚ի հիմանց ձեռօք ոսոխայն եւ թշնամեաց, եւ առնօթք իւրեանց սրբանուէրք գողացեալ էին ձեռօք պղծօք նոցա» .

ԺԱ. Պատասխանի ետ Իսա ցնոսա եւ ասէ. «Ո՛չ այնքան հայի Տէր Աստուած ՚ի տաճարս ձեռակերտս մարդկան, այլ նա անդէն ունկն դնէ

սրտից ձերոց մարդկայնոց որք են ճշմարիտ եւ ուղիղ տաճարք Տեառն Աստուծոյ»,

ԺԲ. «Վասն որոյ իւրաքանչիւր որ ՚ի ձենջ մտցէ յիւրում ՚ի տաճարի, ՚ի սիրա իսկ իւր, որ է իսկ եւ իսկ տաճար ճշմարիտ ձեր, պայծառ եւ լուսապանծ արարէք զսիրտս ձեր խորհրդովք բարեաց եւ համբերատարութեամբ ձեր, եւ լցէք զայնոսիկ անայլայլելի եւ անյողգողգ վստահութեամբ զոր դուք ամենեքին պարտիք լիովին ունիլ առ Հայրն ձեր երկնաւոր» .

ԺԳ. «Եւ ակունք ձեր եւ ձեռք ձեր լիցին ձեր անօթք սրբանուէրք, որովք արարէք դուք միայն զոր ինչ Տեառն Աստուծոյ ձեր հաճելի է, եւ առ նա միայն հայեցարար, զի զբարիս առնելով ընկերաց ձերոց նմանեաց, հանդէսս եւ պաշտամունս մեծ կատարէք դուք որք պայծառ առնեն եւ գեղեցկացուցանեն զտաճարն այն յորում նա բնակի, ի սիրտս ձեր, որ զկեանս ձեր տուեալ է ձեզ» .


ԺԴ. «Քանզի Տէր Աստուած ՚ի նմանութիւն իւր արար զձեզ, անմեղունակս, սուրբս հոգւով, առատագուծս ՚ի բարիս, եւ ո՛չ բնաւին սահմանեալ ՚ի յղացումն խորհրդոց չարեաց, այլ հանդիսանալ սրբալայր ճշմարտութեան եւ սիրոյ» .

ԺԵ. «Վասն որոյ արդ պատուիրեմ ես ձեզ մի՛ բնաւ աղտեղել զսիրտս ձեր, քանզի ամեն ամեն

ասեմ ձեզ, արդարեւ անդ բնակի հանապազօրէն
յաւիտենից».

ԺԶ. «Եւ յորժամ դուք գործս բարիս գործել
կամենաք սիրոյ եւ աստուածպաշտութեան, ցնծու-
թեամբ եւ ամենայն գոհունակութեամբ սրտի կա-
տարեցէք դուք զայնոսիկ, եւ գործք ձեր բարիք մի
լիցին զրդմամբ աշխարհիկ շահու կամ առեւտրային
շահադիտութեան ակնկալութեամբ».

ԺԷ. Զի արարք այդպիսիք ո՛չ առաջնորդեն
զձեզ բնաւ նշանախեց մի մերձ առ փրկութիւն, եւ
բարք ձեր յայնժամ անկանին յապականութիւն
անկանոն՝ յոյժ յոյժ, յորում կեղծել՝ ստել՝ գո-
ղանալ՝ եւ սպանանել իսկ առ երեւոյթս որպէս
գործս բարեմոյնս թուեսցին առ ձեզ».



ՅԱՂԱԳՍ ՇԱՐՈՒՆԱԿ ՔԱՐՈՋՈՒԹԵԱՆՑ

ՍՐՏԱՊԵՂԱԿԱՆԱՅ ԻՍԱԻ ՅԵՐԿՐԻՆ

ԻՍՐԱԷԼԱՅԻՈՅ ԵՒ ՄՏԻՅ

ԵՒ ԳԱԼՍՏԵԱՆ ՆՈՐԱ

ՅԵՐՈՒՍԱԴԷՄ

Ա. Սուրբն Իսա ընթանայր այսպէս՝ ի քաղաքս
քաղաքս ոգեւորել եւ բանիւ Տեառն վերահաստա-
տել եւ սրտապնդել զխրաշէլացիս, որք յայնմ
պահու լիովին գտանէին մերձ ընկճիլ ընդ ծանրա-
կշիռ յուսահատութեամբ, վասն որոյ հաղարք եւ
բիւրք զքաջալերութիւն վերստանային եւ զհետ
նորա գնային ունկն դնել եւ լսել բանից նորա.

Բ. Իսկ պետք եւ գլխաւորք քաղաքացն սկսան
երկնչիլ յոյժ, վասն որոյ փութացան նորա ծանու-
ցանել մեծի կառավարչին՝ հրամանատարին պաշ-
տօնակալի, որոյ բնակութիւնն էր յերուսաղէմ,

Թէ այր ոմն Իսա անուն եկեալ էր յերկիրն, եւ բանիւք քարոզութեանցն իւրոց յարուցանէր զժողովուրդն ամենայն ընդդէմ իշխանութեանց տեղւոյն, եւ ամբոխն ունկն դնէր Նմա սերտիւ, եւ զգործս եւ զաշխատութիւնս արքունի լքանէր, զի Նա՝ նաեւ յաւելուր Թէ յետ սակաւ ինչ ժամու եւ ժամանակի զերծուցանելոց եւ փրկելոց է Նա զերկիրն ՚ի ձեռաց կառավարչացն օտարամտից բռնակալաց.

Գ. Յայնժամ հրամանատարն Երուսաղէմի Պիղատոս հրաման ետ ձերբակալել զանձն քարոզչին Իսաի, եւ զՆա ՚ի ներքս ածել ՚ի մէջ քաղաքին, եւ անդ առաջի ածել զՆա դատաւորաց, ռակայն առ ՚ի չ'յարուցանել ՚ի ժողովրդեան գրգիռ տհաճութեան, Պիղատոս յանձն արար զդատաստան Նորա իմաստնոց ծերոց եւ քահանայապետից Երալայեցւոց կատարել ՚ի մէջ տաճարին իւրեանց.

Դ. Մինչ այս մինչ այն Իսա անընդհատ շարունակէր քարոզել զբանս իւր, եւ այժմէն իսկ ինքնին ժամանէր յԵրուսաղէմ, եւ լուեալ ամենայն բնակչաց քաղաքին զգալուստ Նորա, որոյ հասեալ էր արգէն առ Նոսա համբաւն մեծ, ընդ առաջ ելին Նորա ողջունել զՆա».

Ե. Եւ պատուովք մեծամեծօք եւ յարգանքօք ողջունեցին զՆա, եւ զգործնս տաճարին իւրեանց բացին առաջի Նորա, չի յիւրմէ իսկ բերանոյ փա-

փաքէին նոքա լսել զոր ինչ Նա յայլ քաղաքս Իսրաէլի էր քարոզեալ(*).

Ձ. Յայնժամ խօսեցաւ Իսա առ Նոսա քարոզայսպէս. «Յեղն մարդկային ՚ի կորուստ մատնի յազագս նուաղելոյն ՚ի հաւատոցն, եւ խաւար եւ մրրիկ զերամակս մարդկան մալորեցուլին կորուսանելով զհովիւ իւրեանց».

Ի. «Իսկ մրրիկ և խաւար ո՛չ երկարէ հանապաղ և ո՛չ մնայ յաւետ, և ո՛չ կարէ այն ծածկել զլոյս յաւիտենական. վաղվաղակի պայծառանան Երկինք, և լոյսն Երկնաւոր զճառագայթս իւր սփռէ ՚ի սփիւռ յաշխարհամենայն, և ոչխարք մոլորեալք յետս գարձցին և ժողովեացին առ հովիւն իւրեանց».

(*) Եւ բազումք ժողովուրդք զհանդերձս իւրեանց տարածեցին ՚ի ճանապարհին, և ժողովուրդքն որք առաջի և զինի երթային, աղաղակէին և ասէին, «Օրհնութիւն որդոյ Դաւթի, օրհնեալ որ զայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս» և ՚ի մտանելն Նորա յԵրուսաղէմ, զղրկեցաւ քաղաքն ամենայն և ասէ. «Ո՛վ իցէ սա». և ժողովուրդքն ասին. «Սա է մարգարէն Յիսուս, որ ՚ի Նազարէթէ Գալիլեացւոց». և և եմուտ Յիսուս ՚ի տաճարն ևն. ևն. (21 Մատթ. 8 ց 12). Ինդիր է սակայն թէ այս դէպք իցէ համապատասխան նմանօրինակ զիպաց վերագրելոյ զԳալստենէ Նորա զի սա պատահի տեղի ունիլ յամին լրման քսանեւիններորդին Նորա յետ բազումամօք ուղեւորութեանց Նորա առ Իսրաէլացիս, իսկ միւսն պատահի տեղի ունիլ յերեսներորդի երրորդի ամին Նորա ՚ի ժամանակի և հուսկ յետ կատարմանց իւրոց հրաշագործութեանց անմիջաբար նախ քան ողբալի վախճանի Նորա.

Ը. «Այլ դուք մի՛ փութայք դնալ զհետ ուղ-
ւոյն ճանապարհի լայնի՝ ի խաւարի, յորում
փտանդ և երկիւղ և ահ մեծ և հաւաոր գոյ գլո-
րիլ անդ յանդուռդ, իսկ պահպանելով և խնամե-
լով զիրեարս զամենայն զգորութիւն ձեր ամփոփ ու-
րարէք դուք, և զամենայն զփտահոութիւն ձեր վե-
րահաստատեցէք առ Տէր Աստուած ձեր, ալն ու-
նելով համբերութեամբ և սպասելով երեւման
Լուսոյ մեծի նախնւոյ».

Թ. «Զի որ զերդակից իւր հոգայ, խնամէ և
պահպանէ զանձն իւր, և որ տան իւրում և ըն-
տանեաց իւրոց պահապան և պաշտպան հաւա-
տարիմ կայ, զժողովուրդն ամենայն և զերկիրն
ամենայն պահպանէ և փրկէ»:

Ժ. «Բանզի ահաւասիկ ամեն ամեն ասեմ
ձեզ, մերձէ օրն և ժամն յորում դուք ամենե-
քին փրկելոց էք ի խաւարէն և յաղջամղէն, և
յայնժամ դուք ամենեքին հաւաքեսջիք և վերստին
'ի մի տուն ձեր և 'ի մի ընտանիք միասջիք և
թշնամիք ձեր ահիւ հայցէն մեծաւ դողաս, որք զպար-
գեւս Տեառն Աստուծոյ ձեր և զշնորհս մոռացան
և անգիտացան առ ձեռք».

ԺԱ. Ծերունիք և քահանայապետք որք լսէին
և ունկն դնէին նմա զմայլէին յոյժ զլեզուէ նորա,
և հարցանէին նմա թէ կամէ՞ր նա և ճշմարիտ էր
իրօք փորձել նորա զփորձ յարուցանելոյ զժողո-

վուրդն ամենայն ընդդէմ իշխանապետութեան
երկրին, որպիսի լուր և ազդե եկեալ էր արդէն
առ հրամանատարն Պիղատոս».

ԺԲ. Պատասխանի ետ նոցա Իսա և ասէ.
«Առ ի՞նչ պարտ իցէ յառնել ընդդէմ արանց մո-
լորելոց, զորոց արդէն աղջամուղջ և խաւար զդուռն
և զճանապարհ ծածկեալ է ամենայնիւ. ես
միայն զտառապեալս յորդորեմ՝ և խրատեմ, զո-
րոյ զնոյն և զհանգոյն կատարեմ՝ ի տաճարիս
յայսմիկ, զգուշանալ յառաջխաղալոյ և զնալոյ
զհետ ճանապարհի նոցա մթութեան, զի վիհք
մեծք գտանին ընդ գարշապարանօք նոցա».

ԺԳ. «Իշխանութիւն երկրային երկար ո՛չ
կարէ կալ և տոկալ, զի լազմապիսի փոփոխու-
թեանց ենթակայ է այն արդէն, վասն որոյ ո՛չինչ
օգտի ըմբոստանալ ընդդէմ՝ այնորիկ, զի իշխա-
նութիւնն յաջորդէ իշխանութեան, և այս այսպէս
խապառ պատահեսցի ցվախճան կենցաղի մարդ-
կայնոյ».

ԺԴ. «Իսկ դուք ո՛չ տեսանէք զողի ըմբոս-
տութեան, զոր փարթամք և մեծատունք զօրա-
ւորք և մեծամեծք սերմանեն ի մէջ որդւոցն Իս-
րայէլի ընդդէմ զօրութեան և իշխանութեան յա-
ւիտենից որ յերկինս է».

ԺԵ. Յայնժամ ծերունիքն հարցանէին. «Իսկ
ո՞վ ես դու և ո՞ւստի դուս դու այսպէս առ մեզ,

զի հաղիւ լուեալ է մեր յառաջնմէ բան զանձնէ քումմէ, անուանդ քում ճշգրտի իսկ գտանելով անգիտակ».

ԺԶ. «յիսրաէլէ եմ ես». ասէ ցնոսա Իսա. «Զպարիսպս Երուսաղէմի տեսեալ է իմ յօրէ անտի ծննդեան իմոյ, և լուեալ անդ զհեծեծանս եղբարց իմոց, որք ընդ գերութեամբ էին անդ ընկձեալ, և զհառչանս քերց իմոց, որք 'ի հեթանոսաց էին առեւանգեալ».

ԺԷ. «Ընդ որ և հոգի իմ տրտմեալ էր և այնքան առաւել սրտաբեկ, յորժամ տեսանէի ես նաեւ զեղբարս իմ մուսանալ զՏէր Աստուած ճշմարիտ, 'ի պատանեկութեան իմում թողի ես զառն Հօր իմոյ և հեռացայ և չոգայ զկենցաղ իմ հաստատել վասն որոյ 'ի մէջ այլոց աղգաց».

ԺԸ. «Իսկ ապա իմ լուեալ զեւս առաւել յաւելումն մեծի տառապանաց եղբարց իմոց, վերադարձայ անդրէն յերկիր և 'ի տուն նախահարց իմոց, եղբարց իմոց 'ի յուշ ածել զհաւատս նախնեաց մերոց և քարոզել և ուսուցանել նոցա զհամբերատարութիւն յերկրի աստ, առ 'ի ժառանգել անդ զերկնից արքայութիւն և զկատարեալ և զվսեմ երանութիւն».

ԺԹ. Իսկ ծերունիքն իմաստունը հարցանէին նմա նաեւ վերստին զհարցս զայս. «Մեզ հաւատտէին և ասէին թէ դու ուրանաս և դրժես զօ-

րէնս Մօսաի, և խրատես և ուսուցանես դու ժողովրդեան զտաճար Տեառն լքանել».

Ի. Պատասխանի ետ Իսա և ասէ. «Ո՛չ ումեք մարթինչ է լուծանել և լքանել զոր ինչ 'ի Հօրէ մերմէ երկնաւորէ սահմանեալ է մեզ, 'ի բաց առեալ զայնոսիկ սակայն զորս մեղապարտք եղծեցին և աւերեցին, վասն այսորիկ եկի ես խրատել և աղդարարել զգուշանալ յամենայն եղծմանէ սրտի մարդկան և սրբել և մաքրել զայն յամենայն ապականութենէ և աղտեղութենէ, զի սիրտն է ճշմարիտ տաճար Աստուծոյ».

ԻԱ. «Եւ ես ջանադիր իսկ գտանիմ 'ի սիրտս մարդկան վերահաստատել զօրէնս Մօսաի ցուցանելով նոցա միայն թէ նոքա զօրինացն զճշգրիտ միտս և զոգի ուղիղ ո՛չ իմանային, յայսմիկ յանչափս վրիպեալ նոցա յոգւոյն օրինաց թէ, այնոքիկ ո՛չ կամին զանողր զվրէժխնդրութիւն, այլ պարտին նոքա զներողութիւն 'ի կիրարկանել և մեկնել զայնոսիկ այլօրէն՝ եղծանէ զօրէնս».



ՅԱՂԱԳՍ ԲԱՐԵՆՍՈՍՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՑ

ԶԻՍԱԷ ԱՌ ՊԻՂԱՏՈՍ ԵՒ ՅԱՐԱՏԵՒ

ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԲԱՆԻՑ

ՆՈՐԱ ԱՌ ԻՍՐԱԷԼԱՅԻՍ

Ա. Լուեալ այսպէս զբանս Իսաի ծերոցն ի մաստնոց և քահանայապետից խորհուրդ կալան 'ի միջի իւրեանց ո'չ դատապարտել զնա, զի նա ո'չ ումեք առնէր չար ինչ, և առաջի ելեալ նոցա Պիղատոսի, որ 'ի Կեսարէն և յարքայէ հեթանոսաց երկրին Ռոմէլոսի հրամանատար էր կարգեալ Երուսաղէմի, և նոցա այսպէս էր արկեալ բանս ընդ նմա.

Բ. «Տեսաք մեք զայրն այն զորմէ ամբաստանութիւն յարուցեալ է քեզ իբրեւ մի ոմն գրգռիչ ժողովրդեան մեր յապստամբութիւն, մեք

ծանեաք զնա հայրենակից մեր և զբանս քարոզութեան Նորա լուսք».

Գ. «Զրոյցս սուտս և խաբեպատիրս ուղղեալ երեւին առ քեզ պետք և գլխաւորք քաղաքաց, զի մեք ամենեքին տեսանեմք թէ այրն այն ճշմարիտ է և արդար, որ միայն ուսուցանէ և քարոզէ ժողովրդեան զբան Տեսառն, վասն որոյ յետ հարցափորձի և հարցաքննութեան Նորա այսպէս, թողաք մեք նմա գնալ խաղաղութեամբ».

Դ. Իսկ հրամանատարն՝ զայս լուեալ ցասեալ բուռն կատաղութեամբ, և իսկոյն սպասաւորս ծպտեալս առաքեաց զհետ Իսաի լրտեսել զամենայն արարս Նորա, և լիովին հաղորդել իշխանութեանցն զամենայն զբանս, զոր նա խօսէր և ուղղէր առ ժողովուրդն.

Ե. Իսկ Սուրբն Իսա շարունակէր զայցս իւր առ շրջակայս քաղաքին, և յարատեւ քարոզէր անդ զԱրարչին մերոյ զճանապարհ ճշմարիտ, յորդորելով անդ զԻսրաէլացիս լինիլ համբերատար, և խոստանալով նոցա վաղվադակի զփրկութիւն.

Զ. «Եւ ուր գնայր նա՛ զամենայն աւուրս, զկնի Նորա երթային ամենուրեք բազումք 'ի ժողովրդեանէն, և բազումք 'ի նոցանէ ո'չ թողուին զնա և ընդ նմա ընկերանային իբրեւ աշակերտս և սպասաւորս».

Է. Եւ Իսա քարոզէր առ նոսա և ասէր. «Հաւատս մի՛ ընծայէք հրաշից գործելոց ձեռօք մարդկան, քան զի նմա միայն տուեալ է կատարել և առնել արարս գերբնականս, որ է միակ տէրն կատարեալ ընութեան, զի մարդ արարած ո՛չ կարէ կասուցանել իսկ զսաստկութիւն հողմոց և ո՛չ իսկ հայթայթել և սիրել անձրեւ».

Ը. «Այլ 'ի վերայ այսր ամենայնի լիով անկեղծաւոր հաւատով՝ մարդկան կարելի է հրաշագործութիւն արմատախիլ առնելոյ 'ի սրտէ իւրմէ զամենայն զխորհուրդս չար, և չընթանալ 'ի ճանապարհս անօրինութեան և անիրաւութեան հետապնդութեամբ ձեռնածութեան անօրէն նպատակակետից իւրոց».

Թ. «Եւ ամենայն արարք զորս նորա առնեն առանց Աստուծոյ, մոլորութիւնք են մեծամեծք, և են հմայք և հրապուրանք, որք միայն զվիճակ վատթար ոգւոյն տյնոցիկ ապացուցանեն, որք արուեստս պիղծս, լկտիս և խաբեպատիրս 'ի կիրարկանեն».

Ժ. «Նաեւ մի՛ հաւատայք դուք գուշակաց պատգամաց, զի Տէր Աստուած ինքն գիտէ միայն զոր ինչ հանդերձեալ է և զոր ինչ գալոց է, նոքա որք գուշակաց դիմեն զգմանէ զտաճար իւրեանց պղծեն որ է սիրտ նոցա, և այնու ապացուցանեն զիւրեանց զգրաւութիւն 'ի հաւատոց և

զգրկութիւն նոցա 'ի կատարեալ վստահութենէ հանդէպ մեծի Արարչին».

ԺԱ. «Զի հաւատով գուշակաց պատգամաց քանդէ քայքայէ և ապականէ զպարզութիւն և զընդոծին սրբութիւն մարդկան, և զմանկական անարատութիւն նորա սրտին, և փոխանակ՝ զօրութիւն Սաղաէլի տիրապետէ 'ի նմա որ բռնադատէ զնա գործել զամենայն զչարիս, կոոց զպաշտամունս կատարելով և երկիրպագանելով նոցա».

ԺԲ. «Զի Տէր Աստուած մեր, որոյ չի՛ք որ հաւասար, մի է ամենագէտ, ամենակարող և ամենուրեք, նա ինքն միայն է որ ունի զիմաստութիւն ամենայն և զլուսաւորութիւն բացարձակ».

ԺԳ. «Դուք միայն նմա ունիք դիմել յազգս մխիթարութեան 'ի մէջ տառապանաց և ցաւոց ձեր, յազգս օգնականութեան յաշխատութիւնս և 'ի վստակս ձեր, և յազգս բժշկութեան հիւանդաց ձեր, որ նմա դիմէ 'ի նմանէ ո՛չ մերժի».

ԺԴ. «Զի Աստուած միայն ունի 'ի ձեռս իւր զգաղտնիս ընութեան և զծածուկս, զի նախ քան իսկ զգոյութիւն և երեւումն աշխարհի, այնորիկ 'ի միջի էին 'ի խորս աստուածային խորհրդոց և զիտաւորութեանց նորա, և աշխարհ գոյացաւ

կամօքն Ամենարարձրելոյն, և յայնժամ ամենայն նիւթ եղև տեսանելի».

ԺԵ. «Դուք պարտիք որպէս մանկտիք միա-
միտ լինիլ յորժամ դիմէք դուք Նմա, զի անծա-
նօթ են ձեզ և անգէտք թէ անցեալն և ամենայն
կատարեալն, թէ ներկայն իսկ, և թէ ապագայն,
և միայն Աստուած է Տէր ժամանակաց և Տէր
զաղտենայ (*)».



(*) Այս վարդապետութիւն իսաի վասն միամտութեան մարդկան և համակերպութեան որպէս մանկտիք, և զգիտութենէ հանդերձելոց յայտարարեալ երեւի նաեւ ծանօթ բանիւքն զոր Յիսուս խօսեցաւ նոյնինքն ընդ Նիկողիմիայ այսպէս. «Եւ էր այր մի 'ի Փարիսեցւոց Նիկողիմոս անուն նորա, իշխան Հրէից, որ եկն առ նա 'ի գիշերի և ասէ ցնա. «Թաբբի, զիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ, զի ո՛չ ոք կարէ զայդ նշանս անել, զոր դուդ առնես, եթէ ո՛չ Աստուած իցէ ընդ նմա». Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. «Ամեն ասեմ ձեզ, եթէ ո՛չ ոք ծնցի վերստին ո՛չ կարէ տեսանել զԱրքայութիւն Աստուծոյ». Ասէ ցնա Նիկողիմոս. «Զի ա՛րդ իցէ մարդ ծնանիլ՝ որ ծերն իցէ, միթէ մարմ ոցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանիլ». Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. «Ամեն ամեն ասեմ ձեզ, եթէ ո՛չ մի ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոց ո՛չ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ, զի ծնեալն 'ի մարմնոյ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ հոգիէ, զու մի՛ զարմանար թէ ասացի քեզ ծնանել վերստին, զի հոգմ որ շնչէ, և զձայն նորա լսես, այլ ո՛չ գիտես ուստի զոյ կամ յո՞ երթայ, այնպէս և ամենայն ծնեալն 'ի հոգւոյն (3 Յովհ. 198).

ՃԱՆՈՒՄ



ՅԱՂԱԳՍ 'Ի ՆԱՆԻՐ՝ ԽԱՔԿԱՆՍԻ ՓՈՐՁԵԼՈՅ

ԻՍԱԻ 'Ի ԾԱՌԱՅԻՅՆ ՊԻՂԱՏՈՍԻ, ԵՒ

ՅԱՂԱԳՍ ԲԱՆԻՑ ՆՈՐԱ ԶԿԻՆ

ՄՍՐԴ ՊԱՏՈՒԵԼՈՅ ԵՒ

ՅԱՐԴԵԼՈՅ

Ա. «Այր դու բարի», ասային Նմա սպասաւորք ծպտեալք հրամանատարին Երուսաղէմի. «Ասա՛ մեզ դու, պարտի՞մք կատարել զկամս Կայսեր, թէ սպասեցուք և ակնկալցուք մեր մերում մօտալուտ փրկութեան և աղատութեան».

Բ. Իսկ իսա, որ ճանաչէր թէ արքն այնորիկ որք զայս հարցանէին Նմա կարգեալք էին հետապնդելոյ զնա, պատասխանի ետ նսցաւ. «Իմ չէ քարոզեալ ձեզ այդպէս զաղատութենէ 'ի Կեսաւրէ, այլ հոգիք ձեր միայն ունին ընդունիլ զփրկ-

կութիւն որք 'ի մոլորութիւնս թաթախեալ
գտանին».

Գ. «Գիտասցիք դո՛ւք թէ, որպէս ո՛չ կարէ
տան միոյ և ընտանեաց՝ լինիլ առանց պետի
գլխաւորի, այսպէս նաև ոչ կարէ ժողովրդեան
զկարգ և զկանոն պահել առանց Կեսարի, որում
պարտիք դուք հնազանդիլ կուրօրէն, զի նա ինքն
ունի տալ համարս, և նա ինքն միայն է պատաս-
խանատու առաջի գերագոյն ատենին վասն ամե-
նայն գործոց իւրոց».

Դ. Իսկ լրտեսըն հարցանէին Նմա վերստին,
'ի մէջ արարածոց մահկանացւոց լաւագո՞յնն իցէ
միթէ Կեսար, և ո՞ւնի նա զիրաւունս աստուածա-
տուրս.

Ե. «Զի՛ք որ լաւագոյն 'ի միջի արարածոյ
մարդկայնոց, 'ի վերայ այսր ամենայնի արք նա-
խընտրեալք 'ի զօրութիւն պարտաւոր են խնամածու-
թեան տառապելոց, հիւանդայ, վշտաբեկաց որոց
կարգեալ է և պաշտօն յանձնարարեալ դարման
տանիլ առ այդ, որ պաշտօն տուեալ է նմա ընդ
սրբանուէր օրինօք 'ի Հօրէ մերմէ երկնաւորէ».

Զ. «Յորում արդարութիւն և պատշաճաւոր
ներողութիւն բարձրագոյն շնորհք են Կայսերաց
սահմանեալ, յորժամ նա զայնոսիկ կատարէ և կայ
և եթ ընդ այնոսիկ, յաւէտ երեւելի եղիցի անուն
նորա».

Է. «Իսկ նորա որք ընդ այսոսիկ զանցանեն
բեկանելով զայնս և այլօրէն ընթանալով անդր-
քան զսահման իշխանութեանն և զօրութեանն
զոր նորա ունին 'ի վերայ հպատակաց իւրեանց
և ստորակարգելոց, և զկեանս նոցա վտանգեն
յանցանս մեծ գործեն, և ցասուցանելով ցասուցա-
նեն զԴատաւորն մեծ, և զարժանապատուութիւն
իւրեանց նաեւ արատեն առաջի մարդկան, և 'ի
մէջ ժողովրդեան կարծիս և դատաստանս վատ-
թար գտանեն».

Ը. Յայսմ պահու կին ոմն տարէց որ եկեալ
մերձեցեալ էր յոյժ՝ առ Նա առ 'ի լսել զբանս
Նորա՝ լաւագոյնս, յետս մղեցաւ յումմինէ յա-
րանց ծպտանօք անդր եկելոց, ընդ առաջ կնոջն
ընթանալով.

Թ. Չայս տեսեալ Իսաի ասաց. «Զէ՛ արժան
և վայել ինչ որդւոյ՝ այդպէս յետս մղել զմայր
իւր, և ինքեան գրաւել զտեղի լաւագոյն վայել
ներա, և որ ո՛չ զմայր պատուէ, որ նուիրականա-
գոյնն է յէակաց յետ Տեառն Աստուծոյ, որդւոյ
անուան չէ՛ արժանի».

Ժ. «Ունկն դիք դուք ցոր ինչ յաղագս այսորիկ
ասեմ ձեզ, պատուեցէք ամենեքեան դուք և յամե-
նայնի յարգեցէք զկին արարած, որ է ծնող մեր
ամենեցուն և ծնող ամենայն աշխարհի և մայր, զի

աստուածային տուրք վերստեղծագործութեան հանգչի 'ի նմա».

ԺԱ. «Նէ է հիմն և վէմ ամենայն արարածոց և ամենայն դոյլոց, ամենայն ներկայի՝ բարոյ և գեղեցկի, մինչ նէ պատճառ է միանգամայն եւ մահու և կենաց, և նէ նմանապէս վերանորոգիչ ոսկրն է տակաւ մարդկային ցեղի, որ նաեւ 'ի բնէ պաշտպանն է և քաջալերիչն բարոյսնուէր՝ աշխատութեանց և վաստակոյ նորա».

ԺԲ. «Նէ է սր ցաւօրն ծնանի զձեր մանկտիս, և զձեզ ամենեւին ածէ յաշխարհ, և հսկէ բարգաւաճման ձեր, և խնամս ածէ ձերոց քրտանց զիմաց և ճակատի, և դուք ամենեքին նմա սրբաբան զօրեղագոյն անձկութիւն պատճառէք մինչեւ ցօրն մահու ներա. վասն որոյ պաշտեցէք և օրհնեցէք զնէ, զի պահապան անզուգական ձեր է նէ յերեսս երկրի և բարեկամ անմման».

ԺԳ. «Պատուեցէք և պաշտպանեցէք զնէ, զայս արարեալ դուք կատարելապէս գրաւէք զսիրտ ներա եւ դուք ամենեքին հաճելի լինիք առաջի Աստուծոյ Երկնաւորի, եւ վասն այսորիկ մեզք ձեր բազում Թողուցուն ձեզ լիավին».

ԺԴ. «Զկողակիցս ձեր սիրեցէք, եւ պատուեցէք եւ յարգեցէք նաեւ զնոսա, զի 'ի վաղիւ անդր նորա եղիցին մարք, եւ առ յապալս եղիցին մեծ մարք ամենայն աղփաց եւ աղանց».

ԺԵ. «Նոյնպէս եղերուք 'ի սիրտ մեղմք հանգչեալ ձերոց կողակցաց, զի գուրգուրալով եւ զնոսա սիրելով այսպէս, դուք իսկ լինիցիք ազնիւք եւ փափկասունք, եւ դժնդակ սիրտք ձեր լինին քաղցրացեալ, զի սէր այդպիսին աղղէ եւ տիրէ անասնոց, վայրենեաց եւ կենդանեաց սանձէ եւ դարձուցանէ և առնէ զնոսա որպէս գառլինս».

ԺԶ. «Զի մարք ձեր և կողակիցք ձեր գանձք անգինք եւ անգնահատելիք են ձեզ շնորհեալք 'ի վերուստ 'ի բարեխնամ Տեառնէ Աստուծոյ ձերմէ, նորա գեղեցկագոյն զարդք են եւ Թանկագինք յաշխարհ ամենայն, յորոց ամենեքին եւ ամենայն վերածնին յաշխարհիս յայսմիկ, և ամենայն բնակիչք յերեսս յերկրի».

ԺԷ. «Որպէս Տէր Աստուած պատերազմաց եւ բանակաց բաժանեաց եւ անջատեաց զլոյսն 'ի խաւարէն, եւ զերկիր յամաք 'ի ջրոյ, նոյնպէս եւ կանայք տուրս աստուածային ունին անջատելոյ եւ 'ի յայտ բերելոյ 'ի մարդիկ զլաւագոյնս 'ի խոհս եւ 'ի խորհուրդս նոցա, յայնցանէ արտաքսելով զվատթարսն».

ԺԸ. «Վասն այսորիկ ասեմ՝ ձեզ ես, յետ Տեառն Աստուծոյ լաւագոյն խոհք եւ խորհուրդք ձեր պարտին պատկանիլ, վերաբերիլ եւ վերնծայիլ առ կանայս եւ առ կողակիցս ձեր, յորս

մեծաւ հեշտանօք զերջանկութիւն կատարեալ գտջիք դուք».

ԺԹ. «Ի տաճարէ նոյա յայսմանէ քաղիցէք զբարոյանուէր զօրութիւն ձեր եւ զսիրտ քաղցր, զի անդ միռանայցէք զամենայն զտխրութիւնս սրտի ձեր. անդ դիւրասցին ձախողանք ձեր ամենայն, եւ դուք անդ վերստին գտանիջիք զգօրութիւն ձեր կորուսեալ, որում կարօտք գտանիք դուք 'ի պէտս օգնականութեան ընկերաց ձերոց նմանեաց».

Ի. «Մի՛ երբէք ենթարկէք դուք զնստա ընդ գծուծ դառնութեամբ եւ ընդ նուաստութեամբ, զի այդու անձինք ձեր իսկ նուաստանան, որով կորուսանէք դուք նաեւ զփափկասուն զգածմունս ձերոց գորովանաց եւ սիրոյ, առանց որոյ ո՛չինչ արժէ յայսմ աշխարհի կեալ».

ԻԱ. «Վասն որոյ վերստին ասեմ ես ձեզ, կողակցաց ձերոց պաշտպան կացէք, որպէս զի եւ նորա 'ի կարգ իւրեանց կացցեն պաշտպան անձանց ձերոց եւ համայն ընտանեաց ձերոց, զոր ինչ բարիս առնէք դուք առ մայր ձեր, առ կողակիցս ձեր, եւ առ այրի կին եւ կամ այլ կանայս օտարս իսկ՝ որք ի տառապանս կան եւ յանձկութեան, եղիցի այնպիսին որպէս, եւ իբր, [Թէ դուք զայնոսիկ կատարէք եւ առնէք առ նոյն ինքն Տէր Աստուած».

ԺԲ.

ՅԱՂԱԳՍ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԻՍԱԻ
ԵՒ ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԻ
ԵՒ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ
ՆՈՐԱ.

Ա. Սուրբն Իսա զամս երիս զայսպիսիս ուսուցանէր եւ քարոզէր ժողովրդեան Իսրաէլի յամենայն քաղաքս, 'ի գեօզս, 'ի պողոտայս, եւ 'ի դաշտս, եւ որ ինչ նա ասէր եւ առնէր, արդիւնս մեծամեծս ածէր, եւ կատարէին ամենայն ըստ ասացուածոց Նորա եւ ըստ գուշակութեանց Նորա.

Բ. Եւ սպասաւորք ծափեալք հրամանատարին Պիղատոսի նմա կային յար ակնդէտ եւ հետապնդէին զնա զօրն ամենայն եւ յամենայն պահու, իսկ ոչինչ էր լուեալ նոցա խօսիլ Նորա ըստ բանիցն, զորս գլխաւորք եւ զօրապետք քաղաքացն

վասն իսաի վերբերեալ ունէին զնմանէ 'ի սկըզբանէ».

Գ. Իսկ հրամանատարն Պիղատոս սակայն երկնէր յոյժ 'ի կարի իմն մեծէ ժողովրդականութենէ սրբոյն Իսաի, որ ըստ բանից ոսոխաց Նորա զժողովուրդն ամենայն՝ կամէր նա յարուցանել յապատամբութիւն եւ յըմբոստութիւն եւ զինքն արքայ հռչակել, ուստի եմուտ նա ընդ իւրաքանչիւրի լրտեսացն 'ի խորհուրդ զրպարտութեան զնմանէ.

Դ. Վասն որոյ ետ արտօնութիւն զինուորացն զնա ձերբակալել, որք նոյն ժամայն զնա արկին 'ի բանտ ստորերկրեայ, յորում պէս պէս չարչարանա տային նմա կրել, սեղմելով, պնդելով եւ նեղելով զնա ասել բան ինչ որով կարացեն նորա բռնաբար ամբաստանել զնա, եւ զայն առիթ դատապարտելոյ եւ զնա սպանանելոյ կալցեն.

Ե. Իսկ նա ամենայն համբերատարութեամբ կրէր հանդարտօրէն զչարչարանս իւր եւ զտառապանս յանուն Արարչին, զի խոհք եւ խորհուրդք Արդարոյն էին լիովին եղեալ 'ի վերայ փրկութեան եւ 'ի վերայ երանութեան եղբարց իւրոց միմիայն.

Զ. Իսկ սպասաւորքն Պիղատոսի զչարչարանս Նորա բաղմապատկէին եւ ածէին զնա 'ի վիճակ ծայրայեղ տկարութեան, եւ սակայն Տէր ընդ նմա էր, եւ զնա ո՛չ թողուր անդ մահու մեռանիլ.

Է. Լուեալ քահանայապետից մեծաց եւ իմաստնոց գլխաւորաց 'ի ծերակուտէն զանհարկի տառապանաց եւ զչարչարանացն Սրբոյն՝ յայնժամ աղերս արկին առ հրամանատարն Պիղատոս զազատութիւն պարգեւել Իսաի յաղագս մեծի Տօնին մերձաւորի.

Ը. Իսկ հրամանատարն մերժէր զայն բացարձակապէս, վասն որոյ աղերս արկին յայնժամ զդատաստան Նորա տեսանել առաջի ժողովոյ եւ առաջի ատենի հնոյ իւրեանց ծերակուտին որպէս զի նա ընկալցի կամ զիւր զդատապարտութիւն. կամ զարձակումն իւր ստացէ նա նախ քան զաւուրս մեծի Տօնին, որում հաւանեցաւ նա յայնժամ Պիղատոս.

Թ. Եւ կոչեաց նա 'ի վաղիւ առաւօտուն հրամանատարն մեծ, եւ առ ինքն հաւաքեաց զայլ հրամանատարս գլխաւորս եւ զքահանայապետս եւ զիմաստունս զծերունիս եւ զօրէնսգէտս ամենայն տեսանել զդատաստան Իսաի.

Ժ. Յայնժամ ածին զՍուրբն արտաքս 'ի նկուղէն եւ զետեղեցին եդին զնա բազմիւ առաջի հրամանատարին մեծի 'ի մէջ երկուց աւաղաց, զորոց նա յայնմ պահու կարգադրեալ ունէր զդատաստան ածել միանգամայն 'ի ցոյց ժողովրդեան, որպէս զի տեսցեն նորա թէ դատաս-

տանն այն մեծագորդը չէր մի միայն կալեալ վասն Իսաի.

ԺԱ. Պիղատոս ուղղեալ արդ զբան իւր առ Իսա ասէ. «Այր դու, ստո՞յգ է թէ զժողովուրդն և զբնակիչն ամենայն յարուցանես դու ընդդէմ մերոց իշխանութեանց և ըմբոստս առնես զնոսա, 'ի մօր քո ունելով զքեզ հռչակել, և անձինդ՝ գոլ արքայ Իսրաէլի».

ԺԲ. «Ո՛չ որ կարէ միայնով կամօք անձինն արքայ գոլ». պատասխանի ետ Իսա. »Եւ նորա որք ասեն թէ յարուցանեմ ես զժողովուրդն և ըմբոստս առնեմ զնոսա, պարզապէս ստեն. քանզի զարքայութենէ միայն երկնից խօսեցեալ է իմ, և ուսուցեալ է իմ նոցա միայն զարքայն երկնից պաշտել և նմա միայն երկիրպագանել».

ԺԳ. «Բանգիրդիք Իսրաէլի կորուսին զնախնի սրբութիւն ու զմաքրութիւն իւրեանց, և ես ասացի նոցա, եթէ ոչ դարձցեն նոքա և դիմեսցեն առ Տէր Աստուած իւրեանց, կործանեսցին նոքա ամենեքեան, և տաճարք նոցա 'ի սպառ քաղքայեսցին».

ԺԴ. Ես ուսուցի նոցա չ'անգիտանալ թէ երկրային իշխանութիւն հարկաւոր է յերկրի՝ պահել զկարդ և զկանոն, և ես ասացի նոցա. «Կալարուք զանձինս ձեր վիճակի ձերում համակերպեալ, և զկեանս ձեր վարեցէք որպէս սահ-

մանեալ է այն ձեզ և ճակատագրեալ, առանց զկարգապահութիւն հասարակաց վրդովելոյ, թախանձանօր յուչ ածի նոցա ես միայն զխռովութենէ և զամենայն անկարգութենէ, որք տիրէին 'ի հոգիս նոցա և 'ի սիրտ նոցա».

ԺԵ. «Եւ քանզի այս եղեւ մեծ այն աստիճան վասն որոյ Արքայն երկնաւոր զպատիժ սահմանեաց նոցա և զպատուհաս ջնջելոյ զթագաւորութիւնն յաղգէն, ուստի ասացի ես նոցա թէ նոքա պարտին համակերպել զանձինս իւրեանց ներկայ վիճակի կենցաղին իւրեանց, և Տէր Աստուած պահպանեսցէ և վարձատրեսցէ զնոսա զարքայութիւն երկնից նուիրելով նոցա».

ԺԶ. Յայսմ պահու առաջի ածին նոքա զայնոսիկ 'ի վկայիցն որք ունէին վկայութիւնս բանսարկութեան ածել ի վերայ նորա, և ոմն ի նոցանէ այսպէս վկայէր. «Դու չ'ասացե՞ր թէ թագաւորութիւն երկրային և իշխանութիւնք աշխարհային ոչինչ են բաղդատմամբ արքային որ հանդերձեալ էր վաղվաղակի փրկել զԻսրայէլացիս 'ի լծոյ հեթանոսաց».

ԺԷ. «Օրհնեալ լեր դու», ասէ Իսա, «որ այսպէս զիրաւունս և զարդարս խօսիս, արդարեւ Արքայն երկնաւոր մեծագոյն և հզօրագոյն և դեր 'ի վեր է քան զամենայն օրէնս երկրային, և

արքայութիւն Նորա գերազանցէ զամենայն զթա-
գաւորութիւնս յաշխարհիս յայսմիկ».

ԺԸ. «Եւ արդարեւ չէ հեռի ժամն, յորում
ազգն Իսրաէլացոց սրբեսցի մաքրեսցի և քաւես-
ցի ՚ի մեղաց, նախախնամութեամբ և կամօք Տեառն
Աստուծոյ, զի գրեալ և ասացեալ է թէ մարգա-
րէ ոմն նախակարապետ վաղվաղակի եկեսցէ աւե-
տել զփրկութիւն ժողովրդեանն, զամենեսին զնո-
սա միաբանելով և հաւաքելով ՚ի մի տուն ըն-
տանեկան».

ԺԹ. «Զայս առիթ լուեալ և կալեալ հրա-
մանատարին՝ զբան իւր ուզղեաց առ դատաւորսն.
«Իմանա՞ք դուք, զոր ինչ Իսրաէլացիդ այդ Իսա
ասէ, նա այդու խոստովանի զայն որովք բանիւք
նա ինքն ամբաստանեալ է, ուստի ձեզ միայն
մնայ այժմ զվճիռ ձեր արձակել և դատապար-
տել զնա ըստ տրամադրութեան օրինաց, և նմա
վճիռ մահու կարդալ».

Ի. «Ո՛չ կարեմք մեք այսպէս դատապարտել
զնա», ասեն քահանայապետքն և ծերունիք, «զի
դու ինքնին լսես թէ նա միայն ակնարկէ զար-
քայութենէ երկնից, և նա ոչինչ քարոզէ ժողո-
վրդեան զոր մարթ լիցի թարգմանել օրինազան-
ցութեամբ, և կամ ըմբոստութեամբ վկայաբանել».

ԻԱ. Յայնժամ ընդ առաջ կոչեաց հրամա-
նատարն զվկայն այն որ դրդմամբ Պիղատոսի

տեառն իւրոյ մատնել հանդերձեալ էր զԻսա-
եկն այրս այս ընդ առաջ, և ուզղեալ զբանս իւր
առ Իսա՝ ասէ. «Ո՞չ միթէ դու զքեզ կոչեցեր
արքայ Իսրաէլացոց, յորժամ խօսէիր դու զնմա-
նէ որ յերկինս թագաւորէր, ասելով թէ առաք-
եալ էր նա զքեզ պատրաստել զժողովուրդ
իւր».

ԻԲ. Զնա եւս օրհնեաց Իսա, և զայս պա-
տասխանի ետ նմա. «Եւ քեզ թողեալ լիցի այդ-
զի այդ ՚ի քէն չէ՛, զոր ինչ դու ասես». ապա
դառնալով և զբան իւր ուզղելով առ հրամանա-
տարն, ասաց նմա. «Ընդէ՞ր նուաստացուցանես
դու զարժանապատուութիւն քո և ծառայիցդ և
հպատակացդ ստորադասից քոց ուսուցանես ըզ-
կեանս վաստակիլ ստելով, քանզի դու առանց
զայդպիսին իսկ գործելոյ կարսդ ես և յինքենէ
քումմէ ունիս իշխանութիւն զչքմեղս և զանմեղս
դատապարտել».

ԻԴ. Բանք այսոքիկ հզօրագոյնս ցասուցին
զհրամանատարն, որ հրաման ետ անդէն և անդ
և զվճիռ արձակեաց դատապարտութեան մահու
Նորա, և փոխան Նորա արձակեաց զերկուս զաւա-
զակսն.

ԻԵ. Իսկ յայնժամ դատաւորացն վերստին
խորհուրդ կալեալ՝ պատասխանի ետուն նմա
և ասեն. «Մեք ո՛չ կամիմք ՚ի վերայ գլխոյ մեր

առնուլ զայս մեղս մեծամեծ զայրդ անմեղ
դատապարտելոյ, և փոխան՝ զաւաղական արձա-
կելոյ, որպիսի արար օրինաց մերոց հակառակ է».

Ին. «Վասն որոյ արիւն դորա եղիցի միայն
'ի գլուխ քոյին, եթէ հաճոյ է քեզ առնել որ-
պիսի են միայն կամք քոյին». Զայս ասացեալ
քահանայապետիցն և ծերունեացն զձեռս իւր-
եանց լուացին 'ի մի անօթ սրբանուէր, և անդէն
մեկնեցան աղաղակելով եւ ասելով. «Մեր ոչ
մնամք մեղսակից մահուան առնդ արդարոյ» (*).

(*) Իսկ վկայութիւն Սրբոց Աւետարանչաց և մեկնութիւն նոցա
այսպէս է. «Իսկ քահանայապետն և ամենայն ատենն խնդրէին
զսուտ վկայութիւն Յիսուսէ, զի սպանցեն զնա. և ո՛չ գտանէին 'ի
բազմաց սուտ վկայիցն մատուցելոց, յետոյ մատուցեալ երկու սուտ
վկայք ասէին թէ «Սա ասէր, կարող եմ քակել զտաճար Աստուծոյ և
զերիս աւուրս շինել». և յարուցեալ քահանայապետն ասէ ցնա. «Զտաճ
ինչ պատասխանի, զինչ դոքա ամբաստանեն զքէն». և Յիսուս լուռ
կայր, պատասխանի ետ քահանայապետն և ասէ ցնա. «Երդմնեցուցա-
նեմ զքեզ յԱսառած կենդանի, զի ասացես մեզ թէ դո՞ւ ես Բրիստոսն
որդի Աստուծոյ.» ասէ ցնա Յիսուս. «Դու ասացեր, բայց ասեմ ձեզ,
յայսմինտէ տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդաջմէ դօրութեանն և
եկեալ ընդ ամպս երկնից». Յայնժամ քահանայապետն պատառեաց
զհանդերձս իւր և ասէ. «Հայհոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ վկայք,
ահա արդ լուայք զհայհոյութիւն նորա, զի՞նչ հաճոյ է ձեզ». նորա պա-
տասխանի ետուն և ասեն. «Մահապարտ է.» Յայնժամ թրին ընդ եւ-

Ճ. Գ.

— 0000 —

ՅԱՂԱԳՍ ԽԱԶԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՂԵՏԱԼԻ ՎԱԽՃԱՆԷ
ՍՐԲՈՅՆ ԻՍԱԻ ԸՍՏ ՎԱՃԱՌՈՐԴԱՅ
ՈՒՂԵՑՈՐԱՅ ՅԱՅՆՄ ՊԱՀՈՒ
ԺԱՄԱՆԵԼՈՅ ԿՍՐԱԽԱՆՕՔ ՅԵ-
ԳԻՊՏՈՍԷ, ԵՒ ԼՐԱԲԵՐՈՒ-
ԹԵԱՆՑ ՅԵՐԿԻՆ
ԻՍՐԱԷԼԱՆՈՅ

«Եւ զինուորքն կալան զնա ըստ հրամանի
հրամանատարին և 'ի միասին զերկուս զաւաղական

րեսս Նորա և Կոփեցին զնա, և ոմանք ապտակեցին և ասեն. «Մար-
գարէաց մեզ Բրիստոսդ, ո՞վ է որ եհար զքեզ (26 Մատթ. 59 ց 68).

«Իբրեւ այդ եղեւ խորհուրդ արարին ամենայն քահանայապետք և
ծերք ժողովրդեան վասն Յասուսի սպանանել զնա, կապեցին զնա և
առին զնացին և ետուն 'ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորին.
(27 Մատթ. 1 և 2).

«Եւ ել առ նոսա Պիղատոս արտաքս, և ասէ. «Զի՞նչ չարախօսու-
թիւն մատուցանէք զառնէն այդմանէ». պատասխանի ետուն և ասեն
ցնա. «Եթէ չ'էր չարագործ այրն այն, ապա ո՛չ մատնէաք զնա քեզ».
«Ասէ ցնոսա Պիղատոս. «Առէք զնա դուք, և ըստ օրինաց ձերոց դա-

և ածին զնոսա 'ի տեղին չարչարանաց յորում վայր հանին զնոսա, և դամեցին զամենսին զնոսա

տեցեք»։ ասեն ցնա Հրեայք. «Մեզ ո՛չ է արժան սպանանել զոր»։ զի լցցի բանն Յիսուսի, զոր ասաց նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ։ Եմուտ միւս անգամ յապարանն Պիղատոս, կոչեաց զՅիսուս և ասէ ցնա. «Դու ես թագաւորն Հրէից»։ Պատասխանի ետ Յիսուս. «'ի բէ՞ն ասես զայդ, եթէ այլք ասացին բեզ վինէն»։ պատասխանի ետ Պիղատոս. «Միթէ ես հրեայ իցեմ, ազգն բո և բահանայպետք մատնեցին զբեզ ինձ. զի՞նչ զորեալ է բո»։ պատասխանի ետ Յիսուս. «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ, եթէ աշխարհէ աստի էր արքայութիւն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք զի մի՛ մատնեցայց հրէից, բայց արդ թագաւորութիւնն իմ չ'է աստի»։ Ասէ ցնա Պիղատոս. «Ապա թէ այդպէս իցէ թագաւոր ո՞նց ես դու»։ Պատասխանի ետ Յիսուս. «Դու ասես թէ թագաւոր իցեմ, բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, և 'ի յոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեան, ամենայն որ 'ի ճշմարտութեան է. լսէ բարբառոյ իմոյ»։ Ասէ ցնա Պիղատոս. «Զի՞նչ է ճշմարտութեան»։ զայս իբրեւ ասաց, դարձեալ առ Հրէայն և ասէ ցնոսա. «Ես և ոչ մի պատճառ գտանեմ 'ի նմա, բայց է ձեր սովորութիւն զի զմի որ արձակեցից ձեզ 'ի Զատիկս, արդ՝ կամի՞ր զի արձակեցից ձեզ զԹագաւորն Հրէից » Աղաղակէին ամենեքեան և ասացին. «Մի՛ զղա. այլ գրաբարբայ», և էր Բարբարայն այն աւագակ. Յայնժամ է առ Պիղատոս զՅիսուս և զան եհար ևն. ևն. (18 Յովն. 29 ց 40, և 19 Յովն. 1)։

Որպէս երեւի մեկնութիւնք Աւետարանչացն ամենայնիւ հակասական են յիշատակագրութեան Թիպէթականին, որք ուսուցանեն մեզ թէ Պիղատոս էր, որ առաւել եւս պաշտպան կայր Յիսուսի կամելով փրկել զնա, և թէ բահանայպետքն և ծերքն էին որք առաւելագոյնս պնդէին զնա մահապարտ կացուցանել և զայս ասեն զՊիղատոսէ. «Եւ տեսեալ Պիղատոսի թէ ո՛չինչ օգնէ. այլ առաւել խռովութիւն լինի, առեալ շուր լուաց զձեռն առաջի ժողովրդեան և ասէ. «Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտաւոքիք»։ պատասխանի ետ ամենայն ժողովուրդն և ասէ. «Արիւն դորա 'ի վերայ մեր և 'ի վերայ որդուց մերոց (27 Մատթ. 24 և 25) իսկ եթէ այս այսպէս էր ապա Պիղատոսի

'ի խաչ, զորս 'ի տեղւոյն անդ կանգնեալ եւ պատրաստեալ ունէին վասն նոցա (*)»։

Բ. Մարմինք Յիսուսի և երկուց աւազակացն զորն ամենայն թաղան անդ կախեալ արեւնաթոր ընդ հսկողութեամբ պահապան զօրաց, զի ժողովուրդն ամենայն շուրջ պատէր հեծեծանօք, և ծնողք խաչեցելոյն շուրջ զնովաւ արտասուէին եւ հառաչանօք աղօթէին.


Գ. 'ի մտանել տրեգական տառապանք իոսի դտին լիովին վախճան, կորուսանելով զհոգի և զմիտ, և ոգիաւն արգարոյ յայնմանէ պատեանէ

զի ո՞րդ հարկ հարցանել Հրէիցն՝ հեզնելով, և ասել. «Արդ, կամի՞ր զի արձակեցից զԹագաւորն հրէից»։ յորմէ բանէ ակներեւ երեւի թէ Պիղատոս երկդիմի կատարէր դեր, ինքն 'ի ներքուստ կամելով 'ի ձեռին ածել վերջնապէս զնպատակակէտ իւր՝ մահու դատապարտութեան Յիսուսի, միանգամայն զրդուելով յարտաբուստ զհրեայս տալ նոցա վճուել զդատապարտութիւն Նորա, որպէս զի իսրաէլացիքն ապա մի՛ 'ի ցասումն զրգոհեցին ընդդէմ նորա, քանզի իսրաէլացիքն իբրեւ որդի Յովսեփայ 'ի սերնդենէ Դաւթի, կամէին զնա ըմբռնել իբրեւ թագաւոր երկրաւոր, և ո՛չ իբրեւ առաքեալ երկնաւոր, որպէս զանձն իւր քարոզէր Յիսուս առ նոսա, և որով Պիղատոս զղայրոյթ նացա յարդէր զրգուել. իսկ եթէ ո՛չ այդպէս, զի ա՛րդ Պիղատոս ապա ետ գետնդել 'ի վերայ գլխոյ Իսաիին Յիսուսի զայս մահագոյծ յիշատակ վճուագիր խաչին «Յիսուս Քրիստոս, Թագաւոր Հրէից»։ եթէ ո՛չ այդու նա կամէր իւրօք զմեծագոյն յանցանս Նորա և զմահու դատապարտութիւն այդու ապացուցանել.

(*) Երեւի յայսմանէ թէ մասամբ իւրիք 'ի գոհունակութիւն դատաւորացն, Պիղատոս զերկուս եւս զաւագակնն ապա որոշեաց դատապարտել և զնոսա նաեւ մահու վճուել, և տալ զնոսին եւս 'ի խաչ հանել առ Իսաիւ 'ի ցոյց ժողովրդեան.

մարմնոյ ելանելով չոգաւ իսկոյն նոյնանալ խառնիլ և միանալ 'ի Տէր Աստուած Երկնաւոր (*).

Դ. Այսպէս վախճան գտանէր երկրային գոյութիւն երեւման Հոգւոյ յաւիտենականին՝ կերպարանօք և դիմօք մարդկան, որ այնու եկեալ էր փրկել զմեղաւորս խստասիրտս՝ զայոպիսի չարչարանս մեծամեծս կրելով յանձին.



ՅԱՂԱԳՍ ԹԱՂՄԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԻՍԱԻ

ԵՒ ԳՈՂԾՅ ՅԱՐԱՏԵՒԱԿԱՆԱՅ

ԱՇԱԿԵՐՏԱՅ ՆՈՐԱ.

Ա. Շարժեցաւ և դղրդեցաւ երկիր, և երկինք արտասուեցին, զի մեղք և ոճիր մեծ գործեցաւ յերկիրն Իսրաէլացւոց.

Բ. Զի չարչարեցին անդանօր, և սպանին անխնայ զճշմարտն զարդարն և զմեծն Իսա, ընդ որում Հոգին Սուրբ Տիեզերակալին և Ոգի Տեառն բնակէր.

Գ. Որ, իբրեւ պարզ մահկանացու ոմն մարմնացաւ, և էաւ զպատկեր մարդկան, առ 'ի բարերարել այնու մարդկայնոց, և դարձուցանել զայնոսիկ 'ի խորհրդօցն չարութեան և արմատախիլ առնել զայն 'ի սրտէ նոցա.

Դ. Եւ առ 'ի Հաստատել առ նոսա կեանս

(*) Ըստ հաւատոց Պուտոյականի, Պուտոյը որք վերին գերագոյն տնօրինութեամբ Բարա Պրահմային մեծի յերկիր առաքին, յորժամ մահու մեռանին զկենդանութիւն երկրային, կորուսանելով զհոգի և զմիտ, ոգիք այնոցիք իսկոյն գնան նոյնանալ, խառնիլ և միանալ 'ի Հոգին յաւիտենական, և նոքա զԻսա Սուրբ քսաներեքերորդ Պուտոյին առաքեալ յերկիր 'ի Բարա-Պրահմայէ մեծէ.

խաղաղութեան սիրոյ և բարութեան, քանզի մեղօք բազմօք վատթարացեալ էին նորա, և այնու զԱրարիչն մեծ զմին և զանբաժանելին 'ի յուշ նոցա ածել, որոյ ողորմութիւնն անչափ է և անսահման.

Ե. Յետ կատարելոյ Պիղատոսի զայս ամենայն՝ զահի հարեալ զորմէ ինչ գործեալ էր նորա, հրաման ետ զմարմին Սրբոյն առնուլ և տալ յանձնել զայն ազգականաց 'նորա, որք զնա թաղեցին մերձ առ տեղին չարչարանաց 'նորա, և բազմութիւն մեծ 'ի ժողովրդենէ եկն կալ յաղօթըս 'ի վերայ գերեզմանին, և զաշխարհ ամենայն լնոյր հեծեծանօքն և հառաչանօքն.

Զ. Եւ յետ երից աւուրոյ, առաքեաց հրամանատարն զգլխուսրսն իւր, առնուլ և գողանալ 'ի գիշերայն զմարմին Իսաի, և թաղել զայն այլուր, երկնչելով ամբօխին մի՛ յառնուլ, և յապտամբութիւն և յըմբոստութիւն ելանել (*).

(*) Դիտելի է աստ Թէ զրոյցս այս, զոր Պիղատոս տարածանէր զմարմնէ Իսաի, որպէս Թէ զողացեալ էր այն 'ի գիշերայն, որպէս զի այնու գաղափարաւ զնչեսցէ զլուր և զհոչակ Յարութեան նորա որպիսին մեկնէ Մատթէոս Աւետարանիչ, տարածեցաւ մինչ 'ի սահմանս աշխարհին Հնդկաց և անոր քան զաշխարհն զայն, և նորա երեւին լիովին հաւատս ընծայել այնմիկ Թէ ձիբրեւ 'նորա գնացին, անհոմանք 'ի զօրականացն եկին 'ի բաղարն և պատմեցին քահանայապետիցն զամենայն զոր ինչ եղեւ. և նորա ժողովեալ հանդերձ ծերօքն խորհուրդ

Է. Իսկ 'ի լուսանալ առաւօտուն, բաց եւ պարապ գտանելով ժողովրդեանն և ամբօխին զգերեզմանն, վաղվաղակի հուշակ հանին, և ամենուրեք յաշխարհին զլուր տարածանէին թէ Դատաւորն գերազոյն առաքեալ էր զհրեշտակ իւր և զՍրբոյն մարմինն մահկանացու յարուցեալ, յորում բնակեալ էր մասն հոգւոյն Աստուծոյ յերեսս երկրի.

Ը. Յորժամ զրոյցս այս եհաս 'ի գիտութիւն Պիղատոսի, տագնապեցաւ նա յոյժ՝ մեծաւ տաղնապանօք, և իսկոյն արգելանս եղ և հրամայեաց զանուն Իսաի երբէք չարտասանել և չ'կոչել, և աղօթս ոչ մատուցանել առ Աստուած վասն նորա, պատիժ մահու և գերութեան սպառնալով.

Թ. Ժողովուրդն ամենայն սակայն ողբայր և փառաւորէր մեծաձայն զՏէրն իւրեանց, վասն որոյ բազումք եղեն որք տարան 'ի գերութիւն և ընդ չարչարանօք արկան և մահուամբ կորան.

Ժ. Ապա աշակերտացն սրբոյն Իսաի՝ թողեալ զերկիրն Իսրաէլացուց, չոգան իւրաքանչիւրն յեր-

առեալ՝ արձաթ յոյժ ետուն զօրականացն և ասեն. աստցիր ԼԹէ աշապերտացն 'նորա եկեալ 'ի գիշերայն գողացան զնա մինչ մեր 'ի բունէ քաղ և ԵԹէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեր հաճեցուք զնա և զձեզ անհոգս արասցուք, և նոցա առեալ զարձաթն՝ արարին որպէս ուսանն, և ել համբաւս այս 'ի Հրէից մինչեւ ցայսօր (28 Մատթ. 11 9 15).

կիրս զանազանս հեթանոսաց չորից կողմանց տա-
րածանել և քարոզել նոցա զմեղս թօթափել և
զմեծ մոլորութիւնս նոցա, և ուշադիր լինիլ փրկ-
կութեան հոգւոյ, որով ստասցեն զվիճակ օրհ-
նութեան և զերանութիւն կատարեալ, որ վասն
մարդկան 'ի Տեառնէ Աստուծոյ հանդերձեալ էր
յաննիւթական աշխարհին, որ էր լի լուսաւորու-
թեամբ, յորում գտանի և բնակի Արարիչն մեծ,
և անդ կեայ և մնայ յաւիտեան 'ի լրութիւն
սրբութեան իւրոյ, և անդ հանգչի յիւրումն վե-
հապանծ կատարելութեան (*).

ԺԱ. Եւ հեթանոսքն ամենեքեան և թագաւորք
նոցա և ամենայն զօրականք նոցին ունկն գնէին
և լսէին բանիցն քարոզութեանց նոցա, և զայլա-
զան զառեղծուածային հաւատս իւրեանց լքա-

(*) Զի'ք ինչ տարակոյս Թէ այս ակնարկ վերաբերի գործոց ա-
ռաքելոց առ ազինս ամենեսեան և առ ազգս մերձաւորս և հեռաւորս
աշխարհին, զործք որք 'ի ժամանակի այնմիկ ընդ ակոմբ չկարէին
կալ մնալ, յաղագս այնորիկ՝ զի արդիւնք մեծամեծք կատարէին նո-
քօք ձեռօք նորոգ կրօնային բարեբարոյ վարդապետութեամբն անպիսի
սկզբանց, յորում, սէր հաւասար ընդ ամենայն արարածս և ընդ ամենայն
ընկերս նմանիս քարոզէր ամենեցուն հաւասար՝ զթուժեամբ և ներողա-
մտութեամբ 'ի մէջ ժողովրդոց այնպիսեաց և ազգաց այնպիսեաց, որոց
հաւատք և խոստովանութիւնք կրօնային 'ի վերայ անսգորոյն անգթու-
թեան Աստուծոյ իւրեանց և 'ի վերայ վրէժխնդրութեան էին հիմնեալ,
և ո'չ 'ի վերայ ողորմութեան, անյիշալարութեան, և անբաւ անսահման
զթութեան Տեառն Աստուծոյ, արժանանալով քաւութեան և ներման
ճշմարիտ կատարեալ զգլմամբ և 'ի ճանապարհ ուղիղ դարձիւ:

նէին, զքուրմս և զկուռս իւրեանց՝ վտարէին, որ-
պէս զի յայնմհետէ փառաւորեսցեն և գովեսցեն
զԱրարիչն մեծ Տիեզերաց զԱմենիմաստունն, զԹա-
գաւորն թագաւորաց, որոյ 'ի ծոց և 'ի սիրտ, լի
է ողորմութիւն և գթութիւն անսահման և անբաւ-
յաւիտեանս, յաւիտենից, ամէն.

Թէ մերկայոյլ՝ երկնային կամարին մէջ օդապարիկներ օդային յանդուգն ուղեւորութեան նախափորձերուն տակաւին չէին ձեռնարկած, այն ատեններն երբ խոր անտառներու մէջ գողցես աքսորուած՝ այծամարդոց գարշապարներն կակղիկ մամուռին վրայ ուրախ զուարթ կը կոխկռտէին բոպիկ բոպիկ, և երկչոտ տղու յաւերժհասունքցամաքին՝ վայրի ձարխոտներուն ետեւէն գաղտնագողի տենչանօք կը դիտէին ակնդէտ այր արարածին ճամբան խոտորած սիրուհւոյն կնիւնապատ հողիէն քաղած հառաչանքներուն ետեւէն հեապնդելը. Մաեօյիմայի գեղածիլ կեռասենեաց ծաղկապարոյր արեգասայր գողտրիկ գիւղը շողշողուն մահիկի ձեւով շափեղադոյն ծովուն վերելը տարածուած կը կենար խրոխտ, անոր ծովընդգիրկ հիանալի սարաւանդներուն դէմ կը փշրուէին կը խորտակուէին ծովուն ահաւելի կապուտակ ալիքներն, որոնք վերստին դէպ 'ի ծով կ'արշաւէին այս անգամ փալիլուն փրփուրներով ժապաւինաւորուած, ու կը դիմաւորէին՝ խայտանօք ուրիշ դէպ իրենց ճամբայ ելած սուրացող ալիքներն, որոնց հետ միանալով անոնք՝ նորոգ սիրտ առած՝ դէպ 'ի լայնածաւալ Ովկէան կ'արշաւէին գլուխնին մէյմէկ սպիտակ բրդէ գլխանոց անցուցած, ու ընդդիմակաց ցասկոտ խոժոռադէմ կարծր ժայռերուն հետ մարտնչելու համար վերս-

տին կը դառնային հոն չչելով շաչելով, ահա այդպիսի ահադնադղորդ սպիտակ շրջանակի մը մէջ շրջապատուած կը պանծար այդ զմայլելի գիւղը պարունակող կղզեակը, այն կողմէն միայն բաց ու խաղաղ՝ սւր զոյգ մը գողտրիկ բլրակներ հայելանման ջրանցք մը կը հսկէին կարծես պահակի նման, որուն մէջ արծաթահիւս և ոսկեհիւս առագաստներով պճնուած զբօսանաւերու և մետաքսահիւս ուռկաններով բեռնաւորուած ձկնորսանաւերու խայտաբղետ տորմիկներ խարսխած էին, խոյր աչուկներով կայտառ ձկներ չորս կողմերնին, և վերեւին բազմածայր շառագոյն անթիւ անհամար աստղեր, անծայրածիր զառիվերի մը առջեւ, որ դէպ 'ի վեր ինչուան գիւղին դուռը կը սողոսկար, և ամեն կողմ ձկնորսորդ ճայեր լայն լայն թռիչնին բացած կը սուրային դէպ 'ի սրնգահիւս ցցուած ծառերու վրայ թառելու հանգչելու, եւ ասոնց ամենուն մէջ սիւնաբարձ բարձրաբերձ կարմրագոյն տաճար մը պսակի նման.

Հո'ն ամեն տարի՝ տարին անգամ մը, ամրան կանաչները ոսկեգոյն ու կարմրուկ շագանակադոյնը առնել սկսելուն պէս, ծաղկասփիւռ ոլորապտոյտ պողոտաներուն մէջէն զուարթ բազմութիւն մը պարելով ու այլազան խրախ երգեր երգելով կը յառաջանար, կարգաւ կուգային անոնք իրենց իւրաքանչիւրամեայ նուէրները մատուցտնե-

լու հատուցանելու իրենց պաշտպան աստուածոց, որոնք հոն մերձակայ փրփրակոս Ովկէանին վրայ իրենց հոյակապ կառքերն ու խիզախ երիվարները կը վարէին, խարտիչազեղ կուսանք իրենց ծիծաղկուն աչուկներով ու սիւքերերուն խոպոպիկներովը, կորովի երիտասարդներ արեգակէն թխադէմ դարձած, և խարտիչահեր մանկունք ուսերնուն վրայ թառած բարձր, իւրաքանչիւրին ափը նուէր մը, ծաղկեփունջ մը կամ միգեղինաց սակառ մը կամ սպիտակ բուրդի բերանաբաց հակ մը կամ դեղնորակ ցորենի կողով մը, որոնց ամենքը գիւղին կողքը հասնելուն պէս՝ անոր ստորոտը փրփրացող ալիքներուն վրայ կը թափէին կընետէին, և այն սպիտակ փրփուրներն թալկագոյն փրնձողիով և շառագոյն գինիով կը դունաւորէին, այս արարողութիւնը կատարել լմնցնելուն պէս, այդ լայնածաւալ բազմութիւնը հզօր բացագանչ աղաղակներ կը բարձրացնէր իրենց կործուռ փողերու աղու նուագներուն հետ միացած, որոնք հեռուները կրկնակ արձագանգներ կը զարթուցանէին, և ժայռէ ժայռ անցնելով կը ժամանէին կը վերջանային անոնք ամպերու մէջ փաթտուած պլլուած խաւարաստուեր անծայրածիր բարձանց շղթաներուն մէջ:

Այս արարողութեան միջոցին՝ մէկը պէտք էր սակայն որ բլուրներուն բոլորտիքը բրդազգեստ

երամակներուն պահպանութիւնը ու հսկողութիւնը կատարէր վտիտկող վայրի գաղանաց դէմ՝ այդ տօնական հանդէսին օրը, այնպէս սահմանուեցաւ որ Եամաչիւրոյան ըլլայ այն, որուն կորովի բազուկներուն պնդակազմ ջիղերը մինչեւ իր կարծրասիւն կոկորդը հիւսկէն կապուած չուաններու նման յայտուն կանգուն կ'երեւնային. ծերացեալ բազմամեայ կաղնիի մը ստորոտը նետուեցաւ փռուեցաւ նա, ու սկսաւ յուշիկ յուշիկ ժայռերուն տակէն անհետացող երեկոյեան ստուերները դիտեալ ու հոգեւաբար միջօրէին նուազկոտ լոյսին դէպ 'ի արեւելք փախուստ տալը նշմարել: Միտքն իշնալով յանկարծ հօրմէն առաւօտուն բաժնուելու մեկներու ատեն, ձմրան պաշարի համար իրենց մեկներու ատեն, ձմրան պաշարի համար իրենց փայտի տաշեղ կտրել բերելու ապսպրանքը, բաշեց հանեց կացինը իր մօրթ պատեանէն ու զայն սկսաւ բարձրէն ճօճանակելու, բայց, ո՛վ հրաշք, ո՛վ զարմանք, հարուածը չ'իջուցած ծառին առաջը մարմնոյ երազակերպ կերպարանք մը տեսաւ կանգուն անձայն անշուկ, և երեկոյեան մթնշաղի ատեն ճահիճներու ճախճախուտներու վրայ տատանող սողոսկող անշուշափելի մէգի նման անէական, իսկ անոր շլմորած աչուկներուն հետ անէական, որոշակի ձև առնելովը վերջապէս տեսաւ զհետէ որոշակի ձև առնելովը վերջապէս տեսաւ նա դիմացը որ սիրուն կոյս մը կանգնած էր իր աչաց առջեւ, աչքերը հեռաւոր լեռներու բար-

ձանց վերջին երկար շարքին վրայի կապոյտ գոյնէն աւելի թուի կապուտ, երկար ճոխ մազերը կաղնիի կեղեւի գոյն, որոնք կ'իջնային մինչեւ թաւիչ մամռին մէջ բոյն դրած կաթնագոյն մարգրտի նման գողտրիկ մանտրտիկ քնքուշ ոտքերն 'ի վար՝ ոլոր մոլոր:

Նէ վեր առնելով խոռոչաբղէտ թեւերուն մէկը, գոչեց այսպէս «Կեցիր, կանգ առ, ի՞նչ քրած եմ ես քեզ որ եկեր զիս կեանքէս զրաւելու ելեր ես այսպէս, անուշ և զով են այն զեփիւռները որով իմ տերեւներս գիշեր ցորեկ կը սըրսփան ու կը փրփրան, և երբ ես էն վերի ճիւղերուս ոստերէն կը դիտեմ այն արծաթագոյն մոգական գաւազանը որ կը կարապետէ կ'աւետէ վարդագոյն արշալոյսը, երբ իմ ծոցս՝ գիրկս ժուռ եկող սիրահար սոխակներն իրենց դալայլիկներով սիրամուր հոգիներնուն գեղգեղանքը այն աստիճան դուրս կուտան, որով ամբողջ անտառները կը սրսփան ու կը թոթուրուն սիրոյ հրայրքով, անուշ կ'անցնի ցորեկը, և գիշերը ալ աւելի խիստ անուշ կուգայ»:

Ներսէս ձայնը լերանց մէջ սողոսկացող առուակներուն մէջէն ելնող խորհրդաւոր ձայնին կը նմանէր, զոր ամէն ոք թէեւ կրնար լսել, բայց ամէն ոք այն լեզուն չէր հասկնար, և քիչեր կը գտնուին որ լիովին գիտէին հասկնալ զայն, և

անոնք այն քիչերն, զայն միանգամ լսելուն ու ճիշդ ու ճշգրիտ իմանալուն պէս, պարտին իրենց բնկերներէն՝ մարդոցմէն հեռանալ մեկուսանալ, հոգիներն շղթայուած պինդ կապուած ան խորհրդաւոր ձայնին տիրոջ, առանց իսկ միանգամ բաղձալու զիրենք այդ շղթայէն փրկելու յաւիտեան. երբ Եամաշիրոյաին այսպէս հմայուած ականջներն այդ ձայնը լսեցին, անոր առաջին թմբեցուցիչ սարսափը սահեցաւ մեկնեցաւ իրմէն. և սրտապինդ ու համարձակ այսպէս խօսեցաւ. «Դիցուհի ե՞ս դու թէ յաւերժահարս սիրասուն»:

Գոչեց նա. «զի երկրագունդիս մէջ բնակող արարածի մը վրայ քու այդ հրաշալի գեղեցկութեանդ հետ բաղդատելի ո՛չ ոք կը գտնուի, 'ի վերայ այսր ամենայնի չե՞մի որ իմ մարմնոյ աչօքս կը տեսնեմ կոր ես այդ կարմրուկ կաթիլներու մակընթացութիւնը, որ այց կուտայ քու կաթնագոյն այտերուդ, և չրթունքդ կը ներկէ մորենիներու կարմիրներէն աւելի կարմիր, երբ երկրագունդն ձեան բրդեղէն սպիտակ սաւանոյլ խիտ խիտ ծածկուած է, ըսէ՛, խօսէ՛ ինձ, ո՞վ ես դու և ուսկի՞ց կուգաս դու այս վերջնարեգնահամբոյր օդին պարապութեան մէջէն»:

«Ճօ—Շինչին եմ ես» կը պատասխանէ նէ. «Այս անտառին շահապետուհին, գեղեցիկ է իմ տերեւախիտ արքայութիւնս, և այս ծեր ծառը իմ

յատուկ ծառս է, ցորքան այն կը ծլի կը ծաղկի, կ'ապրիմ ես, իսկ դու եթէ զայն վերաւորես, աւոր ցաւերը իմ կակղիկ մարմինս պիտի կրէ և զգայ, եթէ դու կտրես լմնցնես զայն, ես ալ նոյն վայրկենին մեռած եմ»։ Եամաշիրոյան ասոր վրայ գնէ իր շագանակագոյն կորովի բազուկներուն մէջ ընդգրկելով գոչեց. «Մի երկնչիր դու, ամենագեղը՝ ի կուսանս, դու որ նախակարապետ վայրի վարդէն ալ գեղեցիկ ես, որ ծաղկապատիկ խիտ խիտ իր թերթիկները լայն լայն սփռելով՝ առաւօտեան նորածագ լոյսին ցոյց կուտայ իր մէջ գանձուած ցոյղի կաթիլներն, ո՛հ ի խորքուն ննջող հոգւոյս երազը, ալ հիմայ հոգիս կը զարթնու ի կենդանութիւն, ո՛հ աչացս լոյսը, աչացս, որոնք տակաւին չգիտէին թէ կոյր էին անոնք, հիմայ» ըսաւ նա «ձեռուրները օգին մէջ ծածանելով այս գաղջուկ տաքուկ հիւթը զոր կ'ըմպեմ ես, այս՝ օգն է այն, բայց, օգ մը որ փրփրուն գինիներէն աւելի հզօր կը վառէ արիւնս և այս գոճալմագոյն կապուտ ամպհովանին որ գլխուս վերելը կը հովանաւորէ կը պարփակէ զիս, երկինքն է այն, և այս ծայրհայեցիկ զմրուխտները քու կաղնիիդ տերեւնե՞րն են միթէ, ո՛հ զանոնք չըլլայ որ արասորես, ու զիս ալ վերստին խաւարին մատնես. քու արեւդ տեսնելէս յետոյ, հազարապատիկ աւելի խաւար, ո՛հ առանց քեզի աշխարհ ինձ ալ

պարապ հովիտ պիտի դառնայ. ես կը սիրեմ քեզ, ձօ-Շինչի, քեզ կը սիրեմ սիրով մը զոր ո՛չ մէկ մարդկային արարած մահկանացու զգացած է կոյս արարածի մը հանդէպ»։ այսպէս խօսելով լռեց նա։

Խոր հառաչ մը արձակեց կոյսը յոյժ մեղմիկ, այնպիսի մէկու մը նման որ անուշ երազէ մը ցաւելով կ'արթննայ, կը մօտենայ նէ անոր քովիկն ու թեւերը բոլորելով գօտի կ'ընէ անոր վզին, «Սրտիս անուշիկ սէրը, ինձ համար քեզի հետ կենակցիլը թէեւ անհնար պիտի ըլլայ», կ'ըսէր անոր նէ, «բայց միտ դիր ինձ, երբ ես կարօտնամ քեզ, պատուիրակ մը պիտի ղրկեմ ես քեզ, իմ ոսկեգոյն գօտիով մեղուս, անոր մեղմիկ բըզ-զիւնը իմ ձայնս պիտի բերէ քեզ, որ պիտի ըսէ. «Արտօրա՛, շուտ ինձ եկուր, եթէ տակաւին զիս կը սիրես դու, բայց եթէ ալ պաղած ըլլաս դու ինձմէ, ո՛հ ողորմելի սիրտս, թեթեւ թեւաւոր փոքրիկ պատուիրակս մէկգի հրէ, որով ալ պիտի հասկնամ ես որ մահկանացու կոյս մը գրաւած պիտի ըլլայ քու սէրդ»։

«Ո՛հ, ամենանուշիկս», ըսաւ Եամաշիրոյան ինդալով. «այդ օրը ծնող՝ արեգակը չպիտի կըրնայ մադլցիլ թաւուտ անտառներուն վրայ, ո՛չ ալ ան վար պիտի կրնայ իջնալ մարը մոտնելու, ու չքեղօրէն զգեստաւորուած՝ առօր փառօք

հանգչելու երթալ առաջ մէյ մը կանանչ սարերու ճիւղերուն մէջէն աստ անդ նայուելով լուսինն ալ իր նորածին մահիկը աշխարհ բերելէ պիտի դադրի, ու կուսանաց պայծառ ճակատը լուսավառող շողշողուն աստղ մը չպիտի գըտնուի ինձ համար».

Անտառին մէկ խորը, ուր ապառաժէ ապառաժ կախուած արծաթագոյն շղարչ մը կար և ուրկէ պիչ պիչ ցցուող վայրի ձարխոտներուն մէջ կէս մը քողարկուած միգասուն պայծառ ցօղի կաթիլներն շատ ծանրանալով հետզհետէ կը սահէին վար, և որոնց մէջէն արեւմուտքի վերջին ճառագայթները վարդագոյն զմրստախառն շողշողուն հրավառութիւններ կ'արձակէին Ճօ-Շինչի դէմը կը գտնար Եամաչիւրոյան:

Եամաչիւրոյա հեռուէն կը նշմարէր ներա գեղեցիկ փայլուն թեւերը անտառներու մէջ ծածկոցի ծառայութիւն կատարող կատաղի փուշերու հիւսուածոց մէջէն երեւցող սպիտակ ծաղկանց նման՝ ու իր սիրուհւոյն իրեն ցոյց տուած մէկ ճամբէն կը հասնէր կամարակապ վայր մը ուր լոյս մը աղօտ ննջուկ՝ բնակութիւն դրած էր, և անոր քովիկը վարդացող փշրտալող աղբիւր մը, որուն մէջէն արծաթագոյն բանտարկուած օգային ոստոստուն գնդակները վեր վեր կը ցատկէին ու անտառին մէջ փոքրիկ աստղիկներ կ'ըլլային ա-

նոնք, հոն երփներանգ ստուերին մէջ ամենահեշտ մամուռներու կակղիկ փսիաթին վրայ կը սըփռէին կը հանգչէին անոնք իրենց մարմինը, մինչ գլխնուն վերեւ թեթեւ փետրաւոր խմբերգութիւնները թռթռուն կոկորդիկներէն քաղցր նուագներ կը թռթափէին կը թռթոփէին անոնց համար.

Ամառն ամբողջ այսպէս անցաւ հատիկ հատիկ իր ոսկի համրիչը իրարու անցած յակաթի սեւ շղթայէն գլտորելով անցնելով, ու Եամաչիւրոյա այսպէս մահկանացւոց, իր նմանեաց երեսն անգամ նայիլ չէր ուզէր.

Հասաւ ապա աշունն, ու անտառներուն վրայ ոսկեգոյն վարագոյր մը սփռեց, և գիշերին մէկը մոլեգին մրրիկ մը ելնելով սպառսպուռ շառաչող հեւացող ոստերու ճիւղերուն ականջ չկախելով անոնց վրայ դիզուած այն գանձերն զարկաւ նետեց հովերուն առջեւ թափառական, ու բոցավառ իրիկնամուտ մ'ալ տեսնուեցաւ որ անտառներուն ալ քաղքայուած մերկացած ծառերը իրենց մերկ այդ քաղքայուած մերկացած ծառերը իրենց մերկ անդամները աստ անդ կը տարուբերէին անդօր անկար յուսահատութեան մատնուած.

Հուսկ յետոյ աշունն ալ այսպէս իր վերջին հառաչը արձակեց, ու երեսը մէգով քողարկելով ծածկելով գետինն ալ կարմրուկ ու մոխրագոյն չորցած տերեւներու վերաբկուն տակ խորունկ ծածկուած ճամբան կը շարունակէր, և ահա

ա՛լ հաշու աշխան թալկադէմ քոյրը հիւսիսէն սառուցեալ, հիւղակներուն ու փեղկերուն խողովակներէն պաղ սառոյցի յուրտ սառաշեղջեր կախեց ու պատուհաններուն ապակիներուն վրայ ձարխտտի ճիւղերու և ոստերու նմանութեամբ սառոյցի նկարներ նկարեց.

Բլուրներուն մէջէն լեռանց բարձունքներն 'ի վեր աւելող սուրբ հողերը շատ յուրտ էին, Եամաշիրոյաի խորթին մէջ ամէն ճեղքէ ամէն կղզանքի ծակէ սուր սուր երգեր կ'երգէին անոնք, և ծխներոյ զին ստուար բամբ ձայներգութեան հետ եռաձայն սրինգ մը կը յորինէին, ձորերէն ալ թաւալգլոր փրփրադէղ հեղեղներու ողորմներուն խուպոտ մունչիւնը կը լսուէր թաղծոտ.

Եամաշիրոյան ու իր մէկ վաղեմի դպրոցական ընկերը վառուած փայտի հանգստաւէտ փայլին մէջ նստած էին, ու մէջտեղերնին սեղանի մը վրայ քառակուսի աղիւսակադիծ տախտակ մը դրուած էր որուն վրայ կ'գրօսնուին անոնք տասներկու զուգահեռական գիծերու բախտովի խաղով. Եամաշիրոյաի դպրոցական ընկերը երեք անգամ յաղթական տարած էր, հիմայ կարգը իրեն եկած էր վերստին շարժ մը ընելու, տապելուղուկը վարելու միջոցին Եամաշիրոյա ականջներուն քով մեղմիկ բղղիւն մը իմացաւ, ու շտապաւ ցասկոտ հարուած մը տուաւ դէպի այդ կողմը օդին մէջ, բայց

բղղիւնը վերստին մօտեցաւ իր քով, Եամաշիրոյա խելքը միտքը խաղէն գրաւուած չ'կրցաւ յիշել ձօնինչին պատուիրակը, գետին զգեստեց խեղճ փորիկ մեղուն, որ հոն տախտակամածին վրայ ինկաւ ու ջախջախուած մնաց, ինք ալ իր դպրոցական ընկերոջ խորամանկ խաղէն զայրացած, ձանձրանալով սրգողած դնայ պառկեցաւ իր մորթապատ անկողինը.

Յոյժ հեծկտուն անցաւ այն գիշերն 'ի բուն մինչեւ այն սեաւ ժամը, ագռաւներու այն տխուր ժամը, որ կը թռի կ'երթայ արշալոյս տակաւին աշխարհը չ'ժամանած, այն սեւ ժամը երբ կենաց զօրեղ երակներ կը սուաղին կը նուաղին ու հիւանդներ կը չուեն անդէն. աղմուկ մը լսուեցաւ ան տոնն որ կարծես բոլոր խաւար աշխարհ կը լնուր իրմով, փոքրիկ ծիծաղկոտ աստղերու շառագոյն լոյսին մէջ. Եամաշիրոյան ա՛լ հիմա վեր յատկեց անուշ երազէ մը արթննալով՝ ու իր սիրուն ձօնինչին դէմը կանգնած տեսաւ, ներա աչուկները արտասրաթոր՝ փոքրիկ թաւշաղգեստ պատուիրակը երկնցուցած ձեռքին մէջ, անոր դիւրաբեկ թեւերը բոլորովին ջախջախուած, մեռած մեղուն էր ու հոն ներա ափին մէջ կը պառկէր անկենդան.

Սրտի բարախման տեւողութեան մը չափ կեցաւ ձօնինչի, յետոյ անհետացաւ նէ գիշերուան աղջամուղջին մէջ, Եամաշիրոյա անկէ ետքը ա՛լ

անդամ մ'ալ չկրցաւ տեսնել սիրունին. թէեւ խորհրդաւոր փսրտացող գետերուն քովէն ու տերեւախիտ հովիտներու մէջէն դողդոջ քայլերով յար անդադար կը քալէին անոր ոտքերը ու միշտ զնէ կը փնտռէին.


Ձեփիւռփշուն կապուտակ զանգակածաղիկներ լճակներու քով ներա աշուկները կը յիշեցնէին անոր, ծաղկեալ պղպեղի ծիրանեգոյն հունտեր ու թմբահմայուն խաչխաչներ ներա շրթունքը կարծես կը ներկայացնէին անոր, արեւուն շողշողուն ճաճանչներն պտտկելով ուռկանահիւս ոստայններուն ստուերներուն մէջ և սալիտակ ու կաթնագոյն խճաքարերու վրայ ներա փոխփոխիկ ժպիտներն կը նկարէին.

«Ոհ, Եամաչիրոյա, Եամաչիրոյա» կը հառաչէին հասկի ծուլերն ամէն մէկ շարժմունքի.

«Ոհ, Եամաչիրոյա, Եամաչիրոյա» կը հառաչէին ծովափին դէմ խորտակուող ալիքներուն ամէն մէկը իրենց խորերէն.

Եւ հեռուէն Ովկեանէն ժամանող քաղցր սիւք մը անոր շուրթը կը համրուրէր թէեւ, բայց Ճօ-Շինչին ինքը ալ մէյ մ'ալ չ'երեւաց անոր յաւիտեան, զի այդ մարմնով կենդանեալ ա'լ անկարելի էր իրեն. եւ Եամաչիրոյա ա'լ գիշեր ցորեկ կ'անիծէր բախտովի այն խաղը, և իր մահկանացու վերջին շունչը աւանդած վայրկեանին ան իր թա-

լուկ շրթունքները փակեց անէծք կարդալով բախտովիխաղամոլներու դէմ, և այդ օրէն Նիփփօն լայնածաւալ գեղանկար կղզին յաւիտեան մերժեց և ամենախիստ արգելանքի ենթարկեց քսակի և սիրոյ աւերիչ կործանարար խաղերը, ո'ւր ցայսօր և 'ի սպառ մէկ ունի (չորս փարանոցի) դէմ իսկ խաղցող եթէ գտնուի ծանր պատժով կը պատժուի 'ի յիշատակ Ճօ-Շինչիի ու Եամաչիրոյաի.



ՑԱՆԿ ՀԱՏՈՒԱԾՈՑ

Մեկնութիւն խորհրդանիշ Սրբոյ Գառնուկին
I Համառօտ ինքնակենսագրութիւն թարգ-
մանչին.

ա Յառաջարան

Ա. Յաղագս գործոց Մօսայի և Ելից Իսրաէ-
լացւոց յեգիպտոսէ.

Բ. Յաղագս Մեծի փառաց Իսրաէլացւոց, և
ապա վերստին 'ի գերութիւն անկանելոյ նոցա
ընդ Կեսարաւ մեծաւ Հռոմայեցւոց Կայսեր.

Գ. Յաղագս Ծննդեան Իսաի, և ուղեւորու-
թեան ձեռնարկի նորա առ Հնդիկս.

Դ. Յաղագս գպրական ուսանողութեան Իսաի,
և սկզբնաւորութեան աւետարանական բարոյզու-
թեանց նորա.

Ե. Յաղագս մեկնելոյ Իսաի 'ի ճակըրնաթէ
գէպ առ հովիտն Ռաճբութանայ, և ժամանման
նորա յերկիրն Կուատամիտայ և գնալոյ նորա
յայնկոյս յԱրեւմուտս.

Զ. Յաղագս յարատեւ քարոյզութեանց Իսաի
և հակաճառական բանից նորա.

Է. Յաղագս մտից նորա առ Պարսս և նեն-
գաբար արտաքսելոյն 'ի նոցանէ.

Ը. Յաղագոս վերադարձի Իսաի յերկիրն Իս-
րաէլացւոց 'ի հայրենիս իւր.

Թ. Յաղագոս շարունակ քարոզութեանց սրբ-
տապնգականաց Իսաի յերկիրն Իսրաէլացւոց. և
Մտից և Գալստեան Նորա յերուսաղէմ:

Ժ. Յաղագոս բարեխօսութեան քահանայապե-
տից զԻսաէ առ Պիղատոս և յարատեւ բանից և
քարոզութեանց Նորա առ Իսրաէլացիս.

ԺԱ. — Յաղագոս խաբկանօք 'ի նանիր փոր-
ձելոյ Իսաի 'ի ծառայիցն Պիղատոսի, և յաղագոս
բանից Նորա զկանայս պատուելոյ և յարգելոյ.

ԺԲ. Յաղագոս բանտարկութեան Իսաի և յա-
ղագոս դատաստանի և չարչարանաց Նորա.

ԺԳ. Յաղագոս խաչելութեան և զաղէտալի
վախճանէ Սրբոյն Իսաի ըստ վաճառորդաց ուղե-
ւորաց յայնմ պահու կարաւանօք յեգիպտոսէ
Ժամանելոց, և լրաբերութեանց նոյա յերկրէն Իս-
րաէլացւոց.

ԺԴ. Յաղագոս թաղման և յարութեան Իսաի,
և գործոց յարատեւականաց աշակերտաց Նորա.

Թիւ 102. Դիտողութիւն

Թիւ 103. Գոհար ճաբօնական սիրերդակ բա-
րոյանուէր արձակ բանաստեղծութեան. Ճօ-Շինչի
և Նամաշիրօյա.

ՅԱՆԿ ՎՐԻՊԱԿԱՑ

ՎՐԻՊԱԿԻՔ

ՈՒՂԻՂԻՔ

աղգաց (Ա. Երես վերջին տող)		աղգաց ընդհանուր
II. ընդհանուրս	տող 2	ընդհանրօք
III. վերայիշելոց	» 15	վերոյիշելոց
VI. այդմիկ բաղում	» 7	այժմիկ բաղումք
» Հայերէնիւ	» 21	Հայերէնիւ և Թրքե- րէնիւ
Ա. Աւետարանական	» 4	աւետարանական
Բ. գիտողութեանս	» 19	գիտողութիւնս
» ճշդիւ լնուլ և լու-		լուսաբանել և ճշդիւ
սաբանել	» 24-25	լնուլ
» վերջաւորեալ ըստ	» 29	վերջաւորեալ այն ըստ
Գ. և նա	» 6	և թէ՛ Նա
» ճշգրտապէս լնուլ և		լուսաբանել և ճշգր- տապէս լնուլ
լուսաբանել	» 11-12	պէս լնուլ
» զԱնդղիական խօսին		ընդ ամենայն երկիր
ընդ ամենայն երկիր	» 22	զԱնդղիական խօսին
» կարիին	» 26	կարի ինն
Դ. նախնի	» 1	(նախնին ջնջելի)
» պատկեր Իսաի սկսնակ	» 6	տալ զպատկեր Իսաի սկսնական
» գետին Յորդանանու	» 10	գետ Յորդանան

ՎՐԻՊԱԿՔ

ՈՒՂԻՂՔ

Դ . մեռեալ ծով	տող 16	Մեռեալ ծով
» 'ի նոցանէ ստանձնելով »	18	ստանձնելով 'ի նո- ցանէ
» զոր օրինակ , ամուրի կենօք	» 25	ամուրի կենօք , զոր օրինակ
» հարկ է	» 27	հարկ է աստ
Ե . զազդումն	» 30	զազդումն վերնային
Զ . զխոստումն	» 1	Զխոստումն
» Զերդումն	» 2	զերդումն
» նոքա համարէին	» 6	համարէին նոքա
» զոչ	» »	ոչ
» եթէ անհրաժեշտ	» 12	եթէ երբէք անհրա- ժեշտ
» պատասպարելոյ 'ի ցըր- տառութենէ	» 13	'ի ցրտառութենէ պա- տասպարման
» Գերորդ էջին ստորակէտէն առեալ մինչեւ 13երորդ էջին ստորակէտը 15երորդ էջին կէտին առջեւ փո- խադրելի .		
» սկզբանց	էջ 22	սկզբանցն
Ը . 'ի կողմանս	» 22	'ի կողմանս
» զի՛ տեսանես եւն . եւն . , պէտք է ըլլայ . « Զի՛ տեսա- նես զչիւղ ական եղբոր քո , եւ զգերան ականդ ո՛չ տեսանես , հան նախ զգերանդ յականէ քումմէ եւ ապա հան զչիւղ ական եղբոր քո » .		
էջ	տող	
25 երախոյ	24	երախայ
27 ընդ զխարաշլացւոց	9	ընդ իւր զխարաշլացւոց
28 ենթարկել	9	ենթարկեալ

ՎՐԻՊԱԿՔ

ՈՒՂԻՂՔ

էջ	տող	
32 յայտմանէ	23	յայտմանէ
34 աստուածանոյ	7	աստուածայնոյ
34 ընդ նմա , խառնիլ	8	ընդ նմա խառնիլ
34 Բէթլէհէ	21	Բեթլեհէմ
34 հետաւորութենէ	21	հետաւորութենէ
34 պուտտայականութիւն	25	պուտտայականութեան
35 Մանկունն	1	Մանկանն
36 նորա	17	Նորա
39 տաց	1	տացն
40 նա	21	Նա
40 զարթուցանիս	15	զարթուցանես
40 նա	24	Նա
41 (երրորդութիւն)	17	(զերրորդութիւն)
41 Քրիստոնէական	21	Քրիստոնէականի
42 կենացս	23	կենաց
42 նմա	23	նմա
43 զցամաք երկի .	2	զերկիր ցամաք
44 էն	4	էն
47 նորա	4	Նորա
47 'ի բարձանաց	14	'ի բարձանց
47 խառնիլ	23	խառնիլ
48 վեհապանծին	2	վեհապանծին»
48 արտօնեալ նմա	10	նմա արտօնեալ
49 Հայր	3	հայր
49 ոգւոյ	8	ոգւոց
49 մարդկայնոց	12	մարդկայնոյ
49 պատուհասցեցի	22	պատուհասեցի
49 հեթանոսաց	23	'ի հեթանոսաց

Էջ	ՎՐԻՊԱԿՔ	ՈՒՂԻՂՔ
51	Նա յորում	տող 5-6 յորում Նա
52	Երեւիլ ամենուրեք	12 ամենուրեք Երեւիլ
52	ասելոյն	23 բանին
53	Ջնչեսցէ	21 Ջնչեսցէ
55	ստացեալ	9 ստացեալ
56	Նա	7 Նա
56	մատուցանէին բանից	13 մատուցանէին նոքա բանից
56	ուենկն	13 անդէն
57	Սուրբ	6 սուրբ
58	իսկ	26 իսկ և իսկ
59	հայրն	6 Հայրն
59	ինքնին	13 ինքնովին
59	ընդ	14 միայն
59	որում	15 զորոյ
59	Այնմ	25 այնմ
60	այսպիսի	15 այսպիսեօք
61	և 'ի նինջ հանգչէր ամենեքին	և ամենեքին 'ի նինջ հանգչէին 6
64	զհայրն	19 զՀայրն
64	ոսոխայն	21 ոսոխացն
66	հանապազօրէն յաւիտենից	հանապազօրէն էն յաւիտենից 2
69	բազումք	15 բազում
70	հայցեն մեծաւ դողաս	20 մեծաւ դողացեն
71	պարտ	5 արժան
72	հաստատել վասն որոյ	15 վասն որոյ հաստատել
72	ընդ որ	10 ընդ որով

Էջ	ՎՐԻՊԱԿՔ	ՈՒՂԻՂՔ
76	կադարեալ	5 կատարեալ
78	'ի հոգւոյ	21 'ի հոգւոյ
78	ԽԱՅԿԱՆՈՔ	2 ԽԱՅԿԱՆՈՔ
80	արարածոյ	15 արարածոյ
82	լիովին	22 լիովին
83	սանձէ	7 և սանձէ
86	առիթ	17 կալցեն առիթ
86	կալցեն	18 (կալցեն ջնջելի)
88	Ես	22 «Ես
89	մեծ	6 անչափ
96	զկենդանութիւն երկրային կորուսանելով	զկենդանութիւն երկրային կորուսանելով 10
97	ԳՈՐԾՈՑ	3 ԳՈՐԾՈՑ
102	'ի հատուած	4 'ի հատուած ԺԳ
102	զլուր	10 զլուրս
102	'ի զմեծամեծ	14 զմեծամեծ
110	այս	16 «այս

Թարգմանին զնեղոյամտութիւն հայցէ 'ի բարեսէր ընթերցողաց վասն յաճախողէպ վրիպակաց, որ է առաւել թերեւս արդիւնք իբրեւ առաջին երկ անփորձութեան քան զուցէ առաւել վրիպումն ուշադրութեան տալալովին.



ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՅԱԶՈՐԴԱՐԱՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԵՐԿԵՐ

Առ այժմ

«Մէսիա»ի Անգղիարէնը «մամլոյ տակ»
Երեքլեզուեան՝ Ճարոններէն, Թրքերէն, Հայերէն
քերականութեան «ձեռագիր պատրաստ».
Գերմաներէն վեց հատուածեայ դասընթացք քե-
րականութեան «ձեռագիր պատրաստ».
Ճարոններէն Անգղիարէն քերականութեան «ձեռա-
գիր մասամբ պատրաստ».
Քարլայլի «Հերոսը»էն մաս մը Թրքերէնի Թարգ-
մանութիւն «ձեռագիր մասամբ պատրաստ».
Անգղիական պարզ մէթոտի վրայ կրկնատումար
Հայերէն «ձեռագիր մասամբ պատրաստ».
Անգղիական պարզ մէթոտի վրայ կրկնատումար
անգղիարէն «ձեռագիր մասամբ պատրաստ».
Անգղիական պարզ մէթոտի վրայ կրկնատումար
Թրքերէն «ձեռագիր մասամբ պատրաստ».

12.

U

ՀՀ Ազգային գրադարան



NL0158254

ԳԻՆ ՄԷԿ ՄԷՃԻՏ ԱՐԾԱԹ

7-1